ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ, ԷՄԻԼ ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ, ՀԱՅԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

MINISTRY OF DIASPORA OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF PHILOSOPHY, SOCIOLOGY AND LAW
OF NAS RA

LEVON SHIRINYAN, EMIL ORDUKHANYAN, HAYK SUKIASYAN

GEOPOLITICAL CONTEXT OF THE ARMENIAN GENOCIDE AND EVOLUTION OF THE ARMENIAN QUESTION

YEREVAN
"GITUTYUN" PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2016

ՀՏԴ 94 (479.25)
ԳՄԴ 63.3 (5Հ)
Շ 646

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՈՎ

THIS RESEARCH IS SPONSORED BY THE MINISTRY OF DIASPORA OF THE REPUBLIC OF ARMENIA

Շ 646 Շիրինյան Լ.
Հայոց ցեղասպանության երկրաքաղաքական համատեքստը և հայկական հարցի էվոլյուցիան/ Լևոն Շիրինյան, Էմիլ Օրդուխանյան, Հայկ Սուքիասյան.- Եր.: Գիտություն, 2016.- 135 էջ:

Աշխատանքում ուսումնասիրվում են հայերի ցեղասպանության և հայկական հարցի էվոլյուցիայի հիմնախնդիրները երկրաքաղաքական (աշխարհաքաղաքական) զարգացումների համատեքստում:

Աշխատանքում ինքնուրույն տեսակետների հիման վրա հանգամանորեն վերլուծվում են հայկական հարցի էվոլյուցիայի ելևէջները: Իրատես քաղաքականության հարացույցի և «Եվրոպական համանվագի» շրջանակներում ուսումնասիրվել են բալկանյան պատերազմների շրջադարձը և Դարդանելի ճակատագրական երկրառազմավարական նշանակությունը Հայոց հարցում:

Հայերի ցեղասպանության գործում ուսումնասիրվել են ազգայնականության թուրքական արքետիպը և հայերի ցեղասպանության օսմանական հակամշակույթ-ավանդույթը: Թուրքական ազգայնականության և արքետիպի շրջանակներում հիմնավորվել է թուրքական ինքնության հյուսվածքներում թաքնված հայերի ցեղասպանության թուրքական արքետիպային վարքագիծը:

Վեր է հանվել գերմանական ռազմավարական գործոնի նշանակությունը հայերի ցեղասպանության թուրքական նախատեսումներում: Այս համատեքստում հիմնավորվել է հայոց ցեղասպանության գործում Հայաստանի աշխարհագրության վերաբերյալ Պաուլ Ռոհրբախի գաղափարների և «Միջին Եվրոպայի» գերմանական հայեցակարգի ազդեցությունը թուրք ռազմաքաղաքական վերնախավի գաղափարաբանության վրա:

ՀՏԴ 94 (479.25)
ԳՄԴ 63.3 (5Հ)

ISBN 978-5-8080-1193-9
© Շիրինյան Լ., 2016
© Օրդուխանյան Է., 2016
© Սուքիասյան Հ., 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լևոն Շիրինյան
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԵԼԵՎԷՋՆԵՐԻՑ 6

Իրատես քաղաքականության մեկնակետը
(հարացույցի ընտրությունը) 6

Հայաստանը «Եվրոպական համանվագի» աքցաններում
(համանվագի մոդելը)..... 10

Հայոց հարցի բալկանյան շրջադարձը
(երկրաքաղաքական ակնարկ) 26

Դարդանելի առասպելը կամ ռազմավարական PR-ի
թուրքական «Սև խոռոչը» 37

Եզրակացություն 45

Variations of Evolution of The Armenian Question (Resume) 48

Էմիլ Օրդուխանյան
ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՔԵՏԻՊԸ ԵՎ
ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 52

Հայերի ցեղասպանության կրոնական տեսանկյունը 53

Հայերի ցեղասպանության օսմանական
հակամշակույթ-ավանդույթը 60

Թուրքական ազգայնականության և արքետիպի
փոխառնչությունները 65

Ազգայնականության արքետիպը թուրքական ինքնության
վերահաստատման գործում 76

Եզրակացություն 89

Turkish Archetype of Nationalism and The Armenian Genocide (Resume) 92

Հայկ Սուքիասյան
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՈՒՄՆԵՐՈՒՄ 95

Պաուլ Ռոհրբախը և Հայաստանի աշխարհագրությունը (թուրքական վաթանը և աշխարհագրական դետերմինիզմը) 101

Միջին Եվրոպայի հայեցակարգը և հայոց ցեղասպանության թուրքական նախատեսումները 109

Եզրակացություն 128

German Strategic Factor in Turkish Provisions for The Armenian Genocide (Resume) 132

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԵԼԵՎԷՋՆԵՐԻՑ

Լևոն Շիրինյան

Իրատես քաղաքականության մեկնակետը (հարացույցի ընտրությունը)

Թեկուզև հայոց ցեղասպանությունից անցել է մեկ դար, սակայն այդուհանդերձ նրա իրական բովանդակության բացահայտման հարցը մնում է օդից կախված: Պատճառները տարբեր են: Սակայն նրանց շարքում կա հետազոտության մեթոդաբանության խնդիրը. ինչպես մեզ է թվում այն հասկացողությամբ, որ ճշմարիտ ընտրված մեթոդն է, որ կարող է տանել ճշգրիտ եզրակացությունների: Որպես այդպիսին՝ տվյալ պարագայում հանդես է գալիս քաղաքական իրատեսության շրջանակներում մեկնաբանվող հավասարակշռության տեսությունը:

Երբ Ֆրանսիայի վագրը՝ Ժորժ Կլեմանսոն[1], Վերսալի համաժողովում անմնացորդ կրքոտությամբ պաշտպանելով Ֆրանսիայի շահերը, հակադրվելով ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի խաղաղության համապարփակ ծրագրին և հին աշխարհի վերակառուցման նրա տիտանական ջանքերին, հայտարարում էր, որ ինքը վստահում է Ֆրանսիայի անվտանգության մինչ այդ (Կարդինալ Ռիշելյեից (1585-1642) սկսած.- *Լ. Շիրինյան*) գոյություն ունեցող անվտանգության համակարգին, որը հիմնված է 1) երկրի որոշակի ռազմական ներուժի, 2) ուժերի հավասարակշռության և 3) մյուս երկրների հետ դաշնակցային հարաբերությունների վրա:

Ժ. Կլեմանսոյից թերևս 100 տարի անց էլ դժվար է նոր բան ավելացնել ասվածին, եթե չնկատվի, որ, այդուհանդերձ, ինչպես առանձին պետությունների (երկրների), ժողովուրդների, այնպես էլ համաշխարհային համապարփակ համակարգի (որ տվյալ պարագայում նույնն է), թե աշխարհակարգի էվոլյուցիայի տեսանկյունից երեք գործոնների ներդաշնակ «խաղը» մնում է անփոփոխ, մի վերապահումով, այն է՝ ուժերի հավասարակշռության «անփոփոխ օրենքի» (Ռաֆայել դե Նոգալես) առանցքա-

---

[1] Ժ. Կլեմանսոյի՝ Հայկական հարցի և Հայաստանի հանդեպ վերաբերմունքի մասին տե՛ս ***Վարդանյան Մ.*** Ֆրանսիայի վագրը: *«Հայրենիք»,* 1930, № 3:

յին դերակատարությամբ: Ընդսմին՝ այդ օրենքը «պահանջում է և միշտ պետք է պահանջի նրա բանական նորմերի անխափան կատարում» ոչ միայն կենդանի մատերիայի հանդեպ, այլև նրանում, ինչը վերաբերում է էթնիկական միավորների դրության կայունությանը, որոնց անվանում են, ըստ Նոգալեսի, «քաղաքակիրթ ազգեր» [2]:

Ավելին, համաշխարհային զարգացումը կամ տվյալ պարագայում ճիշտ կլինի ասելը, աշխարհակարգը պտտվում է առաջին հերթին և գլխավորապես հավասարակշռության «անփոփոխ օրենքի» առանցքի շուրջ այն ըմբռնողությամբ, ինչպես այն հասկանում էր XVIII դարասկզբի ֆրանսիացի աստվածաբան, գրող, հոգևորական Ֆրանսուա Ֆենելոն (1651-1715). ուժերի հավասարակշռությունը որպես կրկնվող և փոփոխվող, բայց ոչ ամենևին բացառիկ և մշտական տարր:

Աշխարհակարգի զարգացման տրամաբանությանը «քաջածանոթ» Հենրի Ա. Քիսինջերը, անկասկած, իրավունք ուներ գրելու. «XVII դարում՝ Կարդինալ Ռիշելիեյի օրոք, Ֆրանսիան դրեց միջազգային հարաբերությունների հանդեպ ժամանակակից մոտեցման սկիզբը, որի հիմքում ընկած էր ազգ-պետությունը և որը պատճառաբանված էր ազգային շահով որպես նրա վերջնական նպատակ: XVIII դարում Մեծ Բրիտանիան մշակեց ուժերի հաշվեկշռի պատկերացումը, որը եվրոպական դիվանագիտության մեջ գերիշխեց երկու հարյուր տարվա ընթացքում: XIX դարում Մետերնիխի Ավստրիան վերակառուցեց «Եվրոպական համանվագը», իսկ Գերմանիան Բիսմարկի շրջանում դեմոնստաժի ենթարկեց նրան՝ եվրոպական դիվանագիտությունը վերածելով ուժային քաղաքականությունների սառնարյուն խաղի»[3]:

«Յուրաքանչյուր հարյուրամյակում, - գրում է Հ. Քիսինջերը, ցույց տալով հավասարակշռության և փոփոխելիության տեկտոնական շարժի տրամաբանությունը, - կարծես հետևելով բնական ինչ-որ օրենքի, հայտնվում է որևէ երկիր՝ օժտված հզորությամբ, կամքով, ինչպես նաև մտավոր ու բարոյական ազդակներով, որոնք անհրաժեշտ են միջազգային

---

[2] **Ногалес Рафаэль де Мендес**. Четыре года под полумесяцем. Пер. с исп. М., 2006, с. 345.

[3] Տե՛ս **Баталов Э.** Мировое развитие и мировой порядок: анализ современных американских концепций. М., 2005, с. 58.

հարաբերությունները համապատասխանեցնելու սեփական արժեքներին»[4]:

Ինտրիգան, ակնհայտ է, տեղավորված է հավասարակշռության «անփոփոխ օրենքի» ընդերքում և «բնական ինչ-որ օրենքը» հենց նույն հավասարակշռության օրենքն է: Եվ այս մասին աշխարհում երևի թե առաջինը գիտի Հարվարդում 1957-ին մագիստրական չգերազանցված ուսումնասիրություն գրած Հենրի Ա. Քիսինջերը[5]:

Սակայն ինչը, այդուհանդերձ, չի ասում (իբրև թե) Հ. Քիսինջերը, «կանոնական» կատարելությամբ շարադրում է գերմանացի իրավագետ Լասա Ֆրենսիս Լոուրենս Օպենհեյմը, երբ անդրադառնում է հավասարակշռության «անփոփոխ օրենքին» և նրա առանցքի շուրջ առաջացած հաշվեկշռի գործառույթին: Լ. Օպենհեյմը պարզաբանում է. «Ազգերի օրենքը (կարդա՝ միջազգային իրավունքը՝ Լ. Շիրինյան) կարող է գոյություն ունենալ, եթե միայն Ազգերի Ընտանիքի (կարդա՝ միջազգային հանրույթի՝ Լ. Շիրինյան) անդամների միջև գոյություն ունի հավասարակշռություն, ուժերի հաշվեկշիռ [բալանս]: Եթե Տերությունները չեն կարողանում զսպել մեկը մյուսին, օրենքի յուրաքանչյուր կանոն չի ունենալու ուժ, քանզի գերիզոր Պետությունը բնականաբար փորձելու է գործել սեփական հայեցողությամբ և խախտել օրենքը: Քանի որ չկա և երբեք չի կարող լինել կենտրոնական քաղաքական իշխանություն՝ վեր կանգնած Ինքնիշխան Պետություններից, որը կարողանար պահպանել [ճշգրտությամբ կատարել՝ соблюдать՝ Լ. Շիրինյան] Ազգերի օրենքը: Ուժերի հաշվեկշիռը պետք է խոչընդոտի այն բանին, որ Ազգերի ընտանիքի որևէ անդամ դառնա ամենակարող»[6]: Այնուհետև Լ. Օպենհեյմը կանոնը ձևակերպելուց հետո, պարզաբանում է. «Լյուդովիկոս XIV և Նապոլեոն I շրջանի պատմությունը ցույց է տալիս այդ սկզբունքի ողջամտությունը (թե որքան է այն

---

[4] **Киссинджер Г.** Дипломатия. Пер. с англ. М., 1997, с. 9.

[5] Տե՛ս **Kissinger H.** World Restored. Metternich, Castlereagh and the Problems of Peace, 1812-1822 (1957).

[6] Տե՛ս **1. Трофименко Г.** К проблеме востановления баланса сил на мировой арене. Вестник МГУ Серия 18, Социология и политология. 2001, № 4, с. 40, **2. Oppenheim L.** International Law. A Treatese. Vol.1 Peace. L; № Y; Bombay, 1905, pp. 73-74, 185-186**, 3. Kingsbury B.** Legal Positivism as Normative Politics: International Society, Balance of Power and Lassa Oppenheim's Positive International Law. International Law / ed. by Malcolm Evans, Patrick Capps. 2009, Vol. 1, pp. 59-94.

ողջամիտ փոքր պետությունների և պետականազուրկ ժողովուրդների համար, այլ հարց է՝ Լ. Շիրինյան) […] 1648 թվականի Վեստֆալյան խաղաղության պայմանագրից սկսած՝ ուժերի հաշվեկշռի սկզբունքը Եվրոպայի պատմության մեջ խաղացել է իշխող դեր»[7]: Ընդսմին՝ Լ. Օպենհեյմն ավելի է կոնկրետանում. «Ինչպես իրենք՝ եվրոպացիները, այնպես էլ [տվյալ թեմայով] գրողների մեծ մասը համաձայն են այն բանում, որ ուժերի հաշվեկշիռը պահպանելու նպատակով ինտերվենցիան (ներխուժում, միջամտություն՝ Լ. Շիրինյան) թույլատրելի է (ստորագծումն իմն է՝ Լ. Շիրինյան)»[8]:

Իսկ այն հարցը՝ կենսական Հայաստանի և հայության համար, թե թուրքերը իբրև իսլամ, կարող են Եվրոպական հավասարակշռության մեկ տարրը լինել և տեղ գտնել Եվրոպան կազմող ազգերի ընկերության մեջ, առաջին արձագանքը գտավ և դրականորեն լուծվեց Ֆրանսիական միապետության կողմից: Ֆրանսուա I (1515-1547թթ.) «հարմար նկատեց համաձայնության դաշինք կնքել Քանունի Սուլթան Սուլեյմանի (1520-1538թթ.) հետ»: «Եվրոպական հավասարակշռության քաղաքականությունը, - գրում է Ռընե Փինոնը,- վերջնականապես գերակշռեց խաչակրության գաղափարին վրա…»[9]:

Սա աշխարհի պատմաքաղաքական հեղաբեկումների այն շրջանն է, ինչը անվանվում է ուժերի հավասարակշռության եվրոպական համանվագ: Այն «ծնվել է XVII դարում աշխարհակարգի հայեցակարգի ունիվերսալության միջնադարյան հույսերի վերջնական կրախի արդյունքում, որը Հռոմեական կայսրության ավանդույթների ու կաթոլիկ եկեղեցու ձուլվածքն էր: Աշխարհը պատկերացվում էր որպես երկնքի հայելային արտացոլումը: Այնպես ինչպես Երկնքում կառավարում է մի Աստված, մի

---

[7] Տե՛ս **1. Трофименко Г.** К проблеме востановления баланса сил на мировой арене. Вестник МГУ Серия 18, Социология и политология. 2001, № 4, с. 40, **2. Oppenheim L.** International Law. A Treatese. Vol.1 Peace. L; № Y; Bombay, 1905, pp. 73-74, 185-186, **3. Kingsbury B.** Legal Positivism as Normative Politics: International Society, Balance of Power and Lassa Oppenheim's Positive International Law. International Law / ed. by Malcolm Evans, Patrick Capps. 2009, Vol. 1, pp. 59-94.

[8] Նույն տեղում:

[9] Տե՛ս «ՎԷՄ» (Փարիզ), 1936 ԺԵ (մայիս-հունիս), էջ 58:

կայսր էլ պետք է կառավարի աշխարհիկ աշխարհում, իսկ պապն էլ՝ ունի-վերսալ եկեղեցուն»[10]:

Եթե Ժ. Կլեմանսոյի ձևակերպած սկզբունքներից առաջինը, թվում է, ինքնին հասկանալի է, ապա երրորդը կենսական է պետությունների առաջացման առաջին իսկ պահից: Դեռևս հին հնդիկ մտածող, բրահման Կաուտիլյան էր (IV-III դ. մ.թ.ա.) մասնավորապես, ցույց տալիս կողքից այլ պետությունների հետ դաշինքի որոնման անհրաժեշտությունը[11]: Սա «Արտհաշաստրա»-ի արտաքին քաղաքականության վեց մեթոդներից հինգերորդն է:

Հ.Գ. Այն ինչի մասին գրում են գերմանացի իրավաբան Լ. Օպենհեյմը, ամերիկացի քաղաքական մտածող և քաղտեխնոլոգ Հ. Քիսինջերը, ինչ-որ փորձում էր իրականություն դարձնել ֆրանսիացի Ժ. Կլեմանսոն, իմաստավորել է իր հեղափոխական անցյալով և Հայաստանին անմնացորդ նվիրվածությամբ հայտնի Առաջին Հանրապետության երևելի ռազմաքաղաքական գործիչ և ինքնատիպ քաղաքական մտածող, Արամի (Սարգիս Հովհաննիսյան) մերձավոր զինակից Ռուբենը (Մինաս Տեր-Մինասյան)՝ մերժելով քաղաքական հարափոփոխ աշխարհում քաղաքական կողմնորոշումները, որտեղ դերակատար պետություններն առաջնորդվում են բացառապես 1) մշտական (կայուն) շահերով և փոփոխական (անկայուն) դաշինքների ու կոալիցիաների ստեղծումով, 2) «հզորությամբ, կամքով, ինչպես նաև մտավոր ու բարոյական ազդակներով օժտված» առաջատարների հայտնության սպասումով:

Հայաստանը «Եվրոպական համանվագի» աքցաններում (համանվագի մոդելը)

Հայտնի է, որ Վիեննայի կոնգրեսը (1814 թ. սեպտ. - 1815 թ. հունիս) նոր կանոններ մտցրեց ուժերի հավասարակշռության խաղի մեջ: Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Պրուսիան և Ավստրիան (1867 թվականից՝ Ավստրո-Հունգարիան) նվիրվեցին եվրոպական տարածքային

[10] **Киссинджер Г.** Дипломатия, с. 45:

[11] Տե՛ս «Артхашастра, или Наука о политике». Антология мировой политической мысли. В 5-и томах. Том I, М. 1997, с. 135.

կարգավորմանը՝ նեցուկ ունենալով այն նոր մեխանիզմը, որը կոչվում էր «եվրոպական համանվագ»: Յուրաքանչյուր որևէ փոփոխություն, համաձայն խաղի նոր կանոնների, պետք է կատարվեր գլխավոր հինգ ուժերի նախնական խորհրդակցությամբ: Այդպիսով, Եվրոպայի պետությունները կազմեցին մի դաշինք, միության մի ձև, որի կանոնները և հատուկ անդամների դերերը գրված չէին, սակայն ամեն մի քաղաքական գործիչ հասկանում էր դրանք: Այս էր միջազգային քաղաքականության և դիվանագիտության այն համակարգը, որը հասունացավ Վերածննդի ժամանակ և այժմ ընկալվում էր ամբողջովին սովորական ու բնական:

Ակնհայտ է, որ «եվրոպական համանվագը» բազմաբևեռ էր, իսկ բազմաբևեռ համակարգում ցանկացած երկիր, նույնիսկ նրա առաջատարն ու երաշխավորը (տվյալ դեպքում՝ Անգլիան.- Լ. Շիրինյան) միայնակ իրենց նպատակներին հասնել չէին կարող: Առավել ևս, որ ավելի ուժեղի համար սեփական անվտանգության ապահովումը կամ մրցակցին շարքից դուրս բերելը հնարավոր էր բացառապես դաշինքների միջոցով: Պետությունները կարող էին պահպանել վտանգի հանդեպ հավասարակշռություն (դաշինքը որպես ուժերի հաշվեկշիռը պահպանելու եղանակ) կամ միանալ ուժեղագույնին, որպեսզի հաղթանակի պտուղներից օգտվեն, սակայն մի դաշինքից անցումը մյուսին բոլոր դեպքերում անմիջականորեն փոխում էր ուժերի հաշվեկշիռը/հավասարակշռությունը («Համանվագը» XVIII-XIX դարերում, դասական իմաստով, խստագույնս ենթարկվել է վերոշարադրյալ տրամաբանությանը[12]): «Համանվագի» շրջանակներում տիրապետող էր բացարձակ անվստահությունը: Այսպես, օրինակ, Բեռլինի կոնգրեսին (1878թ.) և Բալկանյան պատերազմներին հաջորդող շրջանները «լեցուն» են վախով, այն ըմբռնումով, որ երկրներից մեկը՝ գլխավորապես հետաքրքրված Բալկաններով, կարող է այդ տարածաշրջանում ձեռք բերել ավելի մեծ ազդեցություն, քան շահագրգիռ այլ ուժերը:

Ավստրիայի, Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի՝ Բալկաններում ուժերի հավասարակշռությունը պահպանելու մտահոգությունները ուղեկցվում էին Թուրքիայի հարաճուն թուլացումով: Եվ դա այն ժամանակ, երբ

[12] Այդ մասին հանգամանորեն տե՛ս Gulick E. Europe's Classical Balance of Power. Ithaha, N.Y., 1955.

խոշոր տերությունները եվրոպական հավասարակշռության պահպանումը (որը նրանց հաջողվեց ընդհուպ Առաջին աշխարհամարտ) համարում էին համաշխարհային հանրության համար (նույնն է թե Արևմուտքի) կենաց ու մահվան հարց: Առավել պարզությամբ այդ մասին արտահայտվել է ԱՄՆ նախագահ Թեոդոր Ռուզվելտը (1911 թ.):

«Ամեն բան պիտի կարգին նկատել,- ասում էր նա,- քանի տակավին Անգլիան պահում է ուժերի հավասարակշռությունը Եվրոպայում: Բայց երբ որևէ պատճառով նա այդ բանը այլևս չկարողանա անել, այդ դեպքում Միացյալ Նահանգները հարկադրված պիտի լինեն միջամտելու, թո՛ղ թե առժամաբար - խնդիր չէ, ո՞ր պետության և կամ պետությանց ո՞ր խմբակի **դեմ** (ընդգծումը իմն է.- Լ. Շիրինյան) - վերականգնելու համար ուժերի հավասարակշռությունը…[13]»: Եվ այնուհետև. «այո՛, մեր աշխարհագրական դիրքի և մեր հզորանքի բերումով՝ մենք դառնում ենք հավասարակշռող տարրը համայն աշխարհի ուժերի փոխհարաբերության մեջ[14]»:

Անշուշտ, Միացյալ Նահանգները կարող էին դառնալ համաշխարհային (եվրոպական) համակարգի «հավասարակշռող տարրը», սակայն ոչ «հայկական գործոնը»: Եվ ինչպես ցույց տվեց Հայկական հարցի որքան հերոսական, այնքան էլ ողբերգական հոլովույթը 1876-1914 թվականներին, Հայաստանի ազատագրության խնդիրը, որը հանգեցվեց Օսմանյան կայսրության «արևելյան նահանգների բարեփոխումների» անորոշ հարցի, դիտվեց «համանվագի» շրջանակներում Օսմանյան կայսրության համար նախատեսված գործառույթի* ածանցյալ: Եվ ո՛չ ավելին: Ուստի և «համանվագի» յուրաքանչյուր անդամ կամ բոլորը միասին օգտագործում էին Հայկական հարցը հօգուտ/ընդդեմ Օսմանյան կայսրության, ինչպես ասում են, ըստ տեղի և պարագայի: «Եվրոպական համանվագի» քաղաքականությունը Արևելյան հարցի «լուծման» մեջ ծայրահեղ ճշգրտությամբ է ներկայացնում Մովսես Տեր-Հակոբյանը: Նա գրում է. «Օսմանյան կայսրությունը 1876-ին քայքայված վիճակի մը մեջ էր: Եվրոպայի բոլոր մեծ

---

[13] Տե՛ս **Նավասարդյան Վ.** Նեղուցներ, էջ 30:

[14] **Նավասարդյան Վ. …,** էջ 30:

* Վերջինս, իր հերթին, հանգում էր հիմնականում Ռուսաստանը զսպող և դեպի Հնդկաստան տանող «անգլիական ուղիների» անվտանգության ապահովման դերակատարության:

պետությունները կջանային «բան» մը փրցնել անկե, **պայմանով, որ մեկը մյուսեն շատ ավելի չառնե և ուժերու հավասարակշռությունը չխախտե**: Մեծ պետությունները այս ավարը կբաժնեին **փոքր ու ճնշված ազգերու շահերը պաշտպանելու քողին տակ, ազատության, քրիստոնեության կամ ցեղակցության անուններով**: Համիդ էլ իր կարգին, ասոնք տեսնելով, կշահագործեր մեծ պետությանց հակառակությունները և հավատալով ու ընդունելով իր կայսրության եվրոպական մասին մոտալուտ կորուստը, իր բոլոր ուշադրությունը դարձուցած էր իր **ասիական կայսրության պահպանման**: Հոս վտանգը հայոց հավանական ազատագրական շարժման մեջ տեսնելով, **կկանխե այդպիսի շարժում մը խեղդել իր սաղմին մեջ իր ծննդյան ժամուն իսկ**... »[15]: Արևելյան խնդրի շուրջ առաջացած այս վիճակը լավ էր պատկերացնում նաև թուրք կառավարող վերնախավը: Ուստի և օսմանյան խորհրդարանի իթթիհատական պատգամավոր Ասլան բեյը, անդրադառնալով «քաղաքակիրթ երկրների» քաղաքական և դիվանագիտական խաղերին, բոլոր հիմքերն ուներ հայտարարելու. «Հայաստանի բարեփոխումներով մեզ չեն կրնար վախցնել: Եվրոպայի հավասարակշռությունը պահպանելու համար՝ Թուրքիո հարատևությունը ամեն տարակույսե վեր է»: Թուրքերը «գիտեին» նաև 1854 թվականի մարտի 13-ի պայմանագրի՝ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության անխախտության (Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Թուրքիան ընդդեմ Ռուսաստանի) «սկզբունքի» մասին, ինչից անտեղյակ էին հայերը: Այդ դաշնագիրը հռչակում էր. «Օսմանյան կայսրության գոյությունն իր ներկա չափերի (extant) մեջ էական կարևորություն ունի Եվրոպական երկրների միջև ուժերի հավասարակշռության համար»[16]:

Օսմանյան կայսրության անձեռնմխելիության դոգմային, ամբողջության մեջ, մինչև 1914թ. հարազատ մնաց նաև ամենահակաթուրք (մասնավորապես՝ հայ ժողովրդական երևակայության շրջանակներում) ուժը՝ ռուսական «գլանակը»: Դեռևս 1829 թվականին Նիկոլայ Առաջին ցարի հրամանով ստեղծված իշխան Կոչուբեյի «փորձագիտական խումբը» կոչ-

---

[15] **Տեր-Հակոբյան Մ.** Թրքահայաստանի կորուստը (հայ և օսմանյան հարաբերությանց լույսի տակ) և արտասահմանի հայոց ապագան: Բեյրութ, 1967, էջ 108:

[16] **Morgenthau Hans J.** Politics Among Nations. Fifth edition, Revised, N.Y., 1978, p. 199.

ված էր «հստակորեն ճշգրտելու» Ռուսաստանի քաղաքականությունը թուրքական հարցում (հասկանալի է խոսքը երկրառազմավարական (*գեոստրատեգիական*) հիմնադրույթի մասին է)՝ ելակետ ունենալով «Ռուսաստանի շահերին համապատասխան Վոսփորում (կարդա Բոսֆոր.- Լ. Շիրինյան) **տկար** հարևան ունենալու» դրույթը: Եզրակացությունը խորքային էր. **«Նկատելով, որ Եվրոպայում Օսմանյան կայսրության պահպանման օգուտները գերազանց են վնասներից, և, հետևաբար, ընդունելով, որ նրա քայքայումը հակառակ է Ռուսիո իրական շահերին, այս նկատառումներով խոհեմությունը պահանջում է կանխել այդ քայքայումը»**[17*]: Այս դիրքորոշումը Ռուսաստանը վերահաստատեց առնվազն երկու անգամ՝ Ավստրիայի հետ Ռայխշտադի 1877 թվականի հունվարի 15-ի համաձայնությունով (2-րդ կետ), անուղղակիորեն, և 1897 թվականին՝ միանալով Ֆրանսիայի արտգործնախարար, թրքասեր և հայատյաց Հանոտոյի՝ Օսմանյան կայսրության անձեռնմխելիության պահպանման սկզբունքի ճանաչման առաջարկին, պատճառաբանությամբ. «համախորհուրդ մեծ պետությանց (այսինքն՝ «համանվագի» շրջանակներում.- Լ. Շիրինյան) հետ, քանի տակավին պայմանները հասունացած չեն, **հետաձգել** (ընդգծումը իմն է.- Լ. Շիրինյան) «Օսմանյան կայսրության անկումը»[18]:

Երկրաքաղաքական խաղի այս կանոններով, «օղակապերի» այս շղթայի մեջ էլ զարգանալու և «լուծվելու» էր Հայաստանի հարցը: Բեռլինի հայոց ուղեգիծը լավագույնս ձևակերպել է Թուրքիո պատրիարք Ներսես արք. Վարժապետյանը Ազգային ժողովի իր հուզախառն ճառում (1878 թ. հունիսի 21). «**Հայոց վարչություն Հայաստանի մեջ** առանց քաղաքական փառասիրության զոր երբեք չենք ունեցած և չենք կրնար ունենալ, մեր վեհափառ սուլթանին հովանավորությանը և վեհապետական իշխանությանը

---

[17] **Մանդելշտամ Ա.** 20-րդ դարի Ռուսիան թրքական նեղուցների առջև. - «Новоселие» (Нью Йорк), 1946, N. 29-30, էջ 103. - Տե՛ս Նավասարդյան Վ. Նեղուցները, էջ 48-49:

[*] Ճիշտ է, Կոչուբեյի հանձնախումբը աչքաթող չէր արել նաև «անկանխատեսելի հանգամանքները», «պատրաստ լինել պատմության դատավճռին, երբ թուրք պետության մահը անխուսափելի պիտի դառնա Եվրոպայում, արագորեն ձեռք առել կարենալու համար բոլոր միջոցները, որպեսզի որևէ մեծ պետություն չկարողական գալ և գրավել դեպի Սև ծով տանող մուտքերը» (**Նավասարդյան Վ.** Նեղուցները, էջ 49):

[18] Տե՛ս **Նավասարդյան Վ.** Նեղուցները, էջ 89-90:

ներքև»[19]: Ըստ էության՝ հայոց ազգային հեղափոխությունը մինչև Մեծ եղեռն գալարվեց այս ուղեգծի շրջանակներում: Մովսես Տեր-Հակոբյանը ուշադրության արժանի և յուրահատուկ տեսակետ է հիմնավորում, երբ գրում է. «Համիդը իր մոլորցուցած հայերուն... դեպի Բեռլինի անելները ղրկած էր», որ սուլթանը «ինքնավարության» ճամբան մատնանշած էր Բեռլինի խողովակով. ուրեմն **Բեռլին և ինքնօրինություն**, և ուրիշ ոչինչ»[20]: Բեռլինի կոնգրեսը եղավ վերջի սկիզբը: Ընդհանրական այս իրականությունը «…ճակատագրական անխուսափելիությամբ հասցրեց [հայերի] 1895-97-ի և 1909-ի սարսափելի ջարդերին ու 1915-ի ահավոր կոտորածներին»[21]: Ընդսմին, Հայաստանը և օսմանահպատակ հայությունը ներքաշվեցին «համանվազի» գործառույթ Սան Ստեֆանոյի պայմանագրի (1878, փետրվարի 19) 16-րդ հոդվածով, նրան գամվեցին անդարձ՝ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածով:

Հայտնի է, որ ռուսական զենքի հաջողությունները ռուս-թուրքական պատերազմում և Կենտրոնական Հայաստանի գրավումը ռուսական զորքերի կողմից ոգևորություն առաջացրին հայ հասարակական-քաղաքական շրջանակներում: 1877 թվականի վերջին Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովը մերժեց հայերին զորակոչելու սուլթանական հրամանագիրը (իրադեն): 1878 թվականի հունվարին Թուրքիայի հայոց պատրիարք Ներսես արք. Վարժապետյանը Ազգային ժողովին ներկայացրեց մի տեղեկագիր, որտեղ շարադրված էր Հայաստանի ինքնավարության ծրագիրը՝ Լիբանանի օրինակով (1864 թվականի կանոնադրությամբ Լիբանանը կառավարում էր քրիստոնյա ընդհանուր նահանգապետը): «Ծրագիրը,- ենթադրում է Ջ. Թորոսյանը,- որ ամենայն հավանականությամբ թելադրված էր թուրք կառավարության և Անգլիայի կողմից (որոնք հարցի նման լուծումը գերադասում էին Արևմտյան Հայաստանի ռուսական գրավումից), մերժվեց»[22]: Ստեղծված իրավիճակում, տեղի տալով զանազան ճնշումների (հայկական, թե ռուսական շրջանակներից) հայկա-

---

[19] Տե՛ս **Լեո**, Հայոց հարցի վավերագրերը: Թիֆլիս, 1915, էջ 130:

[20] Տե՛ս **Տեր-Հակոբյան Մ.** Թրքահայաստանի կորուստը: էջ 126, տե՛ս նաև էջ 109-115:

[21] **Ллойд Дж**. Правда о мирных переговорах. М., 1957, т.2, с. 390.

[22] **Թորոսյան Ջ.** Սան Ստեֆանոյի պայմանագիրը 1878 - «Հայկական սովետական հանրագիտարան»: Երևան, 1984, հ.10, էջ 170:

կան հարցի տնօրինումը ամբողջությամբ անցավ ռուսական կողմի տրամադրության տակ: Իրադարձությունների հետագա ընթացքը մինչև Բեռլինի կոնգրես և մանավանդ արդյունքները քաջ հայտնի են հայ գիտաքաղաքական և հասարակական շրջանակներին: Այստեղ գրեթե ասելիք չկա: Սակայն նույն շրջանակներին քիչ է հայտնի կամ նրանց կողմից անտեսվում է մի «աննշան» փաստ:

Բանն այն է, որ Ռայխշտատի ռուս-ավստրիական համաձայնության 2-րդ կետում ասվում էր, որ **Բալկաններում նոր կարգ չպետք է հաստատվեր** (ընդգծումը իմն է.- Լ. Շիրինյան) «առանց մասնակցությանը մեծ պետությանց, որոնք երաշխավորած էին ամբողջականությունը Օսմանյան կայսրության», իսկ 7-րդ կետը պնդում էր. «Բալկանյան թերակղզու վրա որևէ զգալապես մեծ սլավ պետություն պետք չէ ստեղծվի ի վնաս ոչ-սլավ ցեղերի»[23]: Ակնհայտ է, որ Ռուսաստանը Սան Ստեֆանոյում խախտել էր Ավստրիայի հանդեպ ստանձնած պարտավորությունները* (Ավստրիան փոխադարձորեն համաձայն էր, որ Թուրքիայի քայքայման դեպքում **Պոլիսն** անցնի Ռուսաստանին: Նկատենք, որ Հայաստանի ու հայերի մասին թեթև ակնարկ անգամ չկա): Ուստի և հենց Ռուսաստանն էր, որ հրահրեց Բեռլինի կոնգրեսի «հաշվեհարդարը»:

Իսկ թե ի՞նչ խորքային նկատառումներով Հայաստանը խցկվեց Սան Ստեֆանոյի պայմանագիր, կարոտ է լուսաբանության՝ բացառապես Հայաստանի ազգային շահերի տեսանկյունով: (Թերևս հետագա հավանական սակարկությունների համար այլ գլխավոր հարցերի՝ Պոլսի և Նեղուցների հիմնախնդրի ենթատեքստում): Ինչևէ:

Քայլը կատարված էր և երիցս ճիշտ է Վահան Նավասարդյանը ասելով. «Բուն պատճառը այն մեծ ձախողանքի, մեզ համար վերջացած այնքան եղերական հետևանքով, որին Ռուսաստանը Սան Ստեֆանոյից հետո ենթարկվեց Բեռլինի վեհաժողովում, թաքնված էր ճիշտ այս հոդվածների տակ»[24]: Իսկ «համանվագի» գլխավոր ճարտարապետի ու պատասխանա-

---

[23] Տե՛ս **Նավասարդյան Վ.** Նեղուցները, էջ 89-90:

* Այս պայմանագրով «Մեծ Բուլղարիայի» սահմանները, ի միջի այլոց, հասնում էին Պոլսին այնքան, որ սպառնում էին թե՛ բուն Պոլսին, թե՛ Նեղուցներին:

[24] **Նավասարդյան Վ.** Նեղուցները, էջ 57:

տուի քաղաքականությունը Արևելյան հարցում Թուրքիայի քրիստոնյաների համար «փակում էր դժոխքից դուրս գալու ելքը»՝[25] լորդ Շերբրուկ: Ամենախոցելի տեղերը այդ հոդվածներում (տարբեր կարգի) բարեփոխումների և հայության ֆիզիկական գոյության խնդիրներում, անշուշտ, նրանց իրականացման երաշխիքների հարցն էր: Եթե Սան-Ստեֆանոյի դաշնագրում այդ դերը վերապահված էր Ռուսաստանին և, հետևապես, անհրաժեշտության դեպքում նրա կողմից «հումանիտար ինտերվենցիան» հավանական էր, ապա Բեռլինի կոնգրեսը որպես երաշխավոր ճանաչելով խոշոր տերություններին («համանվագին»), ըստ էության՝ համանվագի շրջանակներում «հումանիտար ինտերվենցիան» դարձրեց խիստ անհավանական[26]: Համանվագի գործողության մեխանիզմն իսկ բացառում էր այդպիսի միջամտության արդյունավետությունը: «Արևելյան հարցը պտտվում էր այն վախի շուրջը,- գրում է Օսմանյան կայսրության և իսլամական ավանդույթների հարցերով մասնագետ Նորման Իցկովիչը,- որ եվրոպական ուժերից որևէ մեկը կարող էր խախտել ուժերի հավասարակշռությունը՝ լավագույնս օգտագործելով Օսմանյան կայսրության տիրապետության տակ կատարվող որևէ ներքին փոփոխություն»[27]: Ինչպես ցույց տվեց թուրքական պետության հետագա «զարգացումը»՝ թուրքերը ամենաանցանկալի ներքին փոփոխությունը դիտում էին Հայաստանում որևէ տեղաշարժը հօգուտ հայերի:

Հայկական հարցի տեղափոխումը Բեռլինի կոնգրես, այն է՝ համանվագի գործառույթի շրջանակներ, քայքայվող Օսմանյան կայսրության թունդ ազգայնամոլ ու ցեղապաշտ ռազմաքաղաքական վերնախավին թույլ տվեց շունչ քաշելով վերջնականորեն ճշգրտել կայսրության պահպանման ռազմավարությունը և նրա ենթատեքստում՝ Հայաստանի ոչնչացման երկրառազմավարական ուղղությունը: Եվ այդ ուղեգիծը նույն հետևողականությամբ, սակայն տարբեր հաջողությամբ, իրականացրին Համիդը,

---

[25] Տե՛ս **Թորոսյան Զ.** Բեռլինի կոնգրես 1878 - «ՀՍՀ», 1976, հ. 2, էջ 402:

[26] Այդ մասին հանգամանորեն տե՛ս **Барсегов Ю.** Геноцид армян-преступление по международному праву. М., 2000, с. 34-58.

[27] **Itzkowitz N.** Eastern Question: The Concert of Europe. Encarta. Encyclopedia 2004, p. 3.

Էնվեր-Թալեաթ-Ջեմալ բանդան և ռասիստ Քեմալը*: Թուրքական չարագործ պետական հանճարը գնաց թուրքական «վաթանի»** («հայրենիք») որոնման ճանապարհով:

Հայոց համար խնդրի աղետաբեր դրվածքը միայն իրեն հատուկ խորությամբ և հանճարեղ պարզությամբ ըմբռնել ու ձևակերպել է Ամենայն հայոց բանաստեղծը՝ Հովհաննես Թումանյանը: «Վերցրեք Թուրքիայի քարտեզն ու մտիկ արեք,- գրում է նա: - Դա մի նոր պետություն է, որ դրրսից եկել է ու կոպիտ ուժով նստել հին կուլտուրական ազգերի ու նրանց հայրենիքների վրա: Եվ էդ երկրներից մեկը թե կա, որ նա համարում է ու դարձրել է իր հայրենիքը, ոչ Բալկանյան թերակղզին է, ոչ Աֆրիկայի հյուսիսը, այլ Անատոլիան, Փոքր Ասիան, ուր հայ ժողովուրդն էլ հնագույն ժամանակներից նստած պաշտում է իր Մեծ Հայաստանը, իր ազգային նվիրական վայրերն ու սրբությունները ու էն հողի վրա էլ հարուցանում ու զարգացնում է հայկական հարցը: Էս տեսակետից էլ հայկական հարցը Տաճկաստանը հուզող ամենածանր ցավերից մինն է, և հետզհետե **թերևս դառնա ավելի ու ավելի ծանր, քանի թուրքն ստիպված լինի սեղմվել դեպի էս կողմերը** (ընդգծումը իմն է.- Լ. Շիրինյան): Եվ ահա էս հարցից ազատվելու հնարը էսպես է վճռել թուրքի պետական հանճարը. հայերին կոտորել կամ հալածել, քշել, գաղթեցնել: Այո՛, վայրագ ու անօրեն է էս ճանապարհը, այլև խելագար, սակայն հաստատ: Եվ էս ճանապարհով էլ նա արդեն հասել է մեծ հետևանքի: Եվ էս ջարդին ու գաղթին վերջ չկա:

---

*Արևելյան խնդրին և թուրքի ազգային դիմագծին քաջածանոթ Անգլիկան եկեղեցու ճանաչված հոգևոր հայր Բերտրան Բարեյլը գրում է. «հիսուն տարվա պատմություն մը կա, ուր մենք անթիվ անգամներ տեսած ենք, թե թրքական ժողովներու և խորհուրդներու բոլոր թևերը, աջ, կեդրոն, թե ձախ, խորքին մեջ թրքական միևնույն թուրքն են, կարմիր ու համանման գլխանոցով» (**Պերտրան Պարեյլ**, Արևելյան ողբերգությունը, Աթենքեն Էնկյուրի, Աթենք, 1924, էջ 39):

** «**Վաթան**» - «... թուրքերեն լեզվի մեջ,- գրում է Ռուբենը, - չկա **հայրենիք** բառը, կգործածվի **վաթան** ոչ-թուրքերեն բառը, որուն իսկական նշանակությունն է **հավաքատեղի**, այսինքն փարախ ոչխարներու կամ հավաքատեղի բանակի: Հին թուրքերը, մոնգոլները **օրտու** կանվանեին իրենց տիրած երկրները, ինչ որ կհամապատասխանե վաչկատուն ժողովուրդներու հասկացողության: Թուրք ըմբռնումին համաձայն՝ երկիր մը նյութ է, որտեղեն կօգտվեն նյութապես, ժամանակավոր բանակատեղի է, ուրիշ ոչինչ: Այդ բանակատեղին հեռու է նվիրական սրբություն ըլլալե, հեռու է իր «ես»-ի անբաժան մասը կազմելե»: (**Ռուբեն**, Նորագույն Թուրքիան և իր ձևափոխումները. - «Հայրենիք», 1928, N6, էջ 163):

Էսպեսով էլ ստեղծվել է մի դրություն, որ նշանավոր գիտնական Էլիզե Ռեկլյուին տրամադրում է լուրջ կերպով կարծիք հայտնելու, թե հայ ժողովուրդը ոչնչանալու ճանապարհի վրա է, և շատ չի քաշիլ, որ Արևելքի մի քանի անհետացած կուլտուրական ազգերի նման, նա էլ կիջնի պատմության ասպարեզից: Կարծեք արդարանում է Գլադստոնի կարծիքը, թե էն սև օրվանից, ինչ հայտնվեց էդ ժողովուրդը, հայտնվեց ինչպես մարդկության թշնամի: Որ կողմը հայտնվեց, իր ետևից թողեց արյան լայն հետք, և ուր մտավ նրա իշխանությունը, ամեն տեղից չքացավ քաղաքակրթությունը, անհետացավ միանգամայն: Ամեն տեղ մտցրեց կոպիտ ուժի իշխանությունը և երբեք չհասկացավ ու չունեցավ օրենքի վրա հիմնված կառավարություն»[28]: Կամ արևմտահայությունը իր հարցով եղել է «եվրոպական պետությունների (կարդա՝ համանվագի.- Լ. Շիրինյան) հակամարտության դժբախտ զոհերից մինը, և անպայման ամենադժբախտը:

Ամենադժբախտը, որովհետև **գտնվում էր Թուրքիայի սրտում, ամենադժվար ու ամենավտանգավոր տեղում**, (ընդգծումը իմն է.- Լ. Շիրինյան) և Թուրքիան նրան բաց պիտի թողներ միայն իր վերջին շնչի հետ:

Եվ նա՝ Թուրքիան, դիմել է, դիմում է ու կդիմի ամենահրեշավոր միջոցների՝ վերջ դնելու էդ ժողովրդին իր հարցի հետ միասին, հայի հայրենիքի ու ազգային իրավունքների խնդիրը միանգամ ընդմիշտ փակելու համար»[29]:

Ճիշտ է, որ Հայաստանի ոչնչացման ռազմավարությունը կոնկրետ ուղղորդում ստացավ Բեռլինի կոնգրեսի մեխանիզմներում, սակայն նրա ամուր հիմքերը «դրվել էին» Փարիզում (1856 թվական, Փարիզի հաշտության կոնֆերանս, մասնակիցներ՝ Ռուսաստան, Ավստրիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Սարդինիա, Թուրքիա, Պրուսիա), երբ Թուրքիան ընդունվեց եվրոպական խոշոր տերությունների «ընտանիք», միջազգային երաշխավորությամբ ապահովվեց Օսմանյան կայսրության տարածքային անձեռնմխելիությունը: Միաժամանակ «նրա՝ իր հպատակ քրիստոնյա ազգերին հոշոտելու խնդիրը,- հեգնանքով նկատում է Թումանյանը,-

---

[28] **Թումանյան Հ.** Ահա թե ինչու (1912թ.) - Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1994, հ. 6, էջ 375-376:

[29] **Թումանյան Հ.** …, էջ 20-21:

անվանվեց Տաճկաստանի ներքին գործ և նրանց բարօրության համար միանգամայն բավարար նկատվեց սուլթանի Հատտը-Հումայունը»[*30]:

Սակայն խնդիրը, ընդգծենք, չարագույժ ուրվագիծ ձեռք բերեց Բեռլինի կոնգրեսից հետո. Հայաստանի ոչնչացման ծրագիրը ամենայն հստակությամբ առաջին անգամ որոշակիորեն ձևակերպեց Աբդուլ Համիդի կառավարության ղեկավար Քյամիլ փաշան: Ողջամտությունը պահանջում է, «պարզաբանում» էր նա, ոչնչացնել և մեր երկրի երեսից ջնջել այն բոլոր տարրերը, որոնք կարող են հետագայում մեզ սպառնալ վտանգներով և կարող են ծառայել միջամտության առարկա և գործիք եվրոպական երկրների ձեռքին: Եվ այնուհետև. «հիմա, այսօր գոնե» Անգլիայի շահերը պահանջում են, որ Փոքր Ասիայում («մենք և Անգլիան Հայաստան բառը ոչ միայն չենք ճանաչեր, այլ այդ անունը հնչող կզակները պետք է որ ջախջախենք... ») մեր տարածքները ազատ լինեն ուրիշների միջամտությունից և միջամտության աղբյուրներից. այդ սրբազան նպատակին հասնելու համար «ուրեմն այդ հայ ազգը վերցնելու, անհետ և անճետ (անզավակ.- Լ. Շիրինյան) ընելու ենք»: Այդ ծրագրի իրականացման համար «ամեն գործիք պատրաստ ունինք». քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, «վերջապես ամենայն ինչ», որոնք կարող են սրբազան պատերազմ հայտարարել այդ ազգի դեմ, «**որ ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ էլ պաշտպան**» (ընդգծումը իմն է.- Լ. Շիրինյան), իսկ մենք, ընդհակառակը, ունենք զենք ու բանակ և աշխարհի ամենախոշոր հարուստ տերությունը (Անգլիան.- Լ. Շիրինյան) որպես մեզ դաշնակից և Փոքր Ասիայում մեր տիրույթների հովանավոր [1878 թ. հունիսի 4-ի Կիպրոսի դաշնագրով.- Լ. Շիրինյան]: «Եվ եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի» և քրիստոնյա Եվրոպան «Տաճկական Ասիո մեջ» չկարողանա գտնել ոչ մի

---

[*] **Հատտը-Հումայուն** - Թուրքիայի բարենորոգումների ֆերմանը, որը ստորագրվեց 1856 թվականի փետրվարի 18-ին սուլթան Աբդուլ-Մեջիդի կողմից: Այն թղթի վրա հռչակում էր կայսրության բոլոր քաղաքացիների ազատությունն ու օրենքի առաջ հավասարությունը: Ջնջվում էր գլխահարկի տուրքը, ստեղծվում էին նահանգային խորհուրդներ և քրիստոնյա քաղաքացիները ընդունվում էին ամեն տեսակ պաշտոնի և աստիճանի համար: Սակայն, այս բոլորը շատ արագ ձևախեղվեցին ու հիմնականում բովանդակազրկվեցին:

[30] Նույն տեղում, էջ 19-20:

կրոնակցի, այդ ժամանակ նա մեզ հանգիստ կթողնի, և մենք կկարողանանք զբաղվել մեր «ներքին գործերով ու բարեկարգությամբ»[31]:

Հայերի ֆիզիկական ոչնչացման ճանապարհով Հայաստանին տիրանալու օգտին է արտահայտվել Համիդի կառավարության մի այլ նախագահ՝ Սաիդ Քյուչուկ փաշան 1884 թվականին:

Եվ վերջապես նույն խնդիրն է ձևակերպում հերթական մի այլ թուրք դահիճ, երիտթուրքերի Սալոնիկի 1910 թ. հոկտեմբերի 31-ի [13 օր] համաժողովում* կուսակցության գլխավոր քարտուղար Նազըմը. «...մեր հայրենիքը,- ասում է նա,- ասկե վերջ միայն ու միայն կրնա ըլլալ Անատոլուն: Ասիական հողամասին վրա դեպի Արևելք անսահման կարելիություններ կգտնվին մեր զարգացման ու ընդարձակումին համար: Մի մոռնաք, որ մեր նախահայրերը Թուրանեն եկած են... Մեր քաղաքական հորիզոնը բաց կմնա այդ ուղղությամբ միայն ու մեզի կմնա սրբազան պարտքը իրականացնելու թուրք ցեղի միությունը Միջերկրականեն մինչև Արալ ծովը: ... Կարևորը մեզի համար, այս պահուս, գաղափարին ոչ թե տեսական վերլուծումները և հիմնավորումները կկազմեն (այստեղ, ինչպես տեսանք, ամեն ինչ պարզ էր.- Լ. Շիրինյան), այլ անոր իրականացումին գործնական միջոցներուն ճշդումը: ... այդ քաղաքական ծրագրին իրականացման նախապայմանը՝ Հայկական հարցի արմատական լուծումն է: Իբրև քրիստոնյա ժողովուրդ, մեր կայսրության մեջ, մեզի իբրև հպատակ կապրին միայն հայերը: Պատմության բնական ընթացքը անխուսափելի պիտի դարձնե անջատումը կայսրութենե, ինչպես բալկանյան ժողովուրդներունը: ... Պատկերացուցեք պահ մը Արևելյան նահանգներու վրա հայ պետության մը կազմությունը: Նման պետություն մը տապանաքարն է թուրանական ծրագրին: Ոչ միայն պարտավոր պիտի ըլլանք ամբողջապես հրաժարիլ թուրք ցեղի միացման ծրագրեն, մեր նախահայրերու հայրենիքին տիրանալու հրաշագեղ գաղափարեն, այլ պատրաստ պիտի դառնանք սեղմվելու Անատոլուի մեջ միայն, Գոնիայի նախկին սելճուքյան

---

[31] «Փորձ», 1879 թ., հ. VII-VIII, էջ 204-205: Տե՛ս նաև «ՀՍՍՀ ԳԱ տեղեկագիր, Հասարակական գիտություններ», 1949, N 4, էջ 81-82:

*Համաժողովի մասին տե՛ս **Մնացականյան Ա.** Հայ ժողովրդի ողբերգությունը համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ: Երևան, 1965, էջ 32-33:

սուլթաններու նեղ հողամասերուն վրա: ... Պետական մարդու դերը և պարտականությունը վտանգը նախատեսելու և վտանգի հայտնությունն իսկ արգիլելուն մեջ կկայանա: Այսօրվան մեր քաղաքականության ամենեն կենսական, անհետաձգելի և հրամայողական հարցը կնկատեմ հայկական խնդիրը, որուն պետք է լուծում մը գտնել, ոչ թե կիսկատար, ժամանակ շահելու հաշվով, այլ արմատական և ամբողջական լուծում մը: ... կմնա միակ և վերջին կարելիություն մը, որուն հետ կամա թե ակամա, պարտավոր ենք հաշտվիլ, ընդունելով թրքական շահերուն համապատասխանող միակ ելքը: **Պետք է բնաջնջել հայերը մեր կայսրության մեջ**: Այս առաջարկը կրնա թվիլ անխիղճ, անմարդկային, դժվարին, բայց հարցը խղճի խնդիր մը չէ, ոչ ալ մարդկային զգացումներու խնդիր: Հարցը միայն քաղաքական է, Թուրքիո շահերուն և ապագայի հետ սերտորեն կապված խնդիր: ... Այսօր իսկ ... պարտավոր ենք կատարել ընտրությունը ... կազմել համապատասխան ծրագիր մը, նկատի առնելով ամենափոքր մանրամասնություններն իսկ, որպեսզի ամբողջական ըլլա անոր իրականացումը: Բոլորս ալ կհասկնանք, որ շատ բարդ ու դժվար է ձեռնարկը: Հարցը մեկ շրջանի, Արևելյան Անատոլուի (կարդա՝ Արևմտյան Հայաստանի.- Լ. Շիրինյան) մեջ բնակող հայության բնաջնջման ձևով չի ներկայանար միայն, այլ ամբողջ կայսրության մեջ տարածվող այդ նենգամիտ, ճարտար և ճկուն էրմենի կոչված ցեղի մը, որուն եռանդին և աշխատանքին գոհացում չի կրնար տալ նեղ ու փոքր սեփական հայրենիք մը իսկ... »[32]:

Նույն Նազըմը 1915 թվականի հունվարի վերջին երիտթուրքերի վերնախավի գաղտնի խորհրդակցության ժամանակ ասում էր. «Հայերը մահացուցիչ վերքի մը կնմանին. այս վերքը նախապես անվնաս կկարծվի, բայց երբ ժամանակին կարող վիրաբուժի մը գործողության չենթարկվի և չհանվի, անպատճառ կսպաննե... Եթե տեղական ջարդերով պիտի գոհանանք, օգուտի տեղ վնաս կհասնի... եթե այս մաքրագործումը ընդհանուր և վերջնական պիտի չըլլա, օգուտի տեղ վնաս կբերե. պետք է հայ ազգը արմատախիլ ըլլա, մեր հողին վրա անհատ մը անգամ չմնա, հայ անունը

[32] «The Turkish Tyranny» (հայերեն և անգլերեն): Թրքահայաստանի 1915-ի տարագրություն և ջարդ: Նյու Յորք, 1963, էջ 1-5:

մոռցվի: Հիմա պատերազմի մեջ ենք... մեծ պետությանց միջամտությունը և թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կրնար ըլլա, ըլլալու պարագային խնդիրը կատարված իրողություն մը կդառնա և կփակվի. այս անգամվան գործողությունը բնաջնջումի գործողություն մը պիտի ըլլա, հայերեն անհատ մը իսկ չմնալու պայմանավ բնաջնջումը անհրաժեշտ է... Վայրագությունը բնության օրենքն է...»[33]:

Թուրքական «վաթանի» որոնման ուղղությամբ, սակայն, առաջին խոսքը, նրա կոնկրետացման իմաստով, այդուամենայնիվ պատկանում է Համիդին: Դեպի անխուսափելի քայքայում գնացող կայսրության «երկրաքաղաքական առանցքը» ամբողջական պահելու մտահոգությամբ, Եվրոպայից արտամղման ուժերի (ազգային-ազատագրական պատերազմներ, խոշոր տերությունների հարվածներ և այլն) հզոր ճնշման տակ նա կայսրության «հավաքման» ու կայունացման գործընթացները ուղղորդեց Արևելք: Բեռլինի կոնգրեսից հետո օսմանյան ղեկավարության ուշադրությունը, նկատում է Ե. Ա. Ադամովը, ուղղվեց դեպի Արևելք: Համիդը մտասևեռվեց դեպի **Արևմտյան Արաբիա, մահմեդական սրբազան վայրեր** և **Հայաստան**[34] (ընդգծումը իմն է.- Լ. Շիրինյան): Բալկանյան պատերազմները ուժեղացրին միտումը: «Մեր Օսմանյան պետությունը,- ասում էր Համիդը,- տկարացած է իր գերաճումով… Ես չեմ զղջա, որ մեր ուժերը ծծող Պալքանյան երկրները կորցրեցինք: Որքան արագորեն հետ կենտրոնանանք, այնքան ավելի շուտով պիտի կարենանք հաղթահարել մեր տկարությունը և «հիվանդությունը»: Նման կորուստները «շատ բնական մի բան էին» [35]: «**Մենք ուզում ենք ապրել Անատոլիայի մեջ**,- հռչակեց նա,- **և պետք է մնա՛նք առանձին** (ընդգծումը իմն է.- Լ. Շիրինյան)»[36]:

Ռազմավարական այս ընտրության մեջ Քեմալը եղավ ծնունդն ու հարազատ զավակը համիդականության: Հայտնի է, որ Իթթիհատի հետ

---

[33] Տե՛ս **Մելան Զադե Ռիֆաթ**, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագիրները: Երևան, 1990, էջ 97-98:

[34] Տե՛ս Раздел Азиатской Турции по секретным документам бывшего Министерства иностранных дел. Под ред. **Е. Адамова**, М., 1924, с. 29.

[35] Տե՛ս **Եազճեան Գ**. Ապտուլ Համիդ Բ. կարմիր սուլթանը: Բեյրութ, 1980, էջ 827:

[36] **Եազճեան Գ**. …, էջ 827:

միաձուլված քեմալականներն իրենց երկրառազմավարական նպատակները ձևակերպեցին **Էրզրումի** (1919թ., հուլիսի 23-օգոստոսի 7) և Սվասի (1919թ., սեպտեմբերի 4-11) համաժողովներում և ամփոփեցին «Թուրքիայի ազգային ուխտի» մեջ: Եվ իրենց առաջնահերթ խնդիրը դիտեցին ոչ թե, ասենք, պայքարը անգլիական գրավման դեմ կամ Կ. Պոլսի ազատագրումը, այլ Արևելյան նահանգների (կարդա՝ Արևմտյան Հայաստանի.- Լ. Շիրինյան) «իրավունքների պաշտպանությունը»: Սվասի համաժողովի հանձնախմբի անունից սուլթանին ուղղված Քեմալի 1919թ. սեպտեմբերի 10-ի հեռագրում, մասնավորապես ասվում էր. անհնար է «մեր վիլայեթների հողերի **գեթ մեկ թիզը հանձնել Հայաստանին** (ընդգծումը իմն է.- Լ. Շիրինյան) կամ որևէ այլ պետության»[37]: Թուրքական եղեռնաբաղձ ինքնության էության դրսևորման օրինակ է բանաստեղծուհի, հասարակական գործիչ և հայ կանանց դահիճ Հալիդե Էդիպի կերպարը: Սույն տիկինը նույնիսկ թուրք ցեղի հոգեվարքի օրերին և Օսմանյան կայսրության մայրամուտին չէր մոռանում հայոց ցեղասպանության «արդյունքները» իրացնելու մասին: 1919 թվականին հանդես գալով Թուրքիայի հանդեպ Ամերիկյան մանդատի հաստատման օգտին, նա Վիլսոնի «14 կետերի» առիթով հույս էր հայտնում, որ «թուրքերին կթողնվի այն հողերը, որտեղ նրանք անվիճելի մեծամասնություն են կազմում» և որ դաշնակիցները չեն գնա «Հայաստանի ստեղծմանը Թուրքիայի արևելքում և հարավում»[38]: Ուստի և պատահական չէ, որ Արևելյան ճակատն է դիտվել ժամանակին գլխավոր, իսկ Հայաստանի ոչնչացումը՝ անհետաձգելի գործ. «Արևելյան ճակատում հաղթանակը պետք է նշանակեր հայկական բանակի և հայոց պետության ոչնչացումը…»[39]:

Ինչպես ասում են՝ ախորժակը բացվում է ուտելիս:

Ռուս-թուրքական «սրտակից եղբայրության» համաձուլվածքի առաջացումից հետո ամբողջ հասակով կանգնեց Հայաստանի վերջնական

---

[37] Այս մասին հանգամանորեն տե՛ս **Սահակյան Ռ.** Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան, 1919-1921թթ., Երևան, 1970, էջ 39-57:

[38] **Halide Edib**, The Turkish Ordeal. London, 1928, pp. 10-11. Տե՛ս Поцхверия Б. Американские комиссии в Турции в 1919 г. Уч. записки института Востоковедения, М., 1959, т. XVII, с. 157.

[39] **Զնդեթ Քերիմ**, Դասախոսություններ անկախության համար թուրքական պայքարի, Ստամբուլ, 1927: Տե՛ս **Мустафа Кемаль**, Путь новой Турции. М., 1934, т. III, с. 314.

ոչնչացման և հայ ժողովրդի իսպառ բնաջնջման այնքան մոտ և բաղձալի նպատակը՝ այս անգամ արդեն վերջին հանգրվանում՝ Արևելյան Հայաստանում: Այդ խնդիրը «լավագույնս» ձևակերպել է քեմալականների արտգործնախարար Ահմեդ Մուխտար փաշան՝ Արևելյան ճակատի հրամանատար, Հայաստանի դահիճ Կարաբեքիրին ուղղված 1920 թվականի նոյեմբերի 8-ի գաղտնի հեռագիր-հրահանգում. «Հայաստանը գտնվում է մահմեդական ընդարձակ տարածքների վրա (պատկերացնու՞մ եք, ընթերցող.- Լ. Շիրինյան), դրա համար էլ **անհրաժեշտ է նրան վերացնել ինչպես քաղաքականապես, այնպես էլ ֆիզիկապես** (ընդգծումը իմն է.- Լ. Շիրինյան): Պետք է հաշվի առնել, որ ընդհանուր քաղաքական իրադրությունը և մեր հզորությունը նպաստում են իրականացնել այդ մտահղացումը»[40]: Վերջնական այս նպատակը, ինչպես հայտնի է, չիրականացավ մասամբ. մի մասով, շնորհիվ Հայաստանի ազատությանն ու անկախությանը նվիրված ուժերի դիմադրության, մի մասով՝ իմպերիալիստական գիշատիչների ու նորածին սոցիալ-իմպերիալիզմի միջև առկա սուր հակասությունների:

Այդուհանդերձ, այդպիսով, հայկական գործոնը պահպանեց իր գոյությունն ու կենսունակությունը՝ արդեն որպես պետական կազմավորում, սեպի նման խրվելով թուրանական գորշ աշխարհի սիրտը և բաժանելով այն երկու մասի, ու դրանով իսկ արժևորելով Հայաստանի Հանրապետության ռազմավարական նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության համար: Տարիներ անց գլխավոր թուրքը՝ Քեմալը, անդրադառնալով այս անցանկալի իրողությանը թուրքական նենգությամբ և եզոպոսյան բազմիմաստությամբ ասելու էր. «Լոզանում [հայկական օջախ ստեղծելու] հարցը հետաձգվեց»[41]:

---

[40] Տե՛ս **Саркисян Е.** За кулисами: как рождался Московсий договор 1921г. - «Литературная Армения», 1991, N 1, с. 76-77.

[41] **Kemal M.** A speech, October 1927, Leipzig 1929, p. 609. Բնագիրն ասում է. «It is stated therein that the help of the League of Nations was to be claimed for the creation of an Armenain homestead. At Lausanne: This question is postponed» («Հաստատված է, որ պահանջվում էր Ազգերի լիգայի օգնությունը, ստեղծելու համար հայկական օջախ: Լոզանում հարցը հետաձգված է»):

Հայոց հարցի բալկանյան շրջադարձը
(երկրաքաղաքական ակնարկ)

Աշխարհագրական առումով Հայաստանը իրենից ներկայացնում է բնական և գրեթե անառիկ ամրոց: Մի կողմից նա սահմանակցում է Ռուսաստանին, մյուս կողմից՝ իշխում է համաշխարհային այն բոլոր ուղիների վրա, որ Փոքր Ասիայով անցնում են իր բնական պատնեշների փեշերով, միացնելով Եվրոպայի հետ հարստագույն երկրներ ու ծովեր: **Կորցնելով Հայաստանը՝ Թուրքիան կդադարի գոյություն ունենալուց** (ընդգծումը իմն է.- Լ. Շիրինյան): Կարելի է գրեթե առանց չափազանցության ասել, որ ժամանակակից Թուրքիայի համար անգամ նեղուցներին տիրելը չպետք է որ այնպիսի ուշադրության արժանանա, ինչպես Հայաստանն իր համար պինդ պահելը՝ իր գոյատևման այդ վերջին և ամուր պատվարը:*

Պաուլ ՌՈՀՐԲԱԽ

Օսմանյան կայսրությունը XX դար թևակոխեց տարածքային զգալի կորուստներով: Բեռլինի կոնգրեսի (1(13) հունիսի - 1(13) հուլիսի 1878) սահմանած հավասարակշռությունը կորցնում էր իր ներքին կայունությունը: Փարիզի խաղաղության տրակտատով (18(30) մարտի 1856 թ.) Թուրքիային տրված անձեռնմխելիության երաշխիքները անտես «գոլորշիանում էին»: Առաջինը, որ խախտեց «տաբուն», հզորության գագաթնակետ մագլցող Իտալիան էր:

1911 թվականի սեպտեմբերի 29-ին համաշխարհային քաղաքականության մեջ ակտիվ դերակատարության հայտ ներկայացրած այդ երկիրը սկսեց Օսմանյան կայսրությունից խլել նրա ***հյուսիսաֆրիկյան*** տիրույթները՝ հռոմեական պատմական պրովինցիաները (գավառները)՝ Տրիպոլիտանիան և Կիրենաիկան: Այս ուղղությամբ նա դեռևս XIX դարի 90-ական թվականներին ստացել էր Գերմանիայի համաձայնությունը: «Գերմանիան Իտալիային «carte blanche» էր տվել Տրիպոլիտանիայում և Կիրենաիկայում»: «Ավելին, Իտալիան ոչ միայն իր դաշնակիցներից՝ Գերմանի-

*«Deutseh-Asiatische Gesellschaf» ընկերության 1913 թվականի նոյեմբերի 23-ի խորհրդակցությունում ունեցած ելույթից:

այից և Ավտսրո-Հունգարիայից էր ստացել իր պլանների ճանաչում, այլև Եռյակ համաձայնության տերությունների կողմից»[42]:

Պահը հարմար էր ընտրված: Խոշոր տերություններից «Ֆրանսիան զբաղված էր Մարոկկոյի գործերով, Թուրքիան չուներ բավարար նավատորմ, Գերմանիան Տրիպոլիտանիայի համար մտադիր չէր վիճել իր դաշնակցի հետ, Անգլիան բարյացակամորեն էր վերաբերվում Իտալիային՝ ձգտելով նրան վերջնականապես պոկել Եռյակ միությունից»[43]: Ավստրո-Հունգարիային ընդհանրապես ձեռնտու էր Իտալիայի՝ Ադրիատիկի ափերից ուշադրության շեղումը դեպի արևմուտք՝ Հյուսիսային Աֆրիկա՝ Տրիպոլիտանիա: Ռուսաստանը դեմ չէր իտալական ձգտումներին: Դեռևս 1909 թվականին Ռակոնիջիում Իտալիան պարտավորվել էր «բարյացակամորեն վերաբերվել Ռուսաստանի շահերին Նեղուցներում»՝ փոխադարձաբար ճանաչելով Իտալիայի «հատուկ իրավունքները» Տրիպոլիտանիայում:

Այսպիսով, շրջագիծը փակվում էր «Եվրոպայի հիվանդ մարդու» և քրիստոնյա ժողովուրդների «հավերժական սպանդանոցի» շուրջ: Եվ ինչպես նկատել է Ավստրո-Հունգարիայում և Իտալիայում ռուսական ռազմածովային գործակալ Բոյլը, ***«տեղի ունեցավ զարմանալի բան. Իտալիան գնաց Թուրքիայի վրա Եվրոպայի ընդհանուր համաձայնությամբ»***[44] (ընդգծումը իմն է.- Լ. Շիրինյան): **Սկսվել էր Թուրքիայի արտամղումը Եվրոպայից:**

Ընդսմին, «Օսմանյան կայսրության արտաքին քաղաքական մեկուսացումը և պատերազմից ծնված ներքաղաքական ճգնաժամը մեծամասամբ պայմանավորեցին բալկանյան ժողովուրդների՝ թուրքական պետության դեմ հանդես գալու պահի ընտրությունը և բալկանյան առաջին պատերազմի սկիզբը»[45]:

Իրոք:

---

[42] **Могилевич А.** Итало-турецкая война.- Могилевич А. А., Айрапетян М. Э., На путях к мировой войне 1914-1918 гг., М., 1940, с. 91.

[43] **Могилевич А.** …, с. 92.

[44] Տե՛ս **Могилевич А.** …, с. 93.

[45] **Зябрилов В.** Итало-турецкая война - 1911-12.- “Большая Российская энциклопедия”, М., 2008, Т. 12, с. 216.

1912 թվականի հոկտեմբերի 18-ին Լոզանում (Ուշի) Տրիպոլիտանիան և Կիրենաիկան ստանում էին «լիակատար ինքնավարություն»: Իտալիայի «ժամանակավոր» տիրույթ էին անցնում նաև Դոդեկանեզյան կղզիները: Սկիզբ էր դրվում ապագա Լիբիայի անկախությանն ու նրա ժողովուրդների ազատագրության տևական գործընթացին: Նույն օրը, ի պաշտպանություն Չեռնոգորիայի, Բուլղարիայի և Հունաստանի մարտական գործողություններով սկսվում էր բալկանյան առաջին պատերազմն ընդդեմ նույն «Եվրոպայի հիվանդ մարդու»:

Բալկանյան պատերազմները, ինչքան էլ տարօրինակ թվա, Արևելքի քրիստոնյա ժողովուրդների՝ առաջին հերթին հույների և, հատկապես, հայերի համար աղետալի և թերևս անդառնալի հեռագնա երկրաքաղաքական հետևանքներ ունեցան...

«Թուրքերի կողմից ստրկացված Բալկանների ժողովուրդները,- գրում են Ա. Գ. Զադոխինը և Ա. Յու. Նիզովսկին,- ազգային ազատագրության ճանապարհ թեակոխեցին աստիճանաբար: Առաջին փուլում ձևավորվեցին կիսաինքնավար, այնուհետև ինքնավար Չեռնոգորիան և Սերբիան, ապա Վալախիան և Մոլդավիան, որոնք հետագայում միավորվեցին Ռումինիայի կազմում: 1830 թվականին անկախություն նվաճեց Հունաստանը: 1875-1878 թվականների Արևելյան ճգնաժամի արդյունքում անկախություն ստացան Սերբիան, Չեռնոգորիան և Ռումինիան, և ձևավորվեց ինքնավար Բուլղարիայի իշխանապետությունը, որը 1909 թվականին դարձավ անկախ: 1912 թվականին անկախության հասավ Ալբանիան: Վերջապես, Առաջին համաշխարհային պատերազմից հետո կազմավորվեց Հարավսլավիան՝ հարավային սլավոնների պետությունը»[46]:

Անդրադառնալով բալկանյան առաջին պատերազմի (9 հոկտեմբերի 1912 - 30 մայիսի 1913) նպատակներին և արդյունքներին՝ նույն հեղինակները գրում են. «Ոգևորված իրենց փայլուն հաղթանակներից՝ նրանք (Բալկանյան միությունը.- Լ. Շիրինյան) թուրքերի հետ բանակցում էին ծայրահեղ դաժանորեն. ***Թուրքիան պետք է ամբողջովին հրաժարվի իր բոլոր եվրոպական տիրույթներից***: Թուրքերը հուսահատ դիմադրում էին,

[46] **Задохин А., Низовский А.** Пороховой погреб Евролы. Балканские войны XX века. М., 2000, с. 19-20.

սակայն, հայտնվելով դիվանագիտական մեկուսացման մեջ, ստիպված էին համակերպվել դաշնակիցների բոլոր հիմնական պահանջներին»[47] (ընդգծումը իմն է.- Լ. Շիրինյան): Այնուհետև. «Օսմանյան կայսրությունը տապալված է: Սլավոնական ռեկոնկիստան (հետ նվաճելը.- Լ. Շիրինյան), որ սկսվել էր սերբական առաջին ապստամբությամբ, ավարտվեց թուրքերից Բալկանների լրիվ ազատագրումով[48]»: 1913 թվականի մայիսի 5-ին ստորագրվեց Լոնդոնի խաղաղության դաշնագիրը, «համաձայն որի՝ Թուրքիան կորցնում էր եվրոպական իր տիրույթները Էնեզ-Միդյա գծից հյուսիս, և ճանաչվում էր Ալբանիայի անկախությունը[49]»:

Անկախ այն բանից, որ բալկանյան երկրորդ պատերազմը բռնկվեց նախկին դաշնակիցների միջև, և այս անգամ ջախջախվեց Բուլղարիան, որի հետևանքով, ըստ «Բուխարեստի խաղաղության դաշնագրի (1913 թ. օգոստոսի 10) Բուլղարիան Ռումինիային զիջեց Հարավային Դոբրուջան, Հունաստանին՝ Հարավային Մակեդոնիան և Արևմտյան Թրակիայի մի մասը, իսկ Սերբիային՝ ողջ Հյուսիսային Մակեդոնիան, իսկ Կոստանդնուպոլսի խաղաղ դաշնագրով (1913 թ. սեպտեմբերի 29) Թուրքիային վերադարձրեց Արևելյան Թրակիայի մեծ մասը և Էդիրնեն (Ադրիանապոլիս.- Լ. Շիրինյան)»[50], թուրքերի ճակատագիրը Եվրոպայում կասկածելի էր. թուրք նախամարդը եվրոպական մտրակի հարվածների տակ իր արյունոտ հայացքը շուռ էր տալիս դեպի արևելք՝ Արևելյան Անատոլիա, որ նույնն է՝ հայության **սրբազան հայրենիք՝ Արևմտյան Հայաստան**:

Այլևս կանխորոշված էր հայության ապագան Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության ողջ տարածքում, հանգամանքների չարաղետ դասավորումով՝ այնուհետև նաև Այսրկովկասում:

Թերևս, Բալկաններից հետո անտես փոխվում էր միջազգային հավասարակշռությունը Օսմանյան կայսրության շուրջ: Ժամանակի ռազմավարական համայնապատկերի խորքային ընկալումով՝ քաջածանոթ անգլի-

---

[47]**Задохин А., Низовский А.** Пороховой погреб Евролы. Балканские войны XX века. М., 2000, с. 41:

[48] **Задохин А., Низовский А**. …, с. 42:

[49] Տե՛ս “Балканские войны 1912-13”. “Большая Российская энциклодедия”, М., 2005, Т. 3, с. 709.

[50] Նույն տեղում:

ացի պատմաբան Ալան Թեյլորը, արձանագրելով կայսրության շուրջ նշյալ տեկտոնական տեղաշարժը, գրում է. «Բալկանյան պատերազմների ավարտից հետո միջազգային հարաբերությունների վճռական հարցը դարձավ ասիական Թուրքիայի ապագան: ***Բալկանները մեծ հետաքրքրություն չէին ներկայացնում. Ասիայում բացվող հնարավորությունները թվում էին վիթխարի***: Այդ հարցը բաժան-բաժան արեց գոյություն ունեցող միությունները»[51] (ընդգծումը իմն է.- Լ. Շիրինյան):

Այսպիսով, բալկանյան պատերազմները ծայրահեղորեն սրեցին միջազգային հակասությունները՝ արագացնելով Առաջին աշխարհամարտի գալուստը: Այդ հակասությունները խոշոր տերությունների (Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Ավստրո-Հունգարիա) շահագրգռությունների ու խարդավանքների կենտրոնը տեղավորեցին ***Թուրքիայի սրտում՝ Կոստանդնուպոլսում և Փոքր Ասիայում***[52]:

Այս նույն շրջանում է, որ ծնծղաների ուղեկցությամբ կյանքի կոչվեց «հայկական բարենորոգումների ռուսական ծրագիրը[*]»՝ կոթնած Բեռլինի մեռնող տրակտատի 61-րդ հոդվածին: Ուշագրավ է այստեղ Վահան Փափազյանի (Կոմս) դիտարկումը. նախաձեռնությունը, գրում է նա, գալիս էր «Թիֆլիզի և Մոսկվայի առաջավոր հայ մտավորականությունից»: Այն «խորհրդակցություն կունենա ռուս կառավարության և Կովկասյան փոխարքայության հետ՝ Ռուսաստանի հովանավորությունը խնդրելու Հայկական բարենորոգումներու վերաբերմամբ, թե՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմե հեղինակավոր հայ հանրային գործիչներու թելադրությամբ՝ Կովկասյան փոխարքայի խողովակով, հիշատակագիր մը հանձնված էր Ռուսիո կայսրին, խնդրելով ***ստանձնել նախաձեռնությունը հայ դատի լուծման»:*** «Անակնկալ էր մեր ռուսահայ եղբայրներու այս քայլը»: «Հետաքրքրականը այն էր, որ բոլոր այս վճռական և ճակատագրական

---

[51] **Тейлор А. Дж.** Борьба за господство в Европе 1848-1918. Пер. с англ., М., 1958, с. 506.

[52] Տե՛ս **Тейлор А. Дж.** …, с. 506.

[*] Այս առնչությամբ տե՛ս **Коджоян Р.** Русская дипломатия и проблема реформ в Западной Армении накануне первой мировой войны. Автореф. к.и.н. Ер., 1990, 26 с., **Զաուպ Ն.** Գերմանական կայսրությունը և հայկական հարցը (1878-1914). Թարգմ. գերմ. Եր., 240 էջ, **Խաչատրյան Ա.** Կայսերական Գերմանիան և հայկական բարենորոգումները 1912-1914 թթ.: Եր,. 1999, 80 էջ:

քայլերուն ձեռնարկած էին, առանց գոնե ի տեղեկություն հաղորդելու Ազգային Պատրիարքարանին...»: Իսկ հաջորդիվ, ցավով խոստովանում է. «Մենք, անշուշտ, խորապես կգիտակցեինք մեր փափուկ դիրքը - ապրիլ Օսմանյան կայսրության մեջ, լինել անոր հպատակը, վայելել ազգային սահմանադրական ինքնավարություն, բնականոն հարաբերություններ պահել կառավարության հետ և միևնույն ատեն դավադիր գործ կատարել, այսինքն՝ օտար պետություններուն դիմել և անկե սպասել օգնություն: Անըմբռնելի հանդգնություն մըն էր այս, որուն արդյունքը վայելեցինք երեք տարի վերջը...»[53]:

Բալկանյան պատերազմները տարբեր գնահատականներ և հույզեր առաջացրին հայոց մեջ:

Առաջինը և գերիշխողը ավանդականն էր՝ գաղափարականը, առարկայազուրկը: Այս տեսակետը լավագույնս արտացոլված է Նիկոլ Աղբալյանի մտածումներում: Նա գրում է. «Շատերի հետ՝ մենք ևս մեր ուրախությունն ենք հայտնում կայացած հաշտության առիթով: Հայերը դարեր շարունակ տարել են թյուրքական լուծը. նրանք լավ են հասկանում, թե ինչ է նշանակում այդ լուծից ազատվել, և զարմանալի չէ, որ հազարավոր վերստեր հեռու՝ մենք սրտանց ուրախանում ենք բալկանյան ժողովուրդների ազատագրության համար»:

«Մենք ունենք ուրախության և մի ուրիշ պատճառ. Եվրոպական մեծ պետությունները խոստացել էին, որ Բալկանյան պատերազմի վախճանից հետո՝ կհարուցանեն հայոց հարցը: [Եվ գլուխկոտրուկ «կանխատեսումը» - Լ. Շիրինյան]՝ Ամեն նշաններից երևում է, որ պատիր խոսքեր չեն եղած այդ խոստումները: Բնական է այն ուրախությունը, որ պիտի զգա ամեն հայ՝ լսելով հաշտության լուրը, որովհետև բալկանյան հաշտություն՝ նշանակում է հայոց հարցի հարուցում և ո՞վ գիտե՝ գուցե նաև լուծում այնպիսի ձևով, որ հայությունը ազատվեր թուրքական լուծից... «Եվրոպական Թուրքիայի» ազատագրությամբ Եվրոպայի հանցավոր խղճից ընկնում է մի բեռ. մնում է մի ուրիշ ծանր բեռ - Հայաստանը և իր անհամար զոհերի արյունը...»[54]:

---

[53] **Փափազյան Վ.** Իմ հուշերը: Բեյրութ, 1952, հ.2, էջ 185-186:
[54] «Հորիզոն», 1913, թիվ 111:

«Եվրոպական Թուրքիայի» այդ ազատագրության համար կռվում էր նաև «հայկական կամավորական վաշտը (270 մարդ) պոդպորուչիկ Գ. Նժդեհի և վոյեվոդա Անդրանիկի (Օզանյան) հրամանատարությամբ»[55]:

Երկրորդը իրատեսականն էր, դոգմաներ չհանդուրժողը, թելադրված ազգային շահի գիտակցումով և Թուրքիայի շուրջ առաջացած հավասարակշռությամբ: Այն առավել քան պարզորոշ արտահայտել է Ռուբենը (Մինաս Տեր-Մինասյան): Հռչակավոր «Հայրենիք» (Բոստոն) ամսագրի հիմնադիր-խմբագիր Ռուբեն Դարբինյանը իր հուշերում գրում է. «Երբ Բալքանյան պատերազմը արդեն բավական առաջացած էր և թուրքերը պարտված էին, հանկարծ իրմե (Ռուբենից՝ Կ. Պոլիս- Լ. Շ.) ստացա նամակ մը, երկար նամակ մը, որուն մեջ խիստ հետաքրքրական մտքեր էր հայտնած և բախտորոշ առաջարկ մը կըներ: Ան կաշխատեր համոզել զիս, որ անկարելի էր զուտ դիվանագիտական ճանապարհով հետապնդել և լուծել Հայկական հարցը, ինչ որ ճիշտ էր, անկասկած: Բայց ան միաժամանակ կաշխատեր նաև համոզել զիս, որ չափազանց նպաստավոր պայմաններ ստեղծված էին այդ օրերուն՝ ապստամբություն մը կազմակերպելու համար Թրքահայաստանի մեջ: ***Պետք է, կըսեր, օգտվիլ թուրքերու պարտություններն և Բալքաններու մեջ և Պոլսո շուրջ չափազանց զբաղված ըլլալեն և ոտքի հանել Թրքահայաստանը»*** (ընդգծումը իմն է.- Լ. Շիրինյան): «Միաժամանակ կհաղորդեր, որ եթե ապստամբության ծրագիրը ընդունվեր, ինքը անմիջապես պիտի ձգեր Ժնևը և պիտի ուղևորվեր Թրքահայաստան՝ ապստամբության մասնակցելով»[56]: Հրաչ Դարպասյանը ևս վկայում է. «1912-ին Ռուբեն Ժնևեն երկար նամակ մը կգրե Ա. Չիլինգարյանին (Ռ. Դարբինյանին. - Լ. Շիրինյան) և կառաջարկե Պոլսո մեջ պաշտպանել իր ծրագիրը, այսինքն՝ ըմբոստանալ Հայաստանի մեջ՝ օգտվելով Պալքանյան պատերազմներեն»[57]: Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածին կոթնած հայությունը, անշուշտ, չօգտվեց պատեհ առիթից:

---

[55] Հայկական հարց: Հանրագիտարան. Եր., 1996, էջ 74: Տե՛ս նաև **Trotsky L.** The Balkan Wars (“Andranik and his Troop”). N.Y., 1980.

[56] **Դարբինյան Ռ.** Կյանքիս գրքեն: Բեյրութ, 1972, հ. Ա, էջ 421:

[57] **Դարբինյան Ռ.** ..., էջ 9:

Իսկ խելահեղ աշխարհը Բալկաններից հետո մղվում էր աշխարհամարտ: «Հայկական բարենորոգումների» նեցուկ և ներշնչող Ռուսաստանը գնաց իր տեսլականի հետևից՝ գերադասելով, ինչպես նկատում է Բ. Հ. Լիդլ Հարտը, «մեկուսացումը» և «չցանկանալով զոհաբերել Կոստանդնուպոլսի և նեղուցների անեքսիայի իր երազը»[58], իսկ Եվրոպայից արտամղված և ներքին հավասարակշռություն որոնող Թուրքիան հետևեց Հայկական հարցի վերջնական ու ամբողջական «լուծման» իր տեսլականին՝ գերադասելով Հայոց Մեծ եղեռնը երաշխավորող կայսրության՝ Գերմանիայի հետ դաշինքը: Այս առնչությամբ հայկական խնդրին քաջածանոթ Անդրե Մանդելշտամը գրում է. «1914 թվականի Մեծ պատերազմը երիտթուրքերի ղեկավարներին՝ Էնվերին, Թալեաթին, Ջեմալին, թվաց որպես իրենց բոլոր նպատակների վայրագ և անհապաղ իրականացման անսպասելի առիթ: Նրանք այդպիսով իրենց ազգին նետեցին թոհուբոհի մեջ Գերմանիայի կողքին՝ ունենալով հստակ որոշում՝ ազատվելու ամենից առաջ թուրքական պետության քրիստոնյա տարրերից և այդպիսով ամեն տեսակի *հումանիտար ինտերվենցիան* (ընդգծումն իմն է.- Լ. Շիրինյան) ապագայում դարձնելու անիմաստ»[59]: Ահա թե ինչու Թուրքիան որոնեց ու գտավ Արևելքում ազգային իր ձգտումները՝ միանալ ցեղակից-հավատակից ժողովուրդների հետ, երաշխավորող և հովանավորող խոշոր տերություն: Բնականաբար այդ երկիրը չէր կարող լինել Ռուսաստանը: Նման դերում հնարավոր չէր պատկերացնել Անգլիան կամ Ֆրանսիան: Այլ էին նրանց աշխարհակալական մղումները:

Այդ գերուժը կարող էր լինել և եղավ աշխարհակալության հայտ ներկայացրած, «Drang Nach Osten»-ը («Թռիչք դեպի Արևելք») որդեգրած Գերմանիան: Ահա այդ երկու կայսրությունների՝ Հոհենցոլերների և Օսմանցիների, չզարմանաք, տիտղոսակիր ժողովուրդների գիշատիչ բնազդների նույնականացման խաչմերուկում էլ ծնվեց թուրք-գերմանական զինակցության մասին 1914 թ. օգոստոսի 6-ի համաձայնագիրը:

---

[58] **Лиддел Гарт Б. Г**. Правда о войне 1914-1918 гг. Пер. с англ., М., 1935, с. 121.

[59] **Mandelstam A.** La Société des Nations et les Puissances devant le Problème Arménien. 2-eme edition, Liban, 1970, էջ 23:

Հիրավի, կտրուկ վատթարացող իրավիճակը հայոց համար բխում էր թուրք-գերմանական ձևավորվող դաշնադրությունից: Գերմանիայի դեսպան Հանս Ֆրայհեր Ֆոն Վանգենհայմի՝ ի դեմս Օսմանյան Կայսրության Մեծ Վեզիր Սայիդ Հալիմ Փաշայի 1914 թվականի օգոստոսի 5-ին ներկայացված պահանջի՝ ապահովել «փոքրիկ սրբագրում» Թուրքիայի արևելյան սահմանների վրա, որը նրան հարաբերության մեջ կդնի Ռուսաստանի մահմեդականների հետ, օգոստոսի 5-ին Բարձր Դուռ (կառավարություն) Մեծ վեզիրին փոխանցվեց Վանգենհայմի վեց կետանոց պատասխան-նամակը, որը բխում էր 1914 թվականի գերմանա-թուրքական «միության մասին պայմանագրից»: Ժամանակաշրջանի ռազմաքաղաքական խարդավանքներին քաջածանոթ Ե. Ֆ. Լուդշուվեյտը գրում է. ծանրության կենտրոնը գերմանական պարտավորությունների մեջ 1-ին կետն էր, որը նախատեսում էր «Գերմանիայի աջակցությունը՝ կապիտուլյացիաները վերացնելու գործում», բայց և այնպես վճռական դեր խաղաց 5-րդ կետը՝ «*Գերմանիան (Ռուսաստանին. - Լ. Շիրինյան) կստիպի Օսմանյան կայսրության սահմանները շտկել այնպիսի ձևով, որ Թուրքիայի համար ապահովվի անմիջական շփում Ռուսաստանում բնակվող մահմեդական ազգաբնակչության հետ*»:[60] «Այսինքն՝ ռուսական Հայաստանի նվաճում», ճշգրտում-մեկնաբանում է Վ. Գոտլիբը, անգլիացի քննախույզ հետազոտողը[61], այսինքն՝ տարածքային փոխհատուցում ռուսական կայսրության հաշվին: «Այդ կետի՝ գերմանական պարտավորությունների մեջ ընդգրկման վրա Սայիդ Հալիմ փաշան հատկապես պնդում էր՝ ցույց տալով, որ դա անհրաժեշտ է այն բանի համար, որ ընդունված որոշումների պաշտպանությունը խորհրդարանի և հասարակական կարծիքի առջև հեշտացվեր»[62]:

Ակնհայտ է՝ գրում է պատմաբան Ե. Ֆ. Լուդշուվեյտը. այդ կետի իմաստը Գերմանիայի կողմից երեք սանջակների (Բաթում, Արդահան, Կարս) գրավման հավակնությունների ճանաչումն էր, «որը այս կամ այն

---

[60] Տե՛ս **Mühlman C.** Deutschland und Türkei, 1913-1914. Berlin-Grünewald, 1929, pp. 96-97:

[61] Տե՛ս **Готлиб В.** Тайная дипломатия во время первой мировой войны. Пер.с англ., М., 1960, p. 51.

[62] **Лудшувейт Е.** Турция в годы первой мировой воины, 1914-1918 гг. Военно-политический очерк. М., 1966, с. 33.

չափով նշանակում էր համաթուրանական ծրագրի իրականացում»[*]: Սակայն, որպես խորհրդային պատմաշինարար, գրչի մի շարժումով հարցադրումը «բուն էությունից դուրս հանում է»[63] («вокруг до около»)՝ ծածկելով Ռուսաստանի այս կամ այն չափով մեղսակցությունը XX դարի առաջին և մինչև օրս չգերազանցված Ոճիրին՝ Հայոց Ցեղասպանությանը: Քանզի «համաթուրանական ծրագրի իրականացումը» ենթադրում էր «մահմեդական ժողովուրդների»՝ կովկասի թաթարների, Ատրպատականի թյուրքական ցեղերի, կումիկների, բալկարների, կարաչայների և այլոց հետ միավորում, վերացումը «հայկական թումբի», որ նույնն է՝ «*բարենորոգումների ռուսական ծրագրի…*»: «Այդ հոդվածով Գերմանիա վկայագիրը տված եղավ թրքական հետագա վայրագություններու ի կատար ածումի՝ ի խնդիր սահմանային սրբագրումներու»[64]: Այսպիսով, Թուրքիան Գերմանիայից ստանում էր, որպես Եռյակ միության դաշնակցի՝ ընդդեմ Անտանտի, իր ազգային իղձի՝ հայության բնաջնջման և Հայաստանի թուրքական տիրապետության հավերժացման Գերմանիայի երաշխիքն ու հովանավորությունը, նաև օրհնանքը:

---

[*] Ի վերջո, Թուրքիան հասավ իր առաջադրած հիմնախնդրի իրագործմանը՝ կենտրոնանալով Նախիջևան- Շարուր- Շահթախտի, այնուհետև Սուրմալուի Մայր Հայրենիքից օտարման վրա, 1920թ. Դեկտեմբերի 3-ի Ալեքսանդրապոլի պայմանագրով [հոդվ. 2. «Նախիջևանի, Շարուրի և Շահթախտի շրջաններում, որտեղ հետագայում հանրաքվեի միջոցով կհաստատվի հատուկ ադմինիստրացիա, Հայաստանը պարտավորվում է չմիջամտել այդ ադմինիստրացիայի կարգին, անկախ այն բանից, թե ադմինիստրացիան որ կողմը կթեքվի»], 1921թ. Մոսկվայի մարտի 16-ի պայմանագրով [հոդվ. 3. - «Երկու պայմանավորվող կողմերը համաձայն են Նախիջևանի մարզը… կազմի ինքնավար տերիտորիա՝ Ադրբեջանի խնամակալության ներքո, պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության»] և 1921թ. Հոկտեմբերի 13-ի պայմանագրով [հոդվ. 5. - «Թուրքիայի կառավարությունը և Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները համաձայն են, որ… Նախիջևանի մարզը կազմի ինքնավար տերիտորիա՝ Ադրբեջանի խնամակալության ներքո»]: Սկզբում դեմ լինելով ցարական Ռուսաստանին և պատերազմելով նրա դեմ, այնուհետև կողմ լինելով և համագործակցելով պանթյուրքիստ բոլշևիկների հետ՝ հենված Կովկասի թաթարների վրա՝ սերտ համագործակցությամբ վրացի թունդ նացիոնալիստների հետ: Էլ չենք խոսում Սուրմալուի գավառի մասին, որը չէր մտցվել նույնիսկ թուրքական «Ազգայինին ուխտի» (1920թ., հունվարի 28) մեջ:

[63] **Лудшувейт Е.** Турция в годы первой мировой воины, 1914-1918 гг. Военно-политический очерк. М., 1966, с. 33.

[64] Հանգամանորեն տե՛ս **Վարդան Լ.** Հայկական տասնհինգը և թուրք-գերմանական դաշինքը. «Հայկական հայագիտական հանդես», 1971, էջ 45-80:

Եվ այսպես, այլատյացությունը՝ արտահայտված հակամշակույթով՝ կոնկրետացած հայատյացությամբ*, Բալկաններից արձակված «թուրքական Եվրոպայի» ազատագրության թունավոր նետերը «ահարկու ողջակիզեցին» («ghastly holocaust»՝ Ջոզեֆ Հոքինգ, 1918թ.) հայությանն իր բնօրրանում՝ Հայաստան Հայրենիքում:

Եվ եռյակ համաձայնության՝ Անտանտի կառավարությունները Սանկտ Պետերբուրգում, Լոնդոնում և Փարիզում 1915 թվականի մայիսի 24-ին արձանագրելու էին. «Գրեթե մեկ ամսից ի վեր ***Հայաստանի*** քուրդ և թուրք բնակչությունը հայերին կոտորելու հարցում գործում է օսմանյան իշխանությունների թողտվությամբ և հաճախ աջակցությամբ: Այդպիսի կոտորածներ տեղի են ունեցել ն. տ. ապրիլի կեսերին ... (Արևմտյան Հայաստանի տեղանունների թվարկում.- Լ. Շիրինյան) և համայն Կիլիկիայում ... Միաժամանակ Կ. Պոլսում օսմանյան կառավարությունը դաժանորեն է վարվում անպաշտպան ***հայ բնակչության*** հետ»:

Եվ ի լուր ողջ աշխարհի ազդարարելու էին.

«Մարդկության և ***քաղաքակրթության*** դեմ ուղղված ***Թուրքիայի*** այս նոր ***հանցագործություններին*** ի տես՝ դաշնակիցների կառավարությունները հրապարակայնորեն տեղյակ են պահում Բարձր Դռանը, որ իրենք նշված հանցագործությունների համար անհատապես պատասխանատու կճանաչեն ***օսմանյան կառավարության բոլոր անդամներին***, ինչպես նաև նրա ***այն գործակալներին***, որոնք ներգրավված կլինեն համանման կոտորածներում» (ընդգծումներն իմն են.- Լ. Շիրինյան):

Վճռի իրագործումը ցայսօր մնում է օդում կախված ...

---

* Այդ մասին տե՛ս **Շիրինյան Լ.** Թուրքական էթնոֆոբիան և հայոց ցեղասպանությունը: Եր., 2011, 40 էջ:

Դարդանելի առասպելը* կամ ռազմավարական PR-ի թուրքական «Սև խոռոչը»

«Ռուսիա, նայած թե ի՛նչ է Թուրքիո դիրքը
Նեղուցների հարցում Ռուսիո հանդեպ,
կարող է լինել «կամ Թուրքիո առաջին
բարեկամը և կամ նրա առաջին թշնամին»:

[…] առավելաբար Նեղուցների հետքերով Ռուսիա
կամ բարեկամ և կամ թշնամի էր դառնում
եվրոպական պետությանց. բարեկամանում էր
նրանց՝ որոնք Նեղուցների հարցում իրեն
հետ էին, և թշնամի դառնում նրանց՝ որոնք իրեն դեմ էին:

… երբ [եվրոպական պետությունները] ուզում էին
Ռուսիան իրենց հետ ունենալ՝ դառնում էին զիջող
Նեղուցների հարցում. իսկ երբ այս բարեկամության
կարիքը սուր կերպով չէին զգում՝ համախմբվում և
խեղդում էին Ռուսաստանը Նեղուցների ջրերում (էջ 125):

Վ. Նավասարդյան
Նեղուցները (Վոսփոր և Դարդանել).
թրքական ջրուղիները և հայ դատը: Գահիրե, 1947

Վավերագրում ներկայացված է Առաջին աշխարհամարտի թուրք ռազմաքաղաքական գործիչ Վեհիբ փաշայի հուշերն ու գնահատականները համաշխարհային քաղաքական խաղի հանգույցներից «թրքական ջրուղիների» շուրջ անցած իրադարձությունների վերաբերյալ: Հեղինակի դատողությունների խորքից դուրս է ցցվում բնության և հասարակության մեջ անվրեպ գործող օրինաչափությունը՝ հավասարակշռության հաստատման մշտնջենական ձգտումը՝ կողմերից մեկին բերելով մահ, մյուսին պարգևելով երջանկություն, թեկուզև ժամանակավորապես:

---

* ***Դարդանելի գործողության վերաբերյալ լրացուցիչ խորհուրդ է տրվում կարդալ՝***

1. **Корбетт Ю.** Операции английского флота в мировую войну. Пер. с англ. Изд. 3–е, т. 2, М., 1997, 470 с.
2. **Нарочницкая Н.** “Восточний вопрос” и мировая политика. http://nash–sovremennik.ru/p.php?y=2004&n=10&id=3 /07/07/2014/.
3. **Շամլեան Ս.** Տարտանելի պատերազմը: Կ. Պոլիս, 1930, 400 էջ:

Առաջին աշխարհամարտի հարյուր ամյակի առնչությամբ, նրա ենթատեքստում՝ Թուրքիայի կողմից Արմենոցիդի չփոխհատուցված ոճիրի առնչությամբ, կարևոր են, բնականաբար, պատմական անցյալում կատարված (տեղի ունեցած) շատ իրադարձություններ. երբեմն պատմական ճշմարտությունը վեր հանելու, երբեմն խեղաթյուրումների շղթան ամրացնելու նպատակով: Այդ իրադարձությունների թվին են պատկանում «թրքական ջրուղիների» շուրջ ծավալված գործողությունները, նրանց տիրանալու խոշոր (շահագրգիռ) տերությունների խորքային դրդապատճառները, թուրքերի հաղթանակի, Անտանտի տերությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի աղետալի պարտության մոտիվացիայի և պատճառների ուսումնասիրությունը: Այս առնչությամբ շատ է գրվել անցյալում, սակայն, ինչպես կարելի է ենթադրել, ավելի շատ գրվելու է առաջիկա ամիսներին, հատկապես մինչև 2015 թվականի ապրիլի 23-ը, մինչև Հայոց Մեծ Եղեռնի հարյուրամյակի օրը՝ 2015 թվականի ապրիլի 24-ը: «Հաղթանակի» փաստը, թրքական ավանդույթով, խեղաթյուրվելու և շահարկվելու է անսահմանորեն, թերևս ձեռքի հետ հիմնավորելով նաև Արմենոցիդի (Հայասպանություն) օբյեկտիվ անխուսափելիությունը: Եվ՛ այլն, և՛ այլն: Ուստի նկատի ունենալով հարցադրման հույժ կարևորությունը՝ խորհող ընթերցողի ուշադրությանն ենք հանձնում ժամանակաշրջանի թուրք ռազմաքաղաքական գործիչներից Վեհիբ փաշայի խոստովանություն-մենախոսությունը՝ շարադրված և փոխանցված պատմագիտությանը անզուգական Ռուբենի ձեռամբ՝ որպես վավերագրի իր տեսակի մեջ եզակի մի օրինակ, շատ ավելի հավաստի, քան ստվարածավալ որևէ հետազոտություն: Եվ այսպես: ***Լ. Շիրինյան***

***

Ռոտոսթո՝ փոքրիկ, գեղեցիկ քաղաք մը, սրբատաշ քարերով շինված, համեստ և նեղ փողոցներով, որ կը հիշեցնե անցյալը, բայց կորած է ներկայի հոգերու մեջ: Քաղաքին զարդը գեղեցիկ ծովն է, որ իբրև հայելի ինկած է Սև և Արշիպեղագոս ծովերու միջև: Այդ ծովը Մարմարան է: Անոր մեկ ծայրը Վոսփորն է, իր Պոլսով, իսկ մյուս ծայրը՝ Տարտանելը՝ իր անցքով: Ծովի կեդրոնին վրա բարձրացած են համանուն Մարմարա

կղզիները, որոնք կնային ջուրերու մեջեն Վոսփորի և Տարտանելի նեղուցներուն և իրենց դեմ եվրոպական ափին բարձրացող Թեքիր Տաղ լեռներուն, որոնց ստորոտը կգտնվի Ռոտոսթո քաղաքը: Եթե Մարմարա կղզիները ծովի կեդրոնին վրա են, Ռոտոսթոն ալ ծովափի կեդրոնին վրա է: Այդ կետեն կսկսի Թեքիր Տաղ շղթան, որ կմտնե Արշիպեղագոս ծովուն մեջ և կգոյացնե Կելիպոլիի նեղ թերակղզին, որ արևելյան ափով Տարտանելի ջրանցքը կգոյացնե, իսկ արևմտյան ափով Քսերոս ծոցը կկազմե Արշիպեղագոսին մեջ: Այդպեսով, Ռոտոսթոն՝ համաշխարհային նշանակություն ունեցող Տարտանելի գլխուն կանգնած պահակ մըն է, իր Թեքիր Տաղ լեռներով: Մյուս կողմե ան միջին օղակն է Վոսփոր-Տարտանել նեղուցներուն, որոնց ճամբու կեսին կգտնվի: Դյուրին ճամբաներով կերթա դեպի Չորլու և Չաթալճա՝ մտնելու համար Պոլիս և հսկելու համար Վոսփորի անցքերուն և փակելու համար Եվրոպայի և Ասիո դուռները կամ բանալու համար զանոնք իր ուզածին պես:

***

Հոս ավելորդ չէ հիշել Վեհիպ փաշայի յուրահատուկ տեսակետները՝ Տարտանելի 1914 թվի կռիվներու մասին: Վեհիպ փաշայի մեծ եղբայրը՝ Էսատ փաշան առաջին մեծ պատերազմի ատեն Պոլսո և Տարտանելի վերին զորամասի պետն էր, իսկ ինքը Կելիպոլի-Քսերոս տարածության հրամանատարը: Ուրեմն, անոնց ձեռքին տակ էր որ տեղի ունեցավ թրքական հերոսամարտը, ուր հերոսացավ Մուսթաֆա Քեմալ փաշան և ուր պարտության մատնվեցավ ողջ Եվրոպան:

Երբ 1927-ին Վեհիպ փաշան ինձի հյուր էր եկած երկու շաբաթով, հարցուցի.

- Ի՞նչն էր հիմնական պատճառը ձեր հաղթության Տարտանելի մեջ և ի՞նչ էր պարտության պատճառը Եվրոպայի: Ձեր պատրաստությո՞ւնը, զենքի առավելությո՞ւնը, ձեր քաջությո՞ւնը, ձեր թվական առավելությո՞ւնը:

Ան պատասխանեց.

- Կամ հարցումիդ պետք չէ պատասխանել, կամ պետք է պատասխանել ճիշտը, քանի որ քեզի դժվար է կլլեցնելը: Ըսեմ ճշմարտությունը, որ դյուր պիտի չգա ոչ ոքի.

«Մեր պատրաստությո՞ւնը և զենքի առավելությո՞ւնը: Ոչ, իհարկե: Այդ առասպել է: Տարտանելի ամրությունները հին են և հարմարցված մեկ դար առաջ եղած զրահանավերուն: Անոնք կփոշիանային նոր զրահանավերու ռումբերեն: Ցուցանշան լինելով, ավելի վնաս կու տային քան օգուտ: Մենք նոր զրահավորներուն հարմարցված ամրություններ չունեինք և չունինք: Կելիպոլիի կռիվը խրամային կռիվ դարձավ մեզի համար:

«Մենք զինաթափ էինք անոնց զրահավորներուն դեմ, քանի որ մեր թնդանոթները անոնց թնդանոթներուն կես ճամբան իսկ չէին հասնիր. մեր գնդակները կհասնեին անոնց երբ զրահավորները արհամարհելով մեզ, կամովին մոտենային մեզի, կամովին մոտենային մեր թնդանոթներուն: Բայց մեր գնդակները կարողություն չունեին անոնց զրահները խորտակելու: Մենք ունեցանք հեռարձակ և սպաննիչ զենքեր գերմաններեն այն ատեն միայն, երբ Դաշնակից ուժերը որոշեցին թողնել Տարտանելը և հեռանալ: Հավատա՛ ինծի, մեր զինական գերակայությունը չէր պատճառը մեր հաջողության:

«Թվական առավելությո՞ւնը: Ոչ, ի հարկե: Այդ ալ առասպել է: Քեզի ըսի, որ Կելիպոլիի կռիվը դարձավ խրամային կռիվ: Կելիպոլիի տարածությունը այնքան փոքր է, որ կարելի էր խրամները լեցնել առ առավելն 40-50 հազար զորք. ավելի զորքին ոչ տեղ կա աշխատելու և ոչ ալ հնարավորություն պարենավորելու: Նույնքան և գուցե քիչ մըն ալ պակաս թշնամին կրնար օգտակար կերպով զորք տեղավորել: Երկու կողմերն ալ թվական առավելությամբ չէին կրնար մեկզմեկ ջախջախել: Միայն երկու կողմը կանգնած համարյա հավասար թիվով ուժերն էին, որ կրնային իրար բզկտել, բայց անկարող էին իրար բնաջնջել: Թիվը թեև անարժեք էր Կելիպոլիի մեջ, բայց անհրաժեշտ էր շուրջ 40.000 զինվոր միշտ լրիվ ունենալ երկու կողմին համար և ամեն օր սպաննվածներու և վիրավորներու տեղը նոր ուժ բերել: Ատով պետք է բացատրել, որ յուրաքանչյուր կողմ կես միլիոն զոհեր ունեցավ Տարտանելի կռիվներու ընթացքին, եթե չըսեմ մեկ ու կես միլիոն բոլորին համար:

«Այս սարսափելի սպանդի մեջ ամենասարսափելին անգլիացիներու և «անզակ»-ներու ֆութպոլ խաղալն էր ամեն մեկ կռվի ընդմիջումին, ինչ որ մեր վրա ճնշիչ տպավորություն կթողեր:

«Երրորդ հարցումիդ դժվար է ճիշտ պատասխանելը,- ծիծաղելով ըսավ Վեհիպ: - Եթե ճիշտը իմացվի, բոլորն ալ հերետիկոս, դավաճան ըսելով պիտի կախեն մեզ: Կհարցնես, թե Տարտանելի կռիվներուն մեջ խելքը, հերոսությունը, քաջությունը որո՞ւն կողմն էր: Եթե քեզի ըսեմ, որ Տարտանելի մեջ մեր կողմը ո՛չ խելքի, ո՛չ հերոսության և ոչ ալ քաջության անհրաժեշտությունը կար, պիտի չհավատաս: Այդ բոլորը անհրաժեշտ էին, սակայն մեր հակառակորդ կողմին. անոնք ալ այդ չունեին»:

Ձմեռ էր այս խոսակցության ատեն: Սալամանդր վառարանը հանգիստ կվառեր: Ես ներողություն ըսելով՝ ելա քիչ մը քարածուխ ավելցնելու համար: Վեհիպը հարցուց.

- Այդ Սալամանդր վառարանը լա՞վ վառարան է:

- Հիանալի վառարան է:

- Դուն անոր շինելը կամ անոր մեքանիզմի սկզբունքը գիտե՞ս:

- Շինելը, իհարկե, չեմ գիտեր և վառվելու սկզբունքով ալ չեմ հետաքրքրված, բայց փորձով գիտեմ, որ շատ լավ կվառի:

- Բայց դյուրի՞ն է զայն կառավարելը,- հարցուց:

- Կառավարելու բան ալ չկա: Պիտի նայիս, որ մեջի քարածուխը չվերջանա և նորը լեցնելու ես, երբ վերջանալու վտանգը կա:

- Մեկ հարցում ալ. ամեն տեսակի քարածուխ կվառի՞ այդ Սալամանդրի մեջ:

- Ամեն տեսակն ալ կվառի,- պատասխանեցի:

- Մեկ հարցում ալ, և այլևս ես հարց չունիմ: Այդ քարածուխները, որ կլեցնես, պատահե՞ր է, որ ապստամբին, ուզեն դուրս փախչիլ հնոցեն և դժկամակին իրենց վառվելեն: Երբ զարմացած անոր երեսին կնայեի, ան կծիծաղեր վրաս:

- Դուն կարծեցիր թե այդ վառարանը ես առաջի՞ն անգամ տեսած եմ: Քեզմե ավելի լավ գիտեմ անոր կազմությունը: Ես գործածած եմ զայն: Իմ հարցումներով ես կուզեի հասկցնել քեզի Տարտանելի մասին քու հարցերուդ պատասխանը: Բայց դուն չհասկցար: Իբրև պատիժ՝ բաժակս լից, ես

բացատրեմ: Խմեց մեկ ումպով մեկ բաժակ կոնյակ և սկսավ բացատրել. «Կելիպոլիի թերակղզին նկատե նեղ սրվակ մը: Ան կողողվի մեր ձեռքը մնացած Մարմարայի ջուրերով և Մուրատ Չայի լայնքով՝ Տարտանելի անցքով, որ լեցված էր ականներով: Իսկ մյուս կողմե՝ կողողվի Արշիպե-ղագոսի և Քսերոսի ծոցի ջուրերով, որոնք լեցված էին ֆրանսական, անգլիական և այլ զրահանավերով: Այդ սրվակի նեղ վիզը և բերանը, որ ցամաքի հետ կկապե զայն, Թեքիր Տաղի լեռներն են, որոնք հազիվ թե քանի մը քիլոմեթր տրամագիծ ունին՝ լայնալով Քսերոսի ծոցին շուրջ և միանալով ցամաքամասին. անոնք հարմար են ճակատամարտի համար և կռվելու ասպարեզ կբանան իրենց շրջապատին մեջ: Ճիշտ այդ կետին վրա ես նստած էի. մեկ կողմեն, ամեն վայրկյան կսպասեի, որ թշնամին ցամաքահանում պիտի ընե և պիտի ջանա խլել Կելիպոլիի բերանը, իսկ մյուս կողմեն՝ այդ բերանեն ես ներս կլեցնեի սրվակին մեջը (Կելիպոլիի) լինի ցամաքով, լինի Մարմարա ծովով, օրական 10-30.000 զորք, հոն վառ-վելու համար: Այդ սրվակին մեջ լեցվողը ետ չէր կրնար դառնալ. ան պիտի վառվեր, և անոր միայն մոխիրը ետ կու գար, իբրև դիակ և վիրավոր: Կելիպոլիի հնոցին մեջ ինկողներեն միակ երջանիկները անոնք էին, որ շատ ծանր վերքեր կստանային և անպետք կդառնային նորեն այդ հնոցին մեջ ձգվելու համար»: Քիչ մը ծանր շունչ առնելե և ծխախոտը վառելե ետք, ան վերսկսավ իր պատմությունը՝ խեղդելով իր հուզումները.

- Դուն շատ հիացած կերևաս Կելիպոլիի կռվողներու և հերոսներու վրա և մանավանդ Քեմալի վրա: Նախանձ չէ ըսածս, քանի որ անոնք իմ ձեռքի տակն էին և անոնց վերագրվածները վերջ ի վերջո ինծի կու գան: Բայց առանց զգացմունքի եթե դատենք, սրվակ մը որուն մեջ ինկողը, լինի լավ թե վատ, լինի վախկոտ թե քաջ, լինի խելոք թե անխելք, դատապարտված է հավասար կրակով վառվելու անխտրականորեն, ոչ մի առաքինություն չի ցուցադրեր: Երբ կանխորեն որոշված է թե ուր պիտի նստիս, ուր պիտի կռվիս, ինչ պիտի կռվիս և, հակառակորդ սպաննելեն ետք, ինքդ ալ պիտի սպաննվիս, այդ կդառնա մեքենական աշխատանք, ուր ո՛չ հերոսություն, ո՛չ խելք, ո՛չ քաջություն անհրաժեշտ է: Այդ բոլորը անհրաժեշտ էին զրահավորներու մեջ նստածներուն համար. իսկ մեր կողմը, որ բռնած էր Կելիպոլիի բերանը և կսպասեր Քսերոսի ծոցի

ցամաքահանման, պատեհություն չունեցավ ցույց տալու որևէ առաքի-նություն, մինչ առաքինությունը պակսեցավ թշնամիին: Ահա քեզի Կելիպոլին:

Երբ ես տարակուսանքով կնայեի անոր, «իհարկե, անհավատալի և սարսափելի կերևան քեզի ըսածներս», ըսավ ժպտելով, և քաշեց իր սիկարեթը:

- Համոզիչ չէին ըսածներդ, կներես, որովհետև կարծես թե այդքան զրահանավեր, որ խորտակեցիք, իրենք իրենց խորտակվեցան: Կարծես վեց միլիոն զորքեր անտեղի կերպով բերած եք և զոհաբերած՝ առանց նպատակի: Կարծես թե Անգլիա, Ֆրանսա չեն ուզած հաղթել և իբրև ոճրագործներ իրենց բանակի գլխուն արյունալի խաղ մըն են խաղացեր: Անոնց հաղթողը դուք չե՞ք եղեր, անարժե՞ք եղեր են ձեր տված կես միլիոն զոհերը: Տարտանելի մեջ կատարվածը անհաշիվ ոճի՞ր մըն է եղեր երկու կողմերուն համար ալ: Վեհիպը տաքացած ըսավ.

- Առաջին ըսածդ ճիշտ է, իսկ երկրորդը՝ սխալ: Ես արդեն ըսի, որ Դաշնակիցները հիմար գտնվեցան կամ, եթե հիմար չէին, գիտակցական ոճրագործներ եղան իրենց հարազատ զորքին: Տարտանելը փակ դուռ մըն էր: Մտնելու համար նեղուցները՝ կամ պետք էր այդ դուռը կոտրել և մտնել, և կամ պետք էր այդ դռան բանալին գտնել և բանալ ու մտնել: Ուրիշ միջոց չկար: Առանց բանալիի՝ դուռները ջարդելով հնարավոր էր մտնել նեղուցները, որովհետև մենք հեռարձակ թնդանոթներ չունեինք: Թշնամին հեռուներեն կրնար մեզ լռության մատնել և մտնել նեղուցները՝ հոգնություն հանձն առնելով մաքրելու ականները: Թշնամին այդ գիտեր և այդպես ալ փորձեց ու, հաջողության ամեն գրավական ունենալե հետո, իր ձեռք բերած հաջողությունը իր ձեռքով ձախողեցուց: Նախ՝ կեդրոնացած նավային կրակով լռեցուց մեր ամրությունները, երկրորդ՝ մեր բախտեն նավային ուժերուն գլուխը դրավ ֆրանսական զրահանավերը, իսկ անոնց ետևեն՝ անգլիացիները: Երրորդ՝ ֆրանսական զրահանավերը առաջ քշելով՝ մտցուց Տարտանելի մեջ հաջողությամբ: Սակայն, պատահեցավ մեզի համար անսպասելին: Հաջողության մեջ անոնք թողին և իրենց զրահանավերով հեռացան նեղուցներեն: Գիտե՞ս ինչու: Ֆրանսական ղեկավարությունը իբրև ավելի սնափառ, առաջինը կուզեր լինել Տարտա-

նելին տիրողը և Պոլիս մտնողը, իսկ անգլիական ղեկավարությունը ատոր կվերաբերեր հետին հաշիվներով: Երբ ֆրանսական քանի մը զրահանավեր վնասվեցան և անհույս դարձան,- այդքան վնաս անխուսափելի էր,- անգլիացիք իսկույն եզրակացություն հանեցին, թե անհնար է նավատորմիղով տիրապետել Տարտանելին, թեպետ ան արդեն տիրապետված կրնար լինել փոքրիկ ճիգով մը:

«Հրաման տվին քաշվելու, հակառակ ֆրանսացիներու տրտունջին, թե մեզ առաջ ձգեցիք և մշակված ծրագիրը կլքեք: Անգլիացիք չուզեցին զրահանավերով մտնել Տարտանել և Պոլիս: Անոնց հաշիվն էր, թե որո՞ւ համար տիրենք Տարտանելին, քանի որ Պոլիսը և Նեղուցները խոստացված են Ռուսիո: Որով իրենց զոհաբերությունը պիտի ծառայեր Ռուսիո տիրապետության:

«Ավելին ըսեմ: Գերմանացիք ևս կուզեին, որ անգլիացիք տիրեն Տարտանելին և գան Պոլիս, թեպետ մեր զինակիցներն էին: Ինչքան հեռարձակ թնդանոթ կուզեինք Տարտանելի համար, անոնք կձգձգեին, թեքնիք և այլ պատճառներով: Բայց երբ պարզ եղավ, թե անգլիացիք այլևս պիտի չգան, թնդանոթները առատորեն եկան: Գիտե՞ս ինչու: Գերմանները կհուսային անգլիացիներու մուտքով Պոլիս, ճեղք մը բանալ ռուսերու և անգլիացիներու միջև:

«Այս բոլորեն մեկ բան պարզ էր. Տարտանելը բռնությամբ մտնելու անհնարությունը տարածվեցավ, ինչ որ առասպել և սուտ էր առաջին շրջանին, իսկ իրական եղավ, երբ անոր վրա ծովով հարձակող չկար: Պարզ էր մեզի համար, որ, գոնե ծովով, անգլիացիք չեն ցանկար մտնել Տարտանել: «Իսկ ցամաքով Տարտանելին տիրելու ճանապարհը Կելիպոլիի թերակղզին չէր, այլ այդ թերակղզիի գլուխը, ուր ես նստած էի, հսկելով Քսերոսի ծովախորշին Թեքիր Տաղի փեշերեն: Այդ տեղեն է որ կարելի էր ցամաքով երթալ և տիրապետել Կելիպոլիի թերակղզիին, ուր մեր ուժերն էին կեդրոնացած, քանի որ իշխելու բանալին հոն թաքնված էր: Բայց ի զուր կսպասեի մեզի համար ճակատագրական այդ կետի վրա: Մեզ հանգիստ կթողնեին: Եթե հիմար չլինեին, կամ ավելի ճիշտը՝ եթե լրջորեն ցանկային Տարտանելին տիրել, փոխանակ յուրաքանչյուր օր զոհաբերելու 20-30 հազար մարդ Կելիպոլիի թերակղզիին մեջ, այդ զորքերը կհատ-

կացնեին Սերոսի ծոցեն զարնելու թերակղզիի վիզին և գազաթին: Այդ պարագային մեր ուժերը հոն ուղարկելը, մեր պարենավորումը անհնար պիտի ըլլար, և Կելիպոլին ինքն իրեն պիտի իյնար և Նեղուցները պիտի բացվեին: Բայց ըսի, որ անգլիացիներու բուն նպատակը Նեղուցները տիրապետելը չէր, այլ Նեղուցներու մեջ մեզ զբաղեցնելը և մեզ մաշեցնելը: Այդ նկատեցինք: Ես համոզված էի ատոր մեջ: Ատոր համար է որ մեր ուժերը թեթևցուցինք Տարտանելի շրջանեն, և ես ուզեցի հեռանալ նոր ճակատ մը, ուր պարտվիլ և հաղթել հնարավոր էր: Եվ ես եկա Կովկասյան ճակատ՝ ձեզի և ռուսերուն հաղթելու համար»:

Վեհիպ փաշայի այս դատողությունները ջանացի հնար եղածին չափ հարազատորեն հոս բերել՝ ցույց տալու համար Ռոտոսթոյի կարևոր նշանակությունը Պոլսո և Նեղուցներու համար:

Ռուբէն (Տեր-Մինասյան), Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր Զ, Կարսէն՝ Պոլիս (1909), Թեհրան, 1982, էջ 253-260:

Եզրակացություն

«Հայկական հարցի էվոլյուցիայի ելևէջներից» հիմնախնդրի շրջանակներում ուսումնասիրված նյութի արդյունքում կարելի է առանձնացնել հետևյալ եզրակացությունները:

Հայաստանը «Եվրոպական համանվագի» աքցաններում (համանվագի մոդելը) խնդրի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ «Համանվագի» շրջանակներում տիրապետող էր բացարձակ անվստահությունը: Այսպես, օրինակ, Բեռլինի կոնգրեսին (1878թ.) և Բալկանյան պատերազմներին հաջորդող շրջանները «լեցուն» էին վախով, այն ըմբռնումով, որ երկրներից մեկը՝ գլխավորապես հետաքրքրված Բալկաններով, կարող էր այդ տարածաշրջանում ձեռք բերել ավելի մեծ ազդեցություն, քան շահագրգիռ այլ ուժերը:

Հայկական հարցի տեղափոխումը Բեռլինի կոնգրես, այն է՝ համանվագի գործառույթի շրջանակներ, քայքայվող Օսմանյան կայսրության թունդ ազգայնամոլ ու ցեղապաշտ ռազմաքաղաքական վերնախավին

թույլ տվեց շունչ քաշելով վերջնականորեն ճշգրտել կայսրության պահպանման ռազմավարությունը և նրա ենթատեքստում՝ Հայաստանի ոչընչացման երկրառազմավարական ուղղությունը: Եվ այդ ուղեգիծը նույն հետևողականությամբ, սակայն տարբեր հաջողությամբ, իրականացրին Համիդը, Էնվեր-Թալեաթ-Ջեմալ բանդան և ռասիստ Քեմալը: Թուրքական չարագործ պետական հանճարը գնաց թուրքական «վաթանի» («հայրենիք») որոնման ճանապարհով:

Ճիշտ է, որ Հայաստանի ոչնչացման ռազմավարությունը կոնկրետ ուղղորդում ստացավ Բեռլինի կոնգրեսի մեխանիզմներում, սակայն նրա ամուր հիմքերը «դրվել էին» Փարիզում (1856 թվական, Փարիզի հաշտության կոնֆերանս, մասնակիցներ՝ Ռուսաստան, Ավստրիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Սարդինիա, Թուրքիա, Պրուսիա), երբ Թուրքիան ընդունվեց եվրոպական խոշոր տերությունների «ընտանիք», միջազգային երաշխավորությամբ ապահովվեց Օսմանյան կայսրության տարածքային անձեռնմխելիությունը:

Սակայն խնդիրը չարագույժ ուրվագիծ ձեռք բերեց Բեռլինի կոնգրեսից հետո. Հայաստանի ոչնչացման ծրագիրը ամենայն հստակությամբ առաջին անգամ որոշակիորեն ձևակերպեց Աբդուլ Համիդի կառավարության ղեկավար Քյամիլ փաշան:

Այդուհանդերձ, հայկական գործոնը պահպանեց իր գոյությունն ու կենսունակությունը՝ արդեն որպես պետական կազմավորում, սեպի նման խրվելով թուրանական գորշ աշխարհի սիրտը և բաժանելով այն երկու մասի ու դրանով իսկ արժևորելով Հայաստանի Հանրապետության ռազմավարական նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության համար:

Հայոց հարցի բալկանյան շրջադարձը (երկրաքաղաքական էտյուդ) խնդրի ուսումնասիրությունը հանգեցրեց հետևյալ եզրակացություններին:

Օսմանյան կայսրությունը XX դար թևակոխեց տարածքային զգալի կորուստներով: Բեռլինի կոնգրեսի (1(13) հունիսի - 1(13) հուլիսի 1878) սահմանած հավասարակշռությունը կորցնում էր իր ներքին կայունությունը: Փարիզի խաղաղության տրակտատով (18(30) մարտի 1856 թ.) Թուրքիային տրված անձեռնմխելիության երաշխիքները անտես «գոլոր-

շիանում էին»: Առաջինը, որ խախտեց «տաբուն», հզորության գագաթնակետ մագլցող Իտալիան էր:

1912 թվականի հոկտեմբերի 18-ին Լոզանում (Ուշի) Տրիպոլիտանիան և Կիրենաիկան ստանում էին «լիակատար ինքնավարություն»: Իտալիայի «ժամանակավոր» տիրույթ էին անցնում նաև Դոդեկանեզյան կղզիները: Սկիզբ էր դրվում ապագա Լիբիայի անկախությանն ու նրա ժողովուրդների ազատագրության տևական գործընթացին: Նույն օրը, ի պաշտպանություն Չեռնոգորիայի, Բուլղարիայի և Հունաստանի մարտական գործողություններով սկսվում էր բալկանյան առաջին պատերազմն ընդդեմ նույն «Եվրոպայի հիվանդ մարդու»:

Թուրքերի ճակատագիրը Եվրոպայում կասկածելի էր. թուրք նախամարդը եվրոպական մտրակի հարվածների տակ իր արյունոտ հայացքը շուռ էր տալիս դեպի արևելք՝ Արևելյան Անատոլիա, որ նույնն է՝ հայության **սրբազան հայրենիք՝ Արևմտյան Հայաստան**:

Այլևս կանխորոշված էր հայության ապագան Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության ողջ տարածքում, հանգամանքների չարաղետ դասավորումով՝ այնուհետև նաև Այսրկովկասում:

Եվրոպայից արտամղված և ներքին հավասարակշռություն որոնող Թուրքիան հետևեց Հայկական հարցի վերջնական ու ամբողջական «լուծման» իր տեսլականին՝ գերադասելով Հայոց Մեծ եղեռնը երաշխավորող կայսրության՝ Գերմանիայի հետ դաշինքը:

Եվ այսպես, այլատյացությունը՝ արտահայտված հակամշակույթով՝ կոնկրետացած հայատյացությամբ, Բալկաններից արձակված «թուրքական Եվրոպայի» ազատագրության թունավոր նետերը «ահարկու ողջակիզեցին» («ghastly holocaust»՝ Ջոզեֆ Հոքինգ, 1918թ.) հայությանն իր բնօրրանում՝ Հայաստան Հայրենիքում:

<u>Դարդանելի առասպելը կամ ռազմավարական PR-ի թուրքական «Սև խոռոչը»</u> խնդրի ուսումնասիրության կարևորությունը առավելապես ընդգծվում է Առաջին աշխարհամարտի հարյուր ամյակի առնչությամբ, նրա ենթատեքստում՝ Թուրքիայի կողմից Արմենոցիդի չփոխհատուցված ոճիրի առնչությամբ: Բնականաբար, կարևոր են պատմական անցյալում կատարված (տեղի ունեցած) շատ իրադարձություններ. երբեմն պատմա-

կան ճշմարտությունը վեր հանելու, երբեմն խեղաթյուրումների շղթան ամրացնելու նպատակով: Այդ իրադարձությունների թվին են պատկանում «թրքական ջրուղիների» շուրջ ծավալված գործողությունները, նրանց տիրանալու խոշոր (շահագրգիռ) տերությունների խորքային դրդապատճառները, թուրքերի հաղթանակի, Անտանտի տերությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի աղետալի պարտության մոտիվացիայի և պատճառների բացահայտումը:

Դարդանելի ճակատամարտում թուրքական հերոսամարտերի առասպելը պայմանավորված էր ոչ թե թուրքական ռազմական հանճարով, թուրքական զորքի թվային գերակշռությամբ, այլ գերտերությունների՝ հատկապես Անգլիայի գլխավորությամբ երկրառազմավարական հաշվարկներով:

VARIATIONS OF EVOLUTION OF THE ARMENIAN QUESTION
(Resume)

Levon Shirinyan

Although a century has passed since the genocide, but nevertheless revealing its real content is still quite in the air. There are different reasons. But there is the issue of research methodology among them: it seems to us as an understanding of true chosen method that can lead us to the exact conclusions. In this case the theory of balance is commented within the framework of political realism.

When the Tiger of France, Georges Clemenceau, entirely protecting interests of France and opposing to the US President Woodrow Wilson's peace plan and to his tremendous efforts of the ancient world reconstruction at the Versailles Conference, announced that he had confidence before the existing security system for the safety of France (from times of Cardinal Richelieu (1585-1642) - *L. Shirinyan*) based on 1) military potential of the country, 2) balance of power, 3) allied relations with other countries.

Perhaps even 100 years later after G. Clemenceau, it's hard to add anything new to this statement, if not noticed it yet, as individual states (countries), nations, as comprehensive global system (the same as in this case), and the evolution of three factors of harmonious world "Game" remains unchanged, with a reserve, which plays the key role of "unchangeable law "(by Rafael de Nogales) of the balance of power. However, that law "requires a rational norms and will always be a demand for uninterrupted performance" not only in living matter, but also as refers to the stability of the situation of ethnic units, which according to Nogales are called, "civilized nations".

Moreover, the global development, or it would be better to say, the world order revolves around the “unchangeable law” axis, as it understood the XVIII century French theologist, writer and priest Francois Fenelon (1651-1715); this is the balance of power as a recurring and changing, but not exclusive and permanent element.

Of course, Henry A. Kissinger "well informed" to the logic of World Development, had right to write, «in XVII century, during the reign of Cardinal Richelieu France put the start to the modern international relations, which was based on the nation-state with its national interest as an ultimate goal. In XVIII century, the Great Britain has developed the idea of a balance power which has dominated into the European diplomacy about two hundred years. In XIX century Austria of Metternich epoch rebuilt "European Concert", but Germany of Bismarck epoch has dismantled it, turning the diplomacy of European politics into a cold-blooded power game".

H. Kissinger writes: "In each century, there is a logical changeability of tectonic movements. It seems to be following some kind of natural law, which comes from a single country, having capacity, a will, intellectual and moral impulses which are necessary to comply the international relationships with its own values.

It is obvious, that the intrigue is settled into the balance of "unchangeable law" and "such kind of natural law" is the same law of balance. Perhaps firstly it is known by Henry A. Kissinger who conducted his unique thesis of master’s degree written in Harvard, 1957.

However, the thing does not (allegedly) says Kissinger, it perfectly sets out German lawyer Lassa Francis Lawrence Oppenheim, when touching upon the balance of "unchangeable law" and the balance of its axis function. L. Oppenheim explains "Law of Nations (read: International Law, *L. Shirinyan*) can exist only if there is a balance of power among the nations family (read: the International Community, *L. Shirinyan*). If countries are not able to inhibit one another, each typically does not have the force of law, because the superpower state will certainly try to act on their own discretion and violate the law. As there can never be a central political authority, standing above the sovereign states that fail to keep the law of nations. The balance should obstacle any member of the family of nations to become "omnipotent". "Then L. Oppenheim explains after formulating the rule: "The History of Louis XIV and Napoleon I epoch illustrates the principle of common sense (how much it is reasonable for smaller countries or stateless peoples, is another question, *L Shirinyan*) [...] Since 1648, the Peace Treaty of Westphalia, the principle of balance of power played the ruling role in the history of Europe". At the same time, L. Oppenheim emphasizes: "Either the Europeans, or the most writers [on same subject] agree that <u>intervention for maintaining the balance of power</u> (intrusion, interference, *L. Shirinyan*) <u>is permitted</u> (the underline is mine, *L. Shirinyan*)".

The vital issue for Armenia and Armenians that Turks as Muslims can be a key element of balance and can find a place in the family of European nations: the found its first positive resolution in the French monarchy. Francois I (1515-1547) "finds appropriate to sign an alliance agreement with Kanuni Sultan Suleiman (1520-1538)". René Pinon writes. "The policy of balance of Europe has finally dominated on the Crusaders' idea ..."

This is a period of historical and political variations, which is called a system of balance of power in Europe. It was born in XVII century as a result of final collapse of hopes concerning the concept of universality of medieval world which is the fusion of traditions of Roman Empire and Catholic Church. The world was imagined as a mirror reflection of the sky. As God rules in the heaven, the emperor should rule in the secular world, and the Pope - in the universal Church.

If the first principle, formulated by G. Clemenceau seems to be clear, then the third is vital since the beginning of state building. Brahman Kautilya (IV-III century. BC), the ancient Indian thinker, especially, indicated the necessity of alliance with other countries. This is the fifth of six methods of foreign policy of "Arthashastra".

P.S. What were written by German lawyer L. Oppenheim, political thinker and technologist H. Kissinger, which G. Clemenceau tried to realize, were given a meaning by Ruben (Minas Ter-Minasyan), close comrade-in-arms to Aram (Sargis Hovhannisyan - an eminent political and military actor, a unique political thinker of the First Armenian Republic), who was rejecting the political orientation in the variable world where countries are leading only with 1) the permanent (fixed) interests and the establishment of variable (unstable) alliances and coalitions; 2) the expectation of leaders who have power and will as well as intellect and moral impulses.

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՔԵՏԻՊԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Էմիլ Օրդուխանյան

Հայերի ցեղասպանությունը, լինելով 20-րդ դարում մարդկության և քաղաքակրթության դեմ կատարված առաջին խոշոր հանցագործությունը, ուսումնասիրվել է տարբեր տեսանկյուններից: Սակայն թուրքական հետևողական ժխտողականության և տարբեր տերությունների երկրաքաղաքական շահերի պատճառով նույնիսկ 100 տարի անց այն շարունակում է մնալ որպես 20-րդ դարի առաջին և չճանաչված ցեղասպանությունը: Իհարկե, հայերի ցեղասպանության մասին վկայությունները և փաստերն առավել քան խոսուն են, ինչի մասին վկայում է բազմաթիվ պետությունների կողմից հայերի ցեղասպանության փաստի ճանաչումը տարբեր մակարդակներով և տարբեր ատյաններում: Սակայն ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում մասնակի ձեռքբերումները դեռևս բավարար չեն խնդրի ամբողջական և արդարացի լուծման համար: Իսկ այդ լուծմանը տանող միակ արդյունավետ ճանապարհը կարող են լինել Հայաստանի Հանրապետության և ամբողջ աշխարհում «հայկական գործոնի» հզորացմանն ուղղված համատեղ ջանքերը, քանի որ խնդրի իրավական լուծման համար բացառապես անհրաժեշտ են քաղաքական նախադրյալներ: Միջազգային հարաբերություններում, ինչպես ցույց է տալիս փորձը, հիմնականում բավարարվում են ուժեղների իրավական պահանջները, իսկ մյուսների պահանջները խճճվում են միջազգային հարաբերությունների անընդհատ մեծացող թնջուկում: «Ուժեղներ» ասելիս պետք է նկատի ունենալ սուբյեկտի ընդհանուր ներուժը՝ տնտեսական, մտավոր, ռազմական և այլ: Մտավոր ռեսուրսի տեսակարար կշռի բարձրացումն այսօր հայերի ցեղասպանության ճանաչման գործում բավականին կարևոր է: Պատմագիտական ուսումնասիրությունների հետ մեկտեղ այսօր խիստ պահանջ կա հայերի ցեղասպանության վերաբերյալ իրականացնել իրավագիտական, սոցիոլոգիական, քաղաքագիտական և տնտեսագիտական լուրջ ուսումնասիրություններ, ինչը թույլ կտա ոչ միայն տեսական հարթությունում, այլև գործնականում պահանջատիրության հարցը դնել ավելի կայուն հիմքերի վրա:

Հայերի ցեղասպանության կրոնական տեսանկյունը

Օսմանյան կայսրության մեջ կրոնական տարբերությունները պայմանավորված էին բնակչության բազմաէթնիկ կազմով: Իրենց զավթողականությամբ օսմանցիները տիրացել էին տեղաբնակ ազգերի նյութական և հոգևոր ժառանգությանը, իսկ բնիկներն ունեին իսլամից տարբերվող կրոնական պատկանելություն: Նրանք մեծապես քրիստոնեական արժեհամակարգի կրողներ էին՝ հայերը, հույները, ասորիները: Սակայն, այնուամենայնիվ, իսլամական կրոնը, որը զավթիչների դավանանքն էր, գերակա էր կայսրության ողջ տարածքում:

Ռուբենը գրում է. « ... Օսմանէն սկսած անոր յաջորդները տարեկան 40,000 երեխաներ կը հաւաքէին իբր տուրք, եւ այս ապազգային մանուկներ էին, որ մեծանալով ստեղծեցին կայսրութիւն ու զինուոր. բանակ ժողովուրդ մը: Քրիստոնեաներէն իբր մարդկային տուրք հաւաքուած այս մանուկները կը կազմէին հիմքը «Ենիչէրներու», «Սիլայէթներու», «Թիմուրութեան»: Ասոնք էին Օսմանի եւ իր յաջորդներուն անպարտելի բանակը կազմողները, գրաւուած երկիրներու սահմանապահ ժողովուրդը դարձողները: Ասոնք եղած են կայսրութեան հիմքը եւ անոր զանգուածը[1]:

Ըստ էության՝ Համիդի օրոք Օսմանյան Թուրքիայում իրավակարգը հիմնվում էր կրոնական՝ իսլամական սուրբ օրենքի վրա, որի դեպքում կրոնական, հասարակական և քաղաքական ոլորտների միջև սահմանները վերանում էին, քանի որ իսլամը դարձել էր նաև կենսակերպ: Իսլամական Թուրքիայում կրոնական հիմքերից ելնելով՝ թուրքերն իրենց մյուս ազգերից բարձր էին դասում և համարվում էին առանձնահատուկ: Բնականաբար դա ենթադրում էր, որ մյուս ազգերը հպատակ էին և չէին կարող թուրքերի հետ միասին ունենալ միևնույն հասարակական կարգավիճակը: Իսլամական էությունը օսմանական պետության իրավական կազմակերպման հիմնաքարն էր: Իսկ Շարիաթը սահմանում էր ոչ միայն կրոնական պարտավորությունները, այլև մեծապես ազդում էր օրենսդրա-

[1] **Շիրինյան Լ.** Ռուբեն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը (երկրաքաղաքական վերլուծություն): Երևան, 2004, էջ 145:

կան և քաղաքական բնույթի հարցերի վրա[2]: Օրինակ՝ Ղուրանը սահմանում է, որ պետք է պայքարել նրանց դեմ, ովքեր չեն ենթարկվում իրական կրոնին, պետք է պայքարել մինչև այն պահը, երբ այդպիսիք կենթարկվեն կամ կոչնչացվեն:[3] Միայն այս դեպքում է հնարավոր պատերազմի ավարտ և բարեգթության դրսևորում[4]: Ակնհայտ է, որ իսլամում սոցիալ-քաղաքական անհավասարությունը բխում էր կրոնական հիմքերից: Իսկ այս հանգամանքը ստեղծում էր բոլոր նախադրյալները Օսմանյան կայսրության մեջ թուրքերի կողմից այլադավանների նկատմամբ անհավասար վերաբերմունքի և վարքագծի ձևավորման և դրսևորման համար:

Այս առիթով կարևոր են Ռուբենի մտորումները, ով, անդրադառնալով Օսմանյան կայսրության մեջ իսլամի և այլադավանների խնդրին, նշում է, որ « ... ապազգային դասակարգը չէր թրքացուեր, այլ կիսլամացուէր, միայն կրօնական շաղկապն էր, որ տարբեր ցեղերու, տարբեր ազգերու այս դժբախտ զաւակները կը վերածէր մէկ բանակի՝ «իսլամ» անունով: Այս շինծու ազգ-բանակին միայն հետեւեալ նպատակն ու դաստիարակութիւնը կառաջադրուէր. «Մոռնալ ամէն ինչ եւ հետեւեալները կեանքի միակ նպատակը դարձնել. *լինել իսլամ եւ նուիրուած Օսմանի տանը. Լինել զինուոր եւ ոստիկան՝ հպարտութեան մէջ պահելու նուաճուած երկիրները, նուաճել իսլամ եւ ոչ իսլամ երկիրներ*»»[5]:

Ուսումնասիրելով ազգայնականության խնդիրը Թուրքիայում՝ Ռեզա Ազարյանը գրում է, որ դեռևս 7-րդ դարում, երբ իսլամը հաջողություններ էր գրանցում Կենտրոնական Ասիայում, թուրք զինվորները, ընդունելով իսլամ, զորագրվում էին արաբական բանակներին և ծառայում նրանց որպես ղազիներ *(ghazi)*, ինչը նշանակում է ճակատագրի առաջամարտիկներ ընդդեմ ոչ մուսուլման հարևանների[6]:

---

[2] **Дадрян В.** История армянского геноцида: этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа. Ереван, 2007, с. 4.

[3] **Koran,** ch. 9. verse 29.

[4] **Bosworth C.** "The Concept of Dhimma in Early Islam'' Christians and Jews in the Ottoman Empire. New York, 1982, p. 41.

[5] **Շիրինյան Լ.** Ռուբեն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը (երկրաքաղաքական վերլուծություն): Երևան, 2004, էջ 145:

[6] **Azarian R.** Nationalism in Turkey: Response to a Historical Necessity / International Journal of Humanities and Social Science Vol. 1 No. 12; September 2011, pp. 72-82.

Սա փաստում է այն մասին, որ այլադավանների նկատմամբ թուրքերի թշնամական վարքագիծը դեռևս ձևավորվել է թուրք ցեղի կայացման հետ մեկտեղ՝ հետագայում արմատավորվելով նրանց գիտակցության մեջ որպես արքետիպ:

Ազարյանը շարունակելով գրում է, որ հետագայում Օսմանյան կայսրությունը, որը դուրս ցայտեց քաղաքական վակուումից, պահպանեց իր *ղազի* բնույթը՝ դիտելով իրեն որպես առաքյալ, որը պատերազմի ժամանակ իր գոյության պահպանման համար պայքարում էր անհավատարիմների դեմ՝ նրանց դավանափոխ անելու նպատակով[7]: Անհավատարիմները բոլոր այլադավան ժողովուրդներն էին, որոնք ապրում էին Օսմանյան կայսրության տարածքում: Ազգայնականության գենը կայսրության գոյության շրջանում արտահայտվում էր կրոնական դրդապատճառներով:

Էթնիկական տեսանկյունից Օսմանյան կայսրությունը սոցիալ-տնտեսական և քաղաքական տարբեր մակարդակների վրա գտնվող, մշակութային ու կրոնադավանական զանազան ընդհանրություններին պատկանող 60-ից ավելի ազգերի ու ցեղերի խառնարան էր: Քրիստոնյա ժողովուրդների տնտեսական դիրքերի ամրապնդումը, ազգային ինքնագիտակցության զարթոնքն ու եվրոպական տերությունների ճնշման ուժեղացումն անհնարին դարձրին սուլթանական իշխանությունների կողմից տարվող կայսրության համընդհանուր մահմեդականացման քաղաքականությունը[8]: Եվ ահա այսպիսի սոցիալ-քաղաքական և կրոնական պայմաններում Համիդի օրոք ձեռնարկվեցին քրիստոնյա հայերի առաջին զանգվածային ջարդերը, ինչպես նաև ճնշումները այն մյուս ժողովուրդների նկատմամբ, որոնք ցանկանում էին ազատագրական պայքար մղել օսմանցիների դեմ:

Գիտակցելով, թե ինչ դեր կարող է խաղալ Հայկական հարցը տերությունների քաղաքականության մեջ՝ Աբդուլ Համիդ Բ-ի կառավարությունը որոշեց վերջ տալ Հայկական հարցին՝ ուժեղացնելով հայ բնակչության հալածանքը մահմեդական մոլեռանդության և հակահայկական տրամա-

---

[7] **Azarian R.** …, pp. 72-82.

[8] **Կիրակոսյան Ա.** Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը: Երևան, 2006, էջ 4:

դրությունների բորբոքման, մշտական սպանությունների և թալանի, տեղական իշխանությունների կամայականության և անօրինության, հայերի բռնի մահմեդականացման փորձերի, գրաքննության սաստկացման, քրդական անկանոն հեծելազորի ստեղծման միջոցով[9]:

Ինչպես նշում է Գանգրունին. «Թուրք եւ քիւրտ կրօնամոլ եւ ցեղամոլ տարրերուն ցուցաբերած հակառակութիւնը տխուր դեր խաղցան եւ յեղափոխութեան առաքեալներուն գործը կրկնակի դժուարութեան մատնուեցաւ»[10]:

Սակայն նույնիսկ Համիդից հետո իշխանության եկած երիտթուրքերը, որոնք աստվածապաշտ չէին, ևս հաստատեցին իրենց տիրապետող և գերակա ազգ լինելու *ցեղապաշտական սկզբունքը* և շարունակեցին հայերի և մյուս քրիստոնյա ազգերի զանգվածային ջարդերը:

Ինչպես նշում է Հ. Մարտիրոսյանը. «Սուլթանական Թուրքիայի ժողովուրդների ազատագրական շարժումները մէկ միասնական հոսանքի մէջ համախմբելու գործին մեծ խոչընդոտ էին հանդիսանում միւսիւլմանական մոլեռանդութիւնը, պուրժուական նացիոնալիզմը եւ կայսերապաշտ տէրութիւններու մեքենայութիւնները: Այստեղ Համիդի բռնակալական ռէժիմը տապալելու համար այդ բոլոր ազգային ցաք ու ցրիւ ուժերից մէկ ընդհանուր ճակատ կազմելու խնդիրը իրենց վրայ վերցրին Երիտ. Թուրքերը... եւ դառնալով դրութեան տէրը, հռչակեցին «ազատութեան», «հաւասարութեան», «արդարութեան» եւ միայն իրենց թուրքերի համար հասկանալի սպեցիֆիկ «արդարութեան» լոզունգները: ... Բայց իրականում նպատակ ունէին (Ե. Թուրքերը) պահպանել թուրքերի գերիշխանութիւնը ոչ-թուրքերի նկատմամբ, այն տարբերութեամբ միայն, որ թրքական ֆէոտալական (Սուլթան Համիտի) ճնշումը փոխարինելու էր գալիս պուրժուական ազգային ճնշումը»[11]:

Ակնհայտորեն ուրվագծվում էր «երիտթուրքերի «մեծ ռազմավարությունը»՝ թրքացնել քրդերին ու արաբներին, ազատվել Փոքր Ասիայի բնիկ

---

[9] **Կիրակոսյան Ա.** Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը: Երևան, 2006, էջ 9:

[10] **Գանգրունի Հ.** Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դէմ: Պէյրութ, 1973, էջ 75:

[11] **Մարտիրոսեան Հ.** Մերձաւոր ու Միջին Արեւելքի Երկիրներ եւ Ժողովուրդներ, Ե. Թուրքիա, 1970, էջ 298-299:

(aboriginal) ժողովուրդներից՝ հայերից ու հույներից, ինչպես նաև ասորի-ներից՝ սեփականելով նրանց ունեցվածքն (ավարառություն) ու հայրենիք-ները: Ընդսմին, թուրքական «վաթանի» տարածական որոնումը շարու-նակվում էր Համիդի քաղաքականության շրջանակներում»[12]:

Թուրքերու մէջ 1868-ին սկսաւ ազատական շարժում մը: Փարիզի մէջ կազմուեցաւ Իթթիհատ վէ Թերաքքի Կուս.ը: Անոնք դժգոհ էին Ալի եւ Ֆուատ Փաշաներու գործունէութենէն եւ զանոնք կ՛ամբաստանէին իբրեւ նուազ հայրենասէրներ, քանի որ կ՛ուզէին խզուիլ թուրք ազգային աւանդութիւններէն: Իթթիհատ վէ Թերաքքը իր առաջին օրերուն իսկ ներ-կայացաւ՝ չափազանց թուրք, չափազանց ազգայնական եւ չափազանց հակա-եւրոպական հանգամանքով[13]:

Այս ամենը պետք է հասկանային բոլորը կամ ուշադրություն դարձնեին դրան, ինչը, կարծես թե, անտեսվեց նաև հայերի կողմից, նրանք, միգուցե, չգնահատեցին այդ վտանգի էությունը:

Գանգրունին, մեջբերելով Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Լ. Կամարովսկու խոսքերը, գրում է, որ «Տաճիկները համոզուելով որ իրենց տիրապետութեան ամէն կողմէն վտանգ կը սպառնայ՝ այժմ դէպի քրիստոնեաները՝ բացի արհամարհանքէն, նաեւ կատաղի, անողորմ ատելութիւն ունին: Իրենց կոյր ատելութեան մէջ անոնք չեն տեսներ ուրիշ ոչ մէկ միջոց իրենց զօրութիւնը պահպանելու եւ սպառնացող վտանգ-ներու առաջքն առնելու, բացի կոտորածներու միջոցաւ քրիստոնեաներու ջնջումը»[14]:

Մեջբերելով Զարևանդին՝ Գանգրունին շարունակում է. «Սուլթան Համիտ Բանիսլամիստ էր եւ երես չտուաւ Բանթուրքիստներուն, որոնք շեշտը ՅԵՂԱԿՑՈՒԹԵԱՆ եւ ո'չ թե ԿՐՕՆԻ վրայ դրած էին» [15]: Սակայն ինչպես ցույց տվեցին պատմական զարգացումները, թե՛ պանիսլամիստ Համիդը, թե՛ պանթյուրքիստ երիտթուրքերը չէին զլանում կողոպտել և

---

[12] **Շիրինյան Լ.** Հայաստան-Թուրքիա. ռազմավարական զիգզագներ, Երևան, 2006, էջ 13:

[13] **Գանգրունի Հ.** Հայ յեղափոխութիինը օսմանեան բռնատիրութեան դէմ, Պէյրութ, 1973, էջ 223:

[14] **Գանգրունի Հ.** ..., էջ 224:

[15] **Գանգրունի Հ.** Հայ յեղափոխութիինը օսմանեան բռնատիրութեան դէմ: Պէյրութ, 1973, էջ 294:

ցեղասպանել հայերին իրենց նպատակների իրականացման համար: Այս տեսանկյունից ուշագրավ է պատմաբան Վ. Գոթլիի վկայությունը, ով գրում է, որ «Թրքական կայսերապաշտութեան համար բնորոշ էր երկու գաղափարախօսութիւնների՝ քաղաքական բանթուրիզմի եւ կրօնական բանիսլամիզմի իւրայատուկ զուգակցումը»[16]:

Ֆ. Նանսենի համոզմամբ. «Միակ տարբերութիւնը որ կար Իթթիհատի եւ հին թուրքերու հալածանքներուն միջեւ, հայերուն դէմ սարքուած հալածաքներուն կ'ակնարկեմ, հետեւեալն էր. «*Ժէօն Թուրքերու հալածանքները հետեւանքն էին խնամքով պատրաստուած ծրագրի մը, հետեւաբար անբաղդատելիօրէն աւելի վտանգաւոր էին*: Ժէօն Թուրքերու Կուս. պետերէն շատեր իրենց կրթութիւնը առած էին Բրուսիոյ մէջ, եւ լաւ սորված էին մեթոտը: Փաստաթուղթեր կան, որոնք կ'ապացուցանեն, թէ թուրք կառավարութիւնը Համշխ. Ա. Պատերազմէն իսկ առաջ վճռած էր տկարացնել եւ քայքայել Հայաստանի քրիստոնեայ բնակչութիւնները, ներմուծելով անոնց մէջ այլ տարրեր»[17]:

Լինելով աթեիստներ՝ երիտթուրքերը իսլամն օգտագործում էին որպես քաղաքական գործիք ոչ թուրք էթնոսներին՝ մեծապես հայերին բնաջնջելու համար: Այսինքն՝ ցեղասպանի հոգեբանական տիպը նրանց մոտ դրսևորվեց և քողարկվեց կրոնական շղարշով:

Հայոց ցեղասպանության ոչ կրոնական դրդապատճառների մասին է վկայում նաև Մեծն Տան Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա.-ի մեկնությունը, ով նշում է. «Պատմական տուեալները ու նոյնիսկ թրքական աղբիւրները յստակօրէն ցոյց կու տան թէ հայ ժողովուրդին դէմ պետականօրէն ծրագրուած ու գործադրուած ցեղասպանութիւնը, Օսմանեան կայսրութեան մէջ քաղաքական իշխանութիւնը ձեռք ձգած Երիտասարդ Թուրքերու Բանթուրանական քաղաքականութեան մաս կը կազմէր: Յիշեալ քաղաքականութեան նպատակն էր Միջին Արեւելքի եւ Ասիոյ թրքական մշակոյթին ու ցեղին պատկանող ժողովուրդները միացնելն էր Բանթուրանական համապարփակ կայսրութեան մը սահմաններէն ներս: Այս ծրագրի իրագործման մէջ արգելք էր հայ ժողովուրդը, որ Կիլիկիոյ ու

---

[16] **Գանգրունի Հ.** ..., էջ 300:

[17] **Նանսէն Ֆ.** Հայաստան եւ Մերձավոր Արեւելք: Պէյրութ, 1958, էջ 260: (թարգմ.)

Արեւմտեան Հայաստանի մէջ (որոնք արդէն մաս կը կազմէին Օսմանեան կայսրութեան) երկար դարերու պատմութիւն ունէր եւ լաւապէս կազմակերպուած ներկայութիւն էր: Հայերը շրջանէն արմատախիլ ընելու միակ արմատական միջոցը ցեղասպանութիւնն էր»[18]:

Համիդի օրոք թուրքական զավթողական և սպանդի քաղաքականությունը կրկին քողարկվում էր կրոնական հիմքով, սակայն իրականում դա մասամբ էր բխում կրոնից, քանի որ ոչ բոլոր իսլամադավան պետություններն են թշնամաբար տրամադրվում այլ քաղաքակրթական արժեքների և դրանց կրողների նկատմամբ, ինչպես, օրինակ՝ Իրանը: Դա նշանակում է, որ ամենևին էլ պարտադիր չէ, որ իսլամադավան պետությունը անպայմանորեն պետք է թշնամաբար վերաբերվի այլ մշակույթներին և քաղաքակրթություններին, ինչպես դա անում էր Օսմանյան Թուրքիան:

Այս տեսանկյունից հարկ է նշել, որ իսլամադավան օսմանական պետությունում չէր գործում և չէր էլ կարող գործել կրոնի, քաղաքականության և էթիկայի մաքիավելական տարանջատումը, որը հատուկ էր քաղաքակիրթ քրիստոնեական աշխարհին: Ցեղապաշտական և իսլամադավան օսմանցիների համար քաղաքակրթական քրիստոնեական մոդելը չէր կարող իրականում լինել ընդունելի, եթե չասենք մերժելի, ինչի մասին փաստում է նրանց իրական քաղաքականությունը՝ ուղղված քրիստոնյա քաղաքակրթության և հատկապես՝ հայերի դեմ: Ուստի, ինչպես ցույց տվեցին պատմական զարգացումները, օսմանցիները, բացի սեփական ազգայնամոլական և կրոնական պատկերացումներից թշնամական տրամադրվածություն ունեին բոլոր քաղաքակրթությունների հանդեպ, ինչը դրսևորում էին ցանկացած հարմար առիթով:

Երիտթուրքերի և հետագայում Աթաթուրքի օրոք Թուրքիայի որդեգրած աշխարհիկացումը Արևմուտքին հաճոյանալու, անցյալի վայրագությունները ծպտելու և ազգային-ցեղապաշտական նկրտումները քողարկելու

---

[18] **Արամ Ա.** Ցեղասպանության պատճառը հայերի քրիստոնյա լինելը չէր/ http://www.a1plus.am/1378334.html (22.04.2015).

քաղաքականություն էր, քանի որ, ըստ էության, Աբդուլ Համիդից հետո Թուրքիայի ցեղասպան գործունեությանը վերջ չդրվեց, այն շարունակվեց ցանկացած հարմար առիթով՝ մշտապես քողարկվելով կրոնական շղարշով:

Հայերի ցեղասպանության օսմանական հակամշակույթ-ավանդույթը

Օսմանցիների ցեղասպան գործունեությունը բխում է նաև նրանց հին ավանդույթներից, քանի որ նրանց մոտ ազգայնամոլական և ցեղապաշտական, այլ ազգերի նկատմամբ գերակայության կարծրատիպերը ձևավորվել են դեռ վաղուց: Այս մոտեցումը կարելի է հիմնավորել Ուիլիյամսի այն գաղափարով, որի համաձայն՝ ավանդույթներն Արևելքում (խոսքը Օսմանական կայսրության մասին է) ավելի ուժեղ են օրենքներից, դատարաններից և իշխանություններից, իսկ այդ ավանդույթները պահպանվել էին գրեթե Օսմանական կայսրության ողջ տարածքում[19]: Այս տեսակետը կարող է հիմք ծառայել այն հիմնավորմանը, ըստ որի՝ ցեղասպանի, կողոպտչի, զավթիչի վարքագիծը չէր կարող լինել բացառապես կրոնական, ինչպես այդ ամենը ներկայացվում էր Համիդի և երիտթուրքերի օրոք: Այդ վայրագ և ցեղապաշտական գործողությունները բխում էին առավելապես մշակույթ-ավանդույթից (այն, ինչին սովոր են եղել օսմանցիները): Դա նաև հոգեբանական էր, քանի որ օսմանցիները բացի կողոպտելուց, սպանդից և այլոց հողերը զավթելուց պատմության մեջ այլ կերպ հայտնի չեն: Ուստի նրանց իրական մշակույթը ***հակամշակույթ էր*** կամ այլոց մշակույթի յուրացում և այն որպես սեփական ներկայացնելը: Հակամշակույթը համընդհանուր տիրապետող մշակույթին ընդդեմ գործողություններն են, որոնք հանգեցնում են քաղաքակրթական և մշակութային արժեքների ոչնչացմանը, այլափոխմանը կամ յուրացմանը, ինչպես նաև ուղղված են դրանց կրողների նկատմամբ բռնի գործողությունների իրականացմանը:

---

[19] **Williams T.** Turkey: A World Problem of Today. New York, 1921, p. 285.

Օսմանական հակամշակութային սովորույթների արմատավորվածությունը, միանշանակ, նաև օսմանական քաղաքական կարգի անբաժան մասն էր կազմում, իսկ տարբեր ժամանակաշրջաններում մշտապես առաջարկվող բարեփոխումները չէին կարող դառնալ իրականություն, քանի որ, ինչպես հիմնավորում է քաղաքական գիտությունը, այն հասարակություններում, որտեղ նոր ընդունվող նորմերը չեն համապատասխանում գործող վարքագծին, ավանդույթին, չեն կարող ունենալ գործնական կիրառության մեջ արդյունավետություն[20]: Եվ ինչպես ցույց տվեց պատմական փորձը՝ Օսմանյան կայսրության մեջ առաջ քաշվող բարեփոխումները մշտապես վերածվում էին «չարեփոխումների» հայերի նկատմամբ՝ հանգեցնելով ջարդարարության:

Այս առումով Դադրյանը իրավացիորեն նշում է, որ թուրքական մշակույթը սպանդի մշակույթն է, քանի որ, ինչպես ցույց է տալիս պատմական փաստերի վերլուծությունը, թուրքը կոնֆլիկտները լուծելու միջոցով իր նպատակներին հասնելու համար մշտապես դիմել է սպանդի[21]: Իսկ պատմության ընթացքում շարունակաբար և հաստատակամորեն միևնույն վարքագծի դրսևորումը փաստում է արդեն տվյալ երևույթի մշակութային հիմքի մասին: Այս դեպքում թուրքական վարքագիծը կարելի է անվանել ոչ թե մշակույթ, *այլ հակամշակույթ*, որը հակառակ է քաղաքակիրթ աշխարհի կողմից ընդունված մշակույթի ընկալմանը: Այլ մշակույթների և քաղաքակրթությունների նկատմամբ թուրքական հակամշակութային վարքագծի մասին է վկայում նաև բրիտանացի ազգագրագետ Ուիլիյամ Ռամսեյի այն միտքը, ըստ որի՝ թուրքական կառավարությունը հայերին, նաև հույներին (քրիստոնեական քաղաքակրթության կրողներին) համարում էր շներ կամ խոզեր, որոնց վրա թուրքը պետք է մաքրեր իր ոտքերի կեղտը: Դարեր շարունակ այն ինչ պատկանել է հայերին՝ սեփականություն, տուն, ինքնություն, ընտանիք և այլ, չեն եղել երաշխավորված բռնությունից[22]: Ուստի կարելի է միանշանակ պնդել, որ օսմանական

---

[20] **Huntington S.** Political Order in Changing Societies. Yale University Press, 1968, 488 p.

[21] **Дадрян В.** История армянского геноцида: этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа. Ереван, 2007, с. 154.

[22] **William R.** Impressions of Turkey During Twelve Years Wanderings. New York, 1897, pp. 206-207.

կայսրության կողմից տարբեր շրջաններում հայերի դեմ իրականացված ցեղասպան քաղաքականությունը ոչ թե պայմանավորված էր քաղաքական վարչակարգով, այլ ազգայնամոլական գաղափարախոսությամբ, ինչը դրսևորվեց համապատասխան հակամշակութային վարքագծով:

Կոնֆլիկտային իրավիճակներում դաժանագույն բռնությունների դիմելու թուրքական ավանդական հակվածությունը համահունչ է թուրքական ռազմական ավանդույթներին, որոնք թուրքական մշակույթի հիմնական տարրն են[23]: Այսինքն՝ թուրքի մշակույթը, ըստ էության, ոչընչացնելու մշակույթ է:

Այն հանգամանքը, որ երկու տարբեր օսմանական ռեժիմներ՝ Աբդուլ Համիդի և երիտթուրքերի օրոք իրականացրեցին միևնույն ցեղասպան քաղաքականությունը բարեփոխումներ պահանջող հայերի նկատմամբ, խոսում է այն մասին, որ դա անփոփոխ թուրքական քաղաքական մոդելն էր[24]:

Մանդելշտամն իրավացիորեն նշում է, որ թուրք ժողովուրդը Կոստանդնուպոլիսը նվաճելու ժամանակ լիարժեքորեն ռազմականացված ազգ էր, որին ամբողջությամբ օտար էր քաղաքակրթությունը[25]:

Թուրքերի ռազմականացվածությունն արտահայտվում էր նրանց զավթողական քաղաքականության մեջ, ինչն ուղղված էր նաև տիրապետող քաղաքակրթական և մշակութային արժեքների դեմ: Դրան հակառակ՝ քաղաքակրթության ոլորտում հայերի ունեցած ընդունակությունների մասին արտահայտվել են նաև որոշ թուրքեր: Այս առումով հատկանշական է գեներալ Շերիֆ փաշայի խոստովանությունը. «Չկա մի լուսավորյալ թուրք, որը չստորագրի հետևյալ հայտարարության տակ, որ արված է «...» անգլիական պառլամենտի դեպուտատ Լինչի կողմից. «Հայերը բացառիկորեն ընդունակ են այն բանին, որպեսզի նոր քաղաքակրթության կրողներ լինեն: Նրանց հարազատ են դարձել մեր ամենաբարձր իդեալները: Նրանք եվրոպական մշակույթի նոր նվաճում-

---

[23] **Дадрян В.** История армянского геноцида: этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа. Ереван, 2007, с. 490.

[24] **Дадрян В.** …, с. 489.

[25] **Mandelstam A.** La Société des Nations et les Puissances devant le Problème Arménien. Paris, 1926, p. 4.

ները յուրացնում են մեծ ագահությամբ և դրանց տիրապետում են այնպիսի կատարելությամբ, որին երբեք չի կարող հասնել ոչ մի ազգ»[26]:

Այս ամենը օսմանցիների մոտ ձևավորում էր նախանձ և միևնույն ժամանակ վտանգ՝ արթնացնելով օսմանական ցեղապաշտական ավանդույթը: Իսկ գլխավոր փաստարկը «հայի Հայաստան հայրենիքն էր, ամեն գնով այն «սեփականելու» թուրքական անկասելի մղումը, այդ Հայաստանն իր օրինական ու բնական տիրոջից անվերադարձ խլելու թուրքական բնազդը[27]: «Մտիկ արեք,- ասում էր (և կարծես կրկնում է այսօր) Հովհաննես Թումանյանը, - դա մի նոր պետություն է, որ դրսից եկել է ու կոպիտ ուժով նստել հին քաղաքակիրթ ազգերի ու նրանց հայրենիքների վրա»[28]:

Ցեղապաշտական բնազդ-ավանդույթի մասին են վկայում նաև Մեհմեդ Նազըմի խոսքերը. «Մեր հայրենիքը ասկե վերջ միայն ու միայն կրնա ըլլալ Անատոլուն: Ասիական հողամասի վրա դեպի արևելք անսահման կարելիություններ կգտնվին մեր զարգացման ու ընդարձակման համար: ... մեզի կմնա սրբազան պարտքը իրականացնելու թուրք ցեղի միությունը Միջերկրականեն մինչև Արալ ծովը: ... այդ քաղաքական ծրագրի իրականացման նախապայմանը՝ հայկական հարցի արմատական լուծումն է»[29]:

Արդյունքում օսմանցիների Մեծ Թուրանի բաղձանքը ցանկացած հարմար առիթի դեպքում վերածվում էր գործուն քաղաքականության՝ բնաջնջելով անդրենածին ազգին՝ հայերին, իր իսկ հայրենիքում:

Հայերի ցեղասպանության էթնոմշակութային ու հոգեբանական հիմքը ևս նույնական էր (և է) թուրանական գաղափարի հետ: Ասվածի համատեքստում Մեծ ոճիրը երկնելու և գործադրելու համար, ինչպես նշում է Լ. Շիրինյանը, հանճար ունենալու կարիքն էլ չկար, վստահաբա'ր, սակայն

---

[26] **Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում**: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Երևան, 1991, էջ 436: Տե՛ս նաև **Շիրինյան Լ.** Հայաստան-Թուրքիա. ռազմավարական զիգզագներ: Երևան, 2006, էջ 4:

[27] **Շիրինյան Լ.** Հայաստան-Թուրքիա. ռազմավարական զիգզագներ: Երևան, 2006, էջ 5:

[28] **Շիրինյան Լ.** ..., էջ 5:

[29] **The Turkish Tyranny**, հայերեն և անգլերեն, Թրքահայաստանի 1915-ի տարագրություն և ջարդ: Նյու Յորք, 1963, էջ 1-5:

պարտադիր էր մոնղոլական բնազդն ու եղեռնաբաղձության կիրքը, ինչով լիուլի օժտված է օսմանյան հորդան[30]:

Օսմանական ավանդույթ-օրենքի հիման վրա մշակված ցեղասպանության քաղաքական մոդելն ուներ գործադրման համապատասխան մարտավարություն.

1. **1876-ից մինչև 1915 թվականներ.** Հայաստանից հայերի արտաքսման, ձուլման-մահմեդականացման և ջարդերի անընդհատ ընդլայնվող, սակայն, այդուհանդերձ, սահմանափակ (լոկալ) քաղաքականություն:

2. **1915-ից մինչև 1918 թվականներ.** համընդգրկուն և հայկական հարցի վերջնական լուծման գործելաձև:

3. **1919-ից մինչև 1923 թվականներ.** հույների ոչնչացման, «անավարտ» մնացածի շարունակման և նրա արդյունքների «իրացման» քեմալական քաղաքականություն՝ մի կողմից, և մյուս կողմից՝ թուրքական պետության դուրս բերում «հաջողությամբ» կատարվածի պատասխանատվության տակից[31]:

Հայերի ցեղասպանության և Հայոց Հարցի վերաբերյալ այս փուլերի դասակարգումը վկայում է օսմանական ավանդույթ-օրենքի հետևողական ի կատար ածման ընդհանուր ռազմավարության մասին՝ որպես ստույգ քաղաքական մոդել իր համապատասխան տեխնոլոգիաներով: Իսկ հարցի վերլուծության վարքաբանական (բիհևիորիստական) մոտեցումը ցույց է տալիս ցեղասպանի կարծրատիպային վարքագիծը՝ որպես քաղաքական հակամշակույթ:

Թուրքական հակամշակույթի մասին է վկայում նաև Ֆրանսիայի, Անգլիայի ու Ռուսաստանի կողմից 1915 թվականի մայիսի 24-ին Փարիզում, Լոնդոնում ու Պետրոգրադում միաժամանակ հրապարակված Ազդարարության որակումը որպես **«ոճիր մարդկության և քաղաքակրթության դեմ»**:

Այսպիսով՝ Թուրքիայի պետության ոճրային ընթացքի մեջ փոխվում էին սուլթանները, կառավարիչների գույնը, դեմքը, սեռը, ազգությունը, չէր

---

[30] **Շիրինյան Լ.** Հայաստան-Թուրքիա. ռազմավարական զիգզագներ: Երևան, 2006, էջ 9:

[31] **Ասատրյան Հ.** Հայաստան. արիական նախադիրք Առաջավոր Ասիայում, հատոր Ա., Սոֆիա, 1942, էջ 123-133:

փոխվում գերխնդիրը՝ ոչնչացնել Հայաստանը, պարզվում է, հայ ժողովրդի գլխովին բնաջնջման ճանապարհով[32]:

Ճիշտ է, որ Գորշ գայլը նենգ էր (և է), դարանակալ ու ոխակալ, նաև անբարո, սակայն հայ ժողովրդին պետք է ուղեկցի վստահությունն իր բարոյական ու ֆիզիկական ուժերին, նվիրվածությունը Հայաստանի լուսավոր ապագային: Այդպիսով՝ միայն նա կկարողանա կատարել պատմա-քաղաքակրթական իր առաքելությունը «Եղեմական այգում» որպես աշխարհի առաջին քրիստոնյա պետություն[33]:

Թուրքիայի ցեղապաշտական քաղաքականության կամ թուրքական հակամշակույթի սկզբունքները շատ հնարավոր է, որ այսօր էլ չեն վերացել և կարող են դրսևորվել երկրաքաղաքական քառսի կամ վերադասավորումների դեպքում: Վերջին շրջանում սիրիական պատերազմի, մասնավորապես՝ Քեսաբի դեպքերը կարելի է համարել որպես ասվածի վկայություն:

Թուրքիան հնարավորության դեպքում մշտապես պայքարել է այլ քաղաքակրթական արժեքներ կրող ազգերի դեմ դրանք յուրացնելու նպատակով, և, կարծես թե, այսօր էլ այդ նպատակը չի փոխվել՝ բացառությամբ պայքարի մեթոդների և մեխանիզմների:

Թուրքական ազգայնականության և արքետիպի փոխառնչությունները

Թուրքական ազգայնականությունը (թուրք. Türk milliyetçiliği), լինելով թուրք ազգին փառաբանող և գերադասող քաղաքական գաղափարախոսություն, ծագել է 1839 թվականի «Թուրանական հասարակություն» կազմակերպության հիմնադրումով: 1908 թ. ստեղծվում է «Թուրքական հասարակություն» կազմակերպությունը, որը հետագայում ձևափոխվում է «Թուրքական սրտի» [34]: Թուրքական ազգայնականության հիմքերը

---

[32] **Շիրինյան Լ.** Հայաստան-Թուրքիա. ռազմավարական զիգզագներ: Երևան, 2006, էջ 6:
[33] **Շիրինյան Լ.** …, էջ 11:
[34] **«Turkish Society»**. Britannica Online Encyclopedia: (30.04.2015).

դրսևորվում են նաև պանթուրանիզմի և պանթյուրքիզմի գաղափարախոսություններում: Հետագայում Աբդուլ Համիդ Բ-ի իշխանության տապալումից հետո երիտթուրքերը թուրքական ազգայնականությունը դարձնում են այնպիսի ուժ, որը հանգեցնում է կազմակերպված հայասպանության: Նրանցից հետո Աթաթուրքի օրոք ևս պանթյուրքական հայացքներն արդիական էին, իսկ Քեմալն ուզում էր բարեկամանալ միջինասիական թյուրքական պետությունների հետ: Այս նպատակով 1935 թ. նա սկսում է տարածել Հիլարի դը Բարենտոնի «արևի լեզվի տեսությունը» Թուրքիայի քաղաքական և կրթական միջավայրում, այսինքն այն ժամանակ, երբ իրենց գագաթնակետին էին հասել օտար ազդեցությունից թուրքերենի «մաքրման» փորձերը: Այդ շրջանում սեփական պատմություն ստեղծելու և այն վեհացնելու նպատակով թուրք հետազոտողները փորձում են հիմնավորել այն անհեթեթությունը, ըստ որի՝ շումերները նախաթյուրքեր են եղել[35], ինչը, իհարկե, *այլոց քաղաքակրթության, պատմության և մշակույթի յուրացման հերթական փորձն էր*՝ համաձայն թուրքական ավանդույթի:

Ազգայնամոլական տրամադրությունները թուրք հասարակության մեջ միշտ էլ լայն տարածում են ունեցել: Մերօրյա թուրք ազգայնականությունը, փաստորեն, լինելով շարունակությունը 20-րդ դարասկզբի երիտթուրքական համակարգի, նրա գաղափարախոսության, որի սաղմերը գցվել էին դեռևս 19-րդ դարում՝ բարեփոխումների կամ, ինչպես ընդունված է ասել, թանզիմաթի ժամանակաշրջանում, նաև կրողն է նրա թուրանիստական գաղափարների: Եթե պանթուրքիզմի ծրագրերով անցյալում առաջնորդվում էին բժիշկ Նազըմը, Էնվերը, հետագայում՝ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը, Զիյա Գյոքալփը, ապա նրանցից հետո ասպարեզ պետք է դուրս գար Արփարսլան Թյուրքեշը, ով պիտի գործեր մոլեռանդ ազգայնամոլությամբ՝ դուրս գալով Թուրքիայի սահմաններից և լիներ ամեն տեղ, ուր կար թուրք:

Թուրք ազգայնական կազմակերպություններից ամենահայտնին «Գորշ գայլերն» է (Bozkurt): Ավելորդ չէ նշել նաև, որ Առաջին աշխարհամարտի

---

[35] **Shay A.** Choreographic Politics: State Folk Dance Companies, Representation, and Power*:* Wesleyan University Press, 2002, p. 203-211.

նախօրյակին Էնվեր փաշայի կողմից ստեղծվել էր երիտասարդական մի կազմակերպություն, որը հայտնի էր նաև «Գորշ գայլեր» անվանումով: Այժմ «գորշ գայլեր» են կոչվում Ազգայնական Շարժում կուսակցության բոլոր անդամները:

Գայլը թուրքերի տոտեմն* է, նրանց պաշտամունքի առարկան: Ըստ նրանց՝ թուրքերի պապերին Հեռավոր Արևելքից մինչև Փոքր Ասիա ընկած ճանապարհին առաջնորդում էին գորշ գայլերը: Թուրքական դիցաբանության, առասպելների, ազգային էպոսի մեջ պահպանվել են գայլի մասին առասպելները: Դրանցից առաջինի համաձայն՝ Աթիլլայի տերությունն ամբողջովին ոչնչացվում է հարևանների կողմից, և փրկվում է միայն 9-ամյա մի տղա: Թշնամիները կտրում են նրա ձեռքերն ու ոտքերը և նետում ճահիճը: Այնտեղ նրան գտնում է մի էգ գայլ, հղիանում նրանից, և չնայած թշնամին ի վերջո սպանում է տղային՝ էգ գայլը փախչում է, ծնում 10 տղա, որոնց շնորհիվ ազգը մեծանում ու զորանում է: Ըստ լեգենդի՝ թյուրքերն առաջացել են արևմտյան հոներից, որոնք 2-4-րդ դարերում ձևավորված թյուրքական համարվող քոչվորական ցեղեր էին: Այսօր նրանք թեև գոյություն չունեն որպես այդպիսին, սակայն մերձսևծովյան շրջաններում դեռևս կան ցեղեր, որոնք կրում են այս անվանումը:

Ըստ երկրորդ լեգենդի՝ թյուրքերն առաջացել են Սո ցեղից և կրկին գայլից: Պատմվում է այն մասին, որ ողջ ցեղը մահանում է, փրկվում են միայն էգ գայլի չորս թոռները, որոնցից մեկը վերածվում է կարապի, երկրորդը բնակություն է հաստատում Աբու և Գյան (Ենիսեյ) գետերի միջև, իսկ մյուսները Ալթայի հարավում: Նրանցից էլ բազմանում են թյուրքերը[36]: Թյուրքական վարքագիծը հասկանալու համար կարևոր է վերլուծել այս լեգենդները: Ստացվում է այնպես, որ գորշ գայլը թյուրքական ցեղի արքետիպ է, որը հոգեբանական տեսանկյունից բնորոշում է օսմանցիների վարքաբանությունը, ինչից ամենաշատը տուժել են հայերը:

---

* **Տոտեմ** - ցեղի նախահայր կամ հովանավոր համարվող պաշտամունքի առարկա դարձած կենդանի:

[36] **Findley, Carter Vaughin.** The Turks in World History. Oxford University Press, 2005, p. 38., տե՛ս Bozkurt Legend (Turkish), Book of Zhou, Vo. 50. (Chinese), History of Northern Dynasties, Vo. 99. (Chinese)

Օսմանցիների արքետիպի ընկալման և վարքագծային առանձնահատկությունների բացատրության համար անհրաժեշտ է նախ և առաջ ուսումնասիրել «արքետիպը» տեսական հարթությունում:

«Արքետիպ» եզրույթը (համարժեքը՝ նախնական ձև, նախատիպ) նախապես ծագել է վերլուծական հոգեբանության մեջ, որի հիմնադիրը Կարլ Յունգն է: Արքետիպը, ըստ Յունգի, ընկալվում է որպես ի ծնե ունիվերսալ հոգեկան կառույցներ, որոնք կազմում են կոլեկտիվ անգիտակցականի բովանդակությունը, ինչն էլ դրսևորվում է մեր փորձում: Այդ կառույցները նաև գտնվում են համամարդկային խորհրդանիշների հիմքում: Դրանով է պայմանավորվում նաև տարբեր ժողովուրդների մոտ առասպելների առաջացումը: Տեսականորեն հնարավոր է արքետիպերի ցանկացած թվաքանակ[37]:

Արքետիպը հոգեկանի տարրերի դաս է, որոնց աղբյուրը չունի անհատական դրսևորում: Այն հատուկ չէ առանձին անհատին: Այդպիսի հոգեկան տարրերը կարող են դրսևորվել որևէ տեսակի, ցեղի ընդհանուր հավաքական վարքագծում: Այդ տեսակներն էլ կամ «արքայիկ մնացորդները» Յունգն անվանել է արքետիպ՝ օգտագործելով Օգոստինոս Երանելու արտահայտությունը:

Արքետիպերը չեն կարող ինքնարտահայտվել: Դրանք դրսևորվում են գիտակցության մեջ որպես իրենց իսկ հետևանքներ տարբեր արքետիպային կերպերի և գաղափարների ձևով: Դրանք կոլեկտիվ ունիվերսալ մոդելներ են կամ դրդապատճառներ, որոնք առաջանում են կոլեկտիվ անգիտակցականից: Անհատական մակարդակում դրանց դրսևորվումը լինում է բացառապես երազներում[38]: Յունգի համոզմամբ անգիտակցականն ի ծնե է և պայմանավորվում է պատմության էվոլյուցիայով: Այն պարունակում է խորքային հոգևոր նյութ, ինչը բացատրում է ողջ մարդկությանը հատուկ ձգտումն ինքնարտահայտման և ֆիզիկական կատարելագործման[39]:

---

[37] **Зеленский В.** Словарь аналитической психологии, Когито-Центр, М., 2008, http://vocabulary.ru/dictionary/11/word/arhetipy (01.08.2015).

[38] **Юнг К.** Человек и его символы. Санкт-Петербург: Б. С.К., 1996, с. 451.

[39] **Психологические типы личности по К. Юнгу**, http://www.grandars.ru/college/psihologiya/tipy-lichnosti-po-yungu.html (05.08.2015).

Արքետիպերն ի ծնե գաղափարներ կամ հիշողություններ են, որոնք ստիպում են մարդկանց որոշակիորեն արձագանքել որոշակի իրադարձություններին: Դրանք, ըստ էության, որոշակի գործոններ են, որոնք կանխորոշում են մարդկանց վարքագծի ունիվերսալ մոդելները: Դա հնարավորություն է տալիս նաև որոշակիորեն կանխատեսել տարբեր ժողովուրդների, հանրույթների մոտ վարքագծային առանձնահատկությունները տարբեր իրավիճակներում: Դա կարող է պայմանավորվել նաև աշխարհագրական դետերմինիզմով[40]:

Արքետիպի առավել հստակ ընկալման համար անհրաժեշտ է առանձնացնել դրա հիմնական չափանիշները՝

- արքետիպը, ըստ էության, արքայիկ երևույթ է և պետք է դրսևորվի առասպելներում կամ բանահյուսության մեջ,
- արքետիպը կոլեկտիվ անգիտակցականի կառուցվածք է և պետք է դրսևորվի բոլոր ժողովուրդների մոտ և բոլոր ժամանակներում (իհարկե՝ տարբեր աստիճաններով),
- արքետիպը պետք է ընկալվի ոչ գիտակցաբար,
- գիտակցականում դրսևորվող արքետիպը պետք է ունենա իր կոնցեպտը և խորհրդանիշը,
- արքետիպն ամբողջական կառույց է, ունի դրական և բացասական կողմեր,
- արքետիպը պետք է լինի կայուն և չենթարկվի այն խաթարելու փորձերին,
- արքետիպը, որը հավակնում է ինքնուրույն գոյության, որպես օբյեկտ պետք է ունենա սեփական տարրերի բավականաչափ քանակ, որոնք չեն պատկանում այլ հայտնի արքետիպերին,
- արքետիպն անպայմանորեն պետք է կապված լինի իրական կյանքի հետ և ունենա գործնական դրսևորում. իրական կյանքից կտրված արքետիպեր գոյություն չունեն,

---

[40] **Espace et lieu dans la pensée occidentale,** Chapitre 9. Montesquieu et l'espace (***par Catherine Larrière***), La Découverte, 2012, p. 147-169.

- արքետիպը կարող է սպառնալ անգիտակցականի գերակայությամբ՝ պատճառելով վնաս,
- արքետիպն ունի ընդհանուր աշխարհայացք ունեցող անհատների հավաքագրման գործառույթ,
- արքետիպը մարդկանց հույզերի վրա ունի մեծ ազդեցություն,
- արքետիպն ունի նախաձեռնողականության գործառույթ և հարմար առիթով կարող է արձագանքել և ստեղծել գործողության մղող անհրաժեշտ ազդակներ[41]:

Այս չափանիշների առանձնացումը հնարավորություն կտա հոգեբանական տեսանկյունից բացատրել թուրքերի կողմից հայերի ցեղասպանության վարքագծային հիմքերը, ինչը հաճախ դրսևորվում է բռնությամբ և ճնշումներով այլ ազգերի նկատմամբ: «Գորշ գայլի» թյուրքական արքետիպը մեծամասամբ հիմքեր է տալիս բացատրելու թուրքերի ցեղասպան քաղաքականությունը որպես կոլեկտիվ անգիտակցականի արքետիպային դրսևորում:

Կոլեկտիվ անգիտակցականը մարդկության և նույնիսկ մեր մարդանման նախնիների հիշողության լատենտային հետքերի շտեմարանն է: Դրանում արտահայտվում են բոլոր մարդկային արարածներին հատուկ մտքերը և զգացմունքները, ինչը մեր ընդհանուր հուզական անցյալի արդյունքն է: Ինչպես նշում է Յունգը. «կոլեկտիվ անգիտակցականը պարունակում է մարդկային էվոլյուցիայի ողջ հոգևոր ժառանգությունը, որը վերածնվում է յուրաքանչյուր անհատի ուղեղում»[42]: Այսպիսով՝ կոլեկտիվ անգիտակցականի բովանդակությունը ձևավորվում է ժառանգականության շնորհիվ և ողջ մարդկության համար միևնույն ձևով[43]:

Այս ամենը թույլ է տալիս առանձնացնել նաև ազգերին իրենց կոլեկտիվ անգիտակցականի տեսանկյունից և բնորոշել նրանց արքետիպերը, ինչպես նաև դրանց վարքագծային դրսևորումները՝ հաշվի առնելով պատմական փորձը: Տեսական հարցերի քննարկումը մեզ հնարավորություն է

---

[41] **Архетип (психология)** https://ru.wikipedia.org/, (15.08.2015).

[42] **Психологические типы личности по К. Юнгу**, http://www.grandars.ru/college/psihologiya/tipy-lichnosti-po-yungu.html, (15.08.2015).

[43] Նույն տեղում:

տալիս քննության առնել նաև թուրքերին հատուկ արքետիպերը և դիտարկել հայերի ցեղասպանությունը և նրանց նկատմամբ բռնության քաղաքականությունը թուրքերին հատուկ արքետիպերի տեսանկյունից:

Գորշ գայլի թյուրքական խորհրդանիշը՝ որպես թուրքերի առասպելաբանական ծագման արքետիպ, թույլ է տալիս համեմատել թուրքերի և գորշ գայլերի վարքագծային փոխառնչությունները որպես կենսաբանական տիպեր՝ դիտարկելով տվյալ ցեղի գործողություններում կոլեկտիվ անգիտակցական կամ բնազդային դրսևորումների հիմքերը:

Գայլերը կենդանական աշխարհում գլխավոր գիշատիչներից են՝ դիմացկուն, կայուն, համառ, խորամանկ, ինչը նրանց օգնում է գոյատևել: Իսկ նրանց ուժը ոհմակի մեջ է[44]: Եթե այս մոտեցումը դիտում ենք մարդկային հասարակության օրինակով, ապա գլխավոր գիշատիչները՝ որպես քաղաքակրթական և մշակութային հոգևոր և նյութական արժեքների կեղեքիչներ, դառնում են օսմանցիները: Այս մասին են վկայում բազմաթիվ պատմական փաստեր, որոնց մասամբ արդեն անդրադարձել ենք:

Գայլերը սոցիալական կենդանիներ են, քանի որ ապրում են ոհմակով: Կեցության մեջ գայլերը բոլոր ջանքերը գործադրում են հանուն ոհմակի և նրա գոյատևման: Դրա մասին է վկայում ոհմակային որսը և դրա բաժանումը ոհմակի անդամների միջև: Հատկանշական է, որ գայլերը որսում են բնության մեջ թույլերին և տկարներին: Այսինքն՝ եթե ոհմակի վարքագիծը համեմատում ենք թուրքերի կոլեկտիվ անգիտակցականի դրսևորումների հետ, ապա պարզ է դառնում նրանց ավարառության և ցեղի շրջանակներում այդ ավարի բաժանման վարքագիծը՝ որպես արքետիպային: Առաջին աշխարհամարտի տարիներին, երբ հայ տղամարդիկ զորակոչվել էին բանակ, հայկական ընտանիքներում մնացել էին բացառապես կանայք, երեխաները և ծերերը, որոնք, որպես կանոն, թույլ կամ տկար էին: Հետևապես՝ թուրքերի գիշատիչ ոհմակը հոշոտեց նրանց, ինչպես վարվում են գայլերը բնության մեջ: Իսկ հաճախ նաև սեփականեց հայերի կանանց և երեխաներին: Սակայն թուրքը մշտապես, երբ բախվել է հայերի կողմից ինքնապաշտպանության, այսինքն՝ նրա դեմ կռվել են հայ տղամարդիկ, նա ընկրկել է: Դա ևս մեկ անգամ ապացուցում է գորշ գայլի այն վարքա-

[44] **BBC** ***Two - Wild Battlefields, Wolf***, http://www.bbc.co.uk/programmes/p00d7hkj (06.05.2015).

գիծը, որ նա հաջողության է հասնում միայն տկարների վրա հարձակման ժամանակ:

Գայլերի ռոմակում անդամերի թվի ավելացումը բնության մեջ ստիպում է նրանց նվաճել նորանոր տարածքներ: Ուստի, դիտելով գայլի այս վարքագիծը թուրքերի կոլեկտիվ անգիտակցականի դրսևորումներում, պարզ է դառնում, որ պատմության ընթացքում թուրքերի թվի ավելացմանը զուգահեռ ավելացել են նաև նրանց տարածապաշտական, հետևապես՝ կայսերապաշտական նկրտումները, որոնք պահպանվել են մինչ օրս:

Բնության մեջ գայլերը ամենափորձառու որսորդներից են, որոնք լիարժեք տիրապետում է սպանելու արվեստին՝ հանուն ընդհանուր նպատակի: Թուրքերը ևս սպանդի հարցում առաջատար են ի դեմս՝ հայերի ցեղասպանության՝ հանուն պանթյուրքիզմի և պանթուրանիզմի իրականացման ընդհանուր նպատակի:

Հարկ է նկատել, որ գայլն այն կենդանին է, որ երբեք ձեռնասուն չի դառնում, չի վարժեցվում: 19-20-րդ դարի իրադարձությունները և բազմաթիվ վկայություններ փաստում են նաև թուրքերի՝ քաղաքակրթական և մշակութային արժեքներին խորթ լինելու հանգամանքը: Այս տեսանկյունից Աքչամն իրավացիորեն նշում է, որ թուրքերի համար, առհասարակ, 20-րդ դարասկզբին դժվար էր ընդունել քաղաքակիրթ վարքագծի նորմերը և հրաժարվել բռնությամբ խնդիրները լուծելու գործուն քաղաքականությունից: Հարկավոր էր, որպեսզի քաղաքացիական վարքագծի նորմերը դառնային գերակա թուրքերի շրջանում, իսկ դա նրանց համար հավասարազոր էր ինքնազոհության[45]:

Գայլերը բնության մեջ ամեն ինչ անում են միայն իրենց ռոմակի համար, նույնիսկ պայքարում են այլ ռոմակների դեմ՝ փորձելով զավթել նրանց տարածքները: Նմանատիպ վարքագիծը հատուկ էր նաև օսմանցիներին, որոնց քաղաքականությունը մշտապես հիմնվում էր ցեղապաշտական սկզբունքների վրա: Դիտելով *«գորշ գայլի արքետիպը»* հայերի ցեղասպանության իրականացման գործում՝ հարկ է մեջբերել Լ. Շիրին-

[45] **Akcam T.** From Empire to Republic. Turkish Nationalism and The Armenian Genocide. 2004, p. 40.

յանի այն ձևակերպումը, ըստ որի՝ «գորշ գայլը՝ Թուրքիան, նենգ էր (և է), դարանակալ ու ոխակալ, նաև անբարո եվրոպականացող անդրենածին և մշակութաստեղծ ազգի հանդեպ»[46]: Այսինքն՝ գորշ գայլի արքետիպը լիովին բնորոշում է թուրքական հակամշակույթը և հակաքաղաքակրթությունը: Չէ որ նույնիսկ քաղաքակիրթ աշխարհը թուրքական ցեղապաշտական բնազդի պոռթկումը որակեց որպես՝ ***հանցանք մարդկության և քաղաքակրթության դեմ***:

Ցեղապաշտությունը և սպանդը օսմանցիների մոտ գենային՝ բնազդային ծագման էր, որը դրսևորվում էր նրանց կոլեկտիվ անգիտակցականում: Գայլերի մոտ սպանելը բնազդ է հանուն գոյատևման, իսկ օսմանցիների մոտ նախճիրը՝ կոլեկտիվ անգիտակցական, որը կրկին բնազդային ծագում ուներ և լուծում էր սեփական տեսակի պահպանման խնդիրը:

Սա ապացուցվում է նաև այն բանով, որ օսմանցիները ոչ թե ստեղծարար, այլ մշտապես հակամշակութային և այլոց քաղաքակրթությունը սեփականող վարքագիծ են դրսևորել: Այլ ազգերի հոգևոր և մշակութային ժառանգությունը սեփականելը և որպես իրենցը ներկայացնելը ասվածի ապացույց են:

Ցեղապաշտական և թշնամու արքետիպերի մասին է վկայում Մեհմեդ Նազըմի ճառը, որտեղ նա կարևորում է հետևյալը. «Մի մոռանաք, որ մեր նախահայրերը Թուրանեն եկած են... մեզի կմնա սրբազան պարտքը իրականացնելու թուրք ցեղի (ոչ թե ազգի՝ Է. Օրդուխանյան) միությունը Միջերկրականեն մինչև Արալ ծովը: ... այդ քաղաքական ծրագրի իրականացման նախապայմանը Հայկական Հարցի արմատական լուծումն է»[47]:

Միևնույն տեսակետին էր նաև Քյազիմ Կարաբեքիրը, ով ասում էր. «Հայաստանը գտնվում է խիստ լայնատարած մուսուլմանական մի հողատարածքի վրա, հետևաբար անհրաժեշտ է նրան ինչպես քաղաքականապես, այնպես էլ փաստականորեն ոչնչացնել: Հայերին խեղդամահ անելով՝

---

[46] **Շիրինյան Լ.** Թուրքական էթնոֆոբիան և հայոց ցեղասպանությունը: «Մանկավարժ հրատ.», Երևան, 2011, էջ 20, 23:

[47] **The Turkish Tyranny** (հայերեն և անգլերեն), Թրքահայաստանի 1915-ի տարագրություն և ջարդ, Նյու Յորք, 1963, էջ 1-5: Տե՛ս նաև՝ **Armenian Massacres and Turkish Tyranny**, Philadelphia, Chicago, 1990, 512 p.

միաժամանակ մենք պետք է ջանանք չսրել հարաբերությունները Եվրոպայի հետ, որի դաշնակիցն է Հայաստանը և այդպիսով՝ պետք է հասնենք մեր նպատակին»[48]: Այսինքն՝ թուրքական ազգայնամոլությունը ջերմեռանդորեն ոչնչացնում էր հայերին՝ միևնույն ժամանակ վախենում էր Եվրոպայի հետ հարաբերությունների վատթարացումից: Ինչու՞: Քանի որ Թուրքիան քաջ գիտակցում էր, որ բնաջնջելով հայերին՝ նա ոչնչացնում էր քրիստոնեական մշակույթի օրրանը, ինչը փորձել էր նաև Բալկաններում, սակայն՝ ապարդյուն: Այս առումով Լ. Շիրինյանն իրավացիորեն նշում է, որ եվրոպացի մեծերը՝ համախորհուրդը, Եվրոպայից արտամղում էին քաղաքակրթորեն անհարազատ տարրերին՝ միջնադարյան ենիչերներին (թուրքերին) դեպի Արևելք, իսկ այդ ճանապարհին Հայաստանն էր[49]: Ցավո՛ք, նաև Եվրոպայի անտարբերությամբ, թուրքական քաղաքական հակամշակույթի գործնական դրսևորման ամենահարմար պայմանները ձևավորվեցին հենց քրիստոնեության բնօրրանում՝ Հայաստանում:

Եվ այսպես, օսմանցիների համար գերխնդիր էր բնիկ հայերի բնաջընջման միջոցով ոչնչացնել Հայաստանը, վերջնականորեն սեփականել հայոց հայրենիքը՝ դարձնելով այն «Արևելյան Անատոլիա», «յուրացնել» հայկական մշակույթը, ջնջել հայկական քաղաքակրթությունը, կողոպուտի և ավարառության ***թուրքական ավանդույթ-օրենքով*** տեր դառնալ հայոց նյութական ահռելի հարստությանը[50]:

Այս ամենը ևս մեկ անգամ փաստում է, որ թուրքական ցեղասպան բնազդը՝ որպես վարքագծային արքետիպ, ուղղված էր, ըստ էության, ոչ միայն հայերի՝ որպես էթնոսի դեմ, այլև այն մշակույթի և քաղաքակրթության, որը եվրոպական էր և առավելապես՝ քրիստոնեական: Այսինքն՝ ևս մեկ անգամ կարող ենք պնդել, որ թուրքական վարքագիծը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ցեղապաշտ հակամշակույթ: Այստեղ հարկ է մեջբերել Լ. Շիրինյանի ձևակերպումը. «Թուրքական անկասելի մղումը Հայաստանն

---

[48] **Սարգսյան Ե.** Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա: Երևան, 1994, էջ 170-171:

[49] **Շիրինյան Լ.** Թուրքական էթնոֆոբիան և հայոց ցեղասպանությունը: «Մանկավարժ հրատ.», Երևան, 2011, էջ 14:

[50] **Շիրինյան Լ.** …, էջ 6:

իր օրինական ու բնական տիրոջից անվերադարձ խլելը թուրքական անասնական բնազդ էր»[51]:

Այս պարագան ինքնին մի ապացույց է բնազդների, ոգու զորավոր ինքնապահպանության, ինչպես նաև այն բանի, թե քաղաքակրթական ձևերի յուրացումով ստորաբնազդ մի ցեղ չի կարող ընդունակ դառնալ նաև մշակութաստեղծումի, և թե արտաքին բոլոր կարգի ազդեցությունները՝ անգամ կրոնը, դաստիարակությունը, նպաստում են միայն ներքին ընդունակությունների զարգացման, բայց ո՛չ երբեք փոխում նաև ոգու բնությունը[52]: Հ. Ասատրյանի պնդումները կրկին փաստում են *ցեղամոլության արքետիպի* արմատավորվածությունը թուրքական ինքնագիտակցության (կամ կոլեկտիվ անգիտակցականի) և հակամշակույթի մեջ:

Ինչպիսին էլ եղել են օսմանական ինքնության սահմանման կամ վերասահմանման փորձերը, միևնույն է՝ թուրքական ազգային արքետիպն անփոփոխ է, ինչպես յուրաքանչյուր ազգի դեպքում: Իսկ թուրքերի պարագայում այդ արքետիպը «գորշ գայլի», «ցեղապաշտի՝ իր տեսակի առավելության» կերպարներն են, որոնցում գերակայում են բնազդները:

Որպես թուրքական հակամշակութային անփոփոխ արքետիպի հիմնավորում՝ հատկանշական են Ռուբենի խոսքերը. « ... պէտք չէ փոքրացնել իմաստը թուրք փիլիսոփայութեան մը, որ խտացուած է հետեւեալ ասացուածքին մէջ. «Բօշատան փաշա օլմազ, դուրտտան դոյուն օլմազ»: (Բօշայէն փաշա չլինիր, գայլէն գառն չլինիր): *Ինչպէս իւրաքանչիւր բոյս ու կենդանի օժտուած են իրենց տրուած յատկութիւններով, նոյնպէս իւրաքանչիւր ժողովուրդ օժտուած է իւրայատուկ բնութագծերով: Բնաւ ապարդիւն աշխատանք չէ բարեփոխել պայմանները վարդի մը, որ 5 տերեւի փոխարէն ունենայ 25 տերեւ, բայց ապարիւն աշխատանք է վարդի թփէն սպասել մեխակ կամ շուշան*»[53]:

---

[51] **Շիրինյան Լ.** Թուրքական էթնոֆոբիան և հայոց ցեղասպանությունը: «Մանկավարժ հրատ.», Երևան, 2011, էջ 9:

[52] **Ասատրյան Հ.** Հայաստան. արիական նախադիրք Առաջավոր Ասիայում, հ Ա., Սոֆիա, 1942, էջ 123-133: Տե՛ս նաև՝ **Շիրինյան Լ.** Թուրքական էթնոֆոբիան և հայոց ցեղասպանությունը: «Մանկավարժ հրատ.», Երևան, 2011, էջ 15, 37:

[53] **Շիրինյան Լ.** Ռուբեն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը (երկրաքաղաքական վերլուծություն): Երևան, 2004, էջ 139:

Այլ կերպ ասած՝ թուրքի համար քաղաքակիրթ վարքագծի նորմերի ընդունումը 20-րդ դարասկզբին ինքնազոհություն էր, քանի որ թուրքը պետք է ստիպված զսպեր իր որոշ հիմնական բնազդները[54]: Այսինքն՝ այս ամենը կրկին հիմնավորում է օսմանցիների հակաքաղաքակրթական և հակամշակութային արքետիպային վարքագիծը: Իսկ վարքագծում բնազդների գերակայությունը գիտակցության նկատմամբ փաստում են նաև հակամշակույթ լինելու հանգամանքը, քանի որ մշակույթը, ըստ էության, գիտակցության դրսևորում է: Օսմանցիների անասնական բնազդը՝ ուղղված սեփական տեսակի՝ այլոց զոհողության միջոցով պահպանելուն և տարածապաշտական քաղցը բավարարելուն, դրսևորվեց հայերի ցեղասպանության միջոցով: Երբևէ իրական փոխզիջման և կոնսենսուսի չգնալու քաղաքականությունը դե ֆակտո իր տարածքում բնակվող տեղաբնակների նկատմամբ բացատրում է Թուրքիայում հասարակական ճաքի մեծացման հնարավորությունը, որը հետզհետե դառնում է դժվար վերահսկելի:

Ազգայնականության արքետիպը թուրքական ինքնության վերահաստատման գործում

Թուրքական ազգայնականության խնդրի ուսումնասիրությունը թույլ է տալիս հիմնավորել դրանում արքետիպային դրսևորումները, որոնք վկայում են հայերի ցեղասպանության իրականացման գործում անշեղ վարքագծային մոդելի մասին:

Այս մոդելը կարելի է հիմնավորել նաև թուրք հետազոտողների համապատասխան մտածումների վերլուծության միջոցով: Օրինակ՝ Հասան Ջեմալը նշում է. «Ազգ-պետությունների մեջ շարժիչ ուժը ազգայնականությունն է, որը մի վիրուս է, երբ թվում է, թե ձեր ազգայնականությունն ամենագեղեցիկն է: Դուք սկսում եք մյուսներին դարձնել օտար և նույնիսկ անվանում թշնամի: Եթե հարցնեք՝ ի՞նչ է Հայոց ցեղա-

[54] **Akcam T.** From Empire to Republic. Turkish Nationalism and The Armenian Genocide. 2004, p. 40.

սպանությունը, ես կասեմ, որ դրա հիմքում ընկած էր թուրքական ազգայնականությունը: Եթե դուք ուսումնասիրեք, թե ինչպես է ստեղծվել ազգ-պետությունը Թուրքիայում, ապա կտեսնեք, որ դա այնպիսի մի պատմական ընկալում է, որի համաձայն՝ քրդերը պետք է մոռանան իրենց քուրդ լինելը, հայերը պարտավոր են մոռանալ իրենց ցավերը, ալևիները պարտավոր են մոռանալ իրենց ալևի լինելու փաստը, իսկ հավատացյալ մուսուլմանները չպետք է ազատ լինեն հասարակության մեջ իրենց հավատքը ցույց տալու հարցում, և ամեն ինչը պետք է մնա հսկողության տակ: Այսպիսով՝ Անատոլիայում պետք է ստեղծվի թուրքական ազգային պետությունը: Սա էր ծրագիրը» [55]: Հետևապես՝ այս ծրագրի իրականացման հարցում խոչընդոտներ էին նաև հայերը, իսկ ծրագրի իրականացումը պահանջում էր համապատասխան մոդելի մշակում, որտեղ «հայերի հարցի» լուծումը պետք է իրականացվեր և իրականացվեց ցեղասպանության միջոցով:

Մեկ այլ թուրք հետազոտող Հասան Օքթայը ևս նշում է, որ թուրք ազգայնականությունը մշակութային ազգայնականություն է[56]: Այս ամենը փաստում է, որ նույնիսկ հայոց ցեղասպանությունից հարյուրամյակ անց թուրքական ազգայնականությունը, որը բխում է նրանց ավանդույթից, նրանց իսկ հակամշակույթի անբաժան մասն էր: Դա նշանակում է, որ որքան էլ աշխարհը ցանկանար, որ թրքական ցեղը քաղաքակրթվեր, միևնույն է, այն մշտապես փորձելու էր սեփականել ուրիշինը:

Թուրքական ազգայնականությանը ավելի խիստ բնորոշում է տալիս Ա. Այվազյանը, ով իրավացիորեն նշում է, որ իրականում Հայոց ցեղասպանության հետևանքներից մեկը եղավ այն, որ Եվրոպայի մերձակայքում ստեղծվեց առաջին *ֆաշիստական պետությունը*՝ Թուրքիայի Հանրապետությունը, որն իր հիմնական բնորոշ գծերով նույնանում էր ավելի ուշ

---

[55] **Ջեմալ Հ.** Հայոց ցեղասպանության հիմքում ընկած է թուրքական ազգայնականությունը,http://civilnet.am/2014/12/11/hasan-cemal-climbing-the-mountain-program/ (27.04.2015).

[56] **Օքթայ Հ.** Թուրք ազգայնականությունը մշակութային ազգայնականություն է, /http://karabakhinfo.com/3978?lang=hy (05.05.2015).

Իտալիայում, Գերմանիայում և Եվրոպայի մի շարք այլ պետություններում առաջացած ֆաշիզմին ու նացիզմին[57]:

Սա վկայում է այն մասին, որ Թուրքիան՝ համիդյան, երիտթուրքական, աթաթուրքյան շրջաններում, ըստ էության, երբեք չի փոխել իր քաղաքականությունը քրիստոնեական քաղաքակրթության կրող հայ ազգի նկատմամբ, քանի որ նույնիսկ այսօր այն շարունակում է ցանկացած մեթոդով գործնական քաղաքականության տեսանկյունից վնասել հայերին:

Հետաքրքրական է, որ թուրքական ազգայնամոլությունն օրենսդրորեն ամրացվել է նաև 1937 թ. սահմանադրության մեջ՝ առավել բարեհունչ «ազգայնականություն» (*Milliyetçilik*) անվան տակ, որն անթաքույց նպատակ է դնում ձուլելու ոչ թուրք էթնոսներին ու իրավականորեն նույնացնում է նրանց թուրքերի հետ: Ու թեև հետագայում թուրքական «ազգայնականության» հայեցակարգն այլևայլ մեկնություններ է ստացել, նրա ազգայնամոլական բնույթն ու էությունը մնացել են անփոփոխ[58]:

Այս տեսանկյունից կարևոր է նաև նշել Ա. Այվազյանի կողմից առանձնացված թուրքական ֆաշիզմի որոշ հիմնական հատկանիշները՝

- *Թուրքական ազգայնամոլությունը (շովինիզմը) ու ցեղասպան քաղաքականությունը:*
- *Ամբողջատիրությունը:* Ընդհուպ մինչև 1940-ական թթ. երկրորդ կեսը Թուրքիան միակուսակցական պետություն էր: Սակայն այսօր էլ «ժողովրդավարական» Թուրքիան չի թաքցնում իր ամբողջատիրական նկրտումները՝ զրկելով ազգային փոքրամասնություններին, մասնավորապես՝ հայերին վերահաստատելու իրենց ինքնությունը:
- *Պետականապաշտ կապիտալիզմը (էտատիզմ):* 1937 թ. թուրքական սահմանադրությունը հաստատեց պետության կարգավորող դերը ոչ միայն տնտեսության, այլև գաղափարախոսության մեջ:
- *Առաջնորդամոլությունը և անձի պաշտամունքը:* Թուրքիայում Աթաթուրքի պաշտամունքը մինչ օրս ուժի մեջ է:

---

[57] **Այվազյան Ա.** Թուրքիայի Հանրապետությունը պատմության առաջին ֆաշիստական պետությունն է, /«Հայաստանի զրուցակից», № 10 (173), 18 մարտի 2011թ.:

[58] **Այվազյան Ա.** …:

• *Ռազմամոլությունը և ագրեսիան:* Թուրքիան աշխարհի ամենառազմականացված պետություններից է. թուրքական բանակն իր թվաքանակով ութերորդն է աշխարհում և երկրորդը՝ ՆԱՏՕ-ում (ԱՄՆ-ից հետո):

Նույնիսկ Խորհրդային Միության փլուզումից հետո թուրքական քաղաքականությունը նորանկախ Հայաստանի նկատմամբ չփոխվեց՝ կրկին ընդունելով բացահայտ ագրեսիվ բնույթ, ներառյալ՝ երկկողմ շրջափակում, Հայոց ցեղասպանության ժխտում, դիվանագիտական հարաբերությունների մերժում, աջակցություն Ադրբեջանին և մյուս ուժերին հայասպանության գործում, ինչի վառ ապացույցը Սումգայիթում, Բաքվում, Քեսաբում հայերի ցեղասպանության նոր փորձերն էին:

Քեմալի ժամանակ որոշակիորեն փոխվում են արտաքին ընկալումները, սակայն խորքում թուրքական քաղաքականությունը մնում է նույնը: Քեմալը ասում է, որ «իսլամութիւնը լոկ կրօն է եւ ոչ ազգութիւն. Օսմանցի ազգ չկայ, այլ կայ թուրք ժողովուրդ»[59]: Այսինքն՝ իսլամը դադարում է լինել թուրքական քաղաքականության շարժիչ ուժը օսմանյան կայսրության փլուզումից հետո տարբեր ազգերի ստրկացման, հնազանդեցման, հպատակեցման և նախկին ազդեցությունը պահպանելու տեսանկյունից: Նախկինում «թուրք» վիրավորական ընկալումը վերաիմաստավորվում է որպես ազգային պատկանելության ստեղծման լծակ: Այսինքն՝ Քեմալի խորամանկ քաղաքականությունն ուղղվում է կայսրության տապալումից հետո ցեղասպանված, կեղեքված, ունեզրկված ազգերին կեղծ մեկ միասնական ժողովրդի անվան ներքո համախմբելուն՝ նոր աշխարհիկ պետության ստեղծման թյուր պատրանքով:

Այս հարցում հատկանշական են Ռուբենի խոսքերը. «Եւ իրօք այս եզրակացութեան կը յանգի մարդ, եթէ դիտէ հեռունէն, տեսնէ միայն Թուրքիոյ արտաքինը, չթափանցէ յեղափոխական դէկրէտներու իսկական արժէքին մէջ եւ գնահատէ ըստ ձեւի միայն, ոչ ըստ էութեան»[60]:

Աթաթուրքի կառավարման շրջանում առաջ քաշված փոփոխությունները Ռուբենը գնահատում է հետևյալ կերպ. «... եթէ մօտենանք եղած

---

[59] **Շիրինյան Լ.** Ռուբեն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը (երկրաքաղաքական վերլուծություն): Երևան, 2004, էջ 146:
[60] **Շիրինյան Լ.** ..., էջ 138:

փոփոխութեանց ըստ էութեան ու ըստ հիմունքներու, թէ Թուրքիան փոխած է իր շապիկը միայն, բայց մնացեր է նոյնը ինչ որ էր: Թուրքը մնում է առաջուայ թուրքը[61]: Քեմալական ռէժիմի առաջին նպատակն է ստեղծել թուրք ազգ: Տարօրինակ պէտք չէ թուի ասիկա: Թէեւ Թուրքիան դարեր գոյութիւն է ունեցեր իբր աշխարհակալ պետութիւն, թէեւ ան գերեզման է իջեցուցեր բազմաթիւ մանր ու խոշոր ժողովուրդներ, բայց ինքը չէ հանդիսացեր իբր ազգային անհատականութիւն մը: Թուրք կայսրութեան վերջալոյսին է որ կը մտածուի կազմակերպել թուրք ազգային ոգի[62]: Մինչ այսօր «թուրք» որակումը վիրաւորական նախատինք էր թուրքին համար, որովհետեւ «թուրք» յորջորջումը համազօր էր «բարբարոս», «տգետ», «վայրենի» որակումներին: Ինչպէս այսօր երբ ատրպէճանցիին թաթար կամ տաճիկին մոնգոլ ըսենք՝ կը վիրաւորուին, այդպէս ալ երէկ օսմանցին կը վիրաւորուէր, երբ «թուրք» կոչէինք զինք»[63]:

Հետևապես՝ Ռուբենի մտորումների և քեմալական Թուրքիայի քաղաքականության համադրության միջոցով հիմնավորվում է, որ կրկին այլ ազգերի մշակույթը գողանալու և յուրացնելու ձգտումը (մասնավորապես՝ քրիստոնեական քաղաքակրթությունը) դառնում է սեփական «ազգ» ստեղծելու գործիք արդեն աշխարհիկության քողի ներքո: Այս հարցում դիպուկ են Ռուբենի խոսքերը. «Թուրք կուլտուրա՝ եթէ որոնէք, չէք գտներ: Այդպիսին չկայ, ստացական է ոչ թէ այնքան Միջին Ասիայէն, այլ պարսիկէն, արաբէն, Բիւզանդիոնէն, հայէն եւն: Թրքական մշակոյթ, տնտեսական պայմաններ եւն. չկան, որ կարողանային այլատարր ցեղերը ձուլել, այնպէս ինչպէս Ամերիկայի մէջ տեղի կունենայ»[64]: «Ձուլման ամենամեծ ազդակը թուրք լեզուն կը համարուի, եւ այդ լեզուն ընդհանրացնելու համար կանգ չեն առներ որեւէ խոչընդոտի առաջ: Ղուրանը թուրքերէնի

---

[61] **Շիրինյան Լ.** Ռուբեն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը (երկրաքաղաքական վերլուծություն): Երևան, 2004, էջ 139:
[62] **Շիրինյան Լ.** …, էջ 143:
[63] **Շիրինյան Լ.** …, էջ 143:
[64] **Շիրինյան Լ.** …, էջ 147:

թարգմանելը ոչ այնքան իսլամ կրոնը ժողովրդականացնելը նպատակ ունի, այլ աւելի թուրք լեզուն ընդհանրացնելը»[65]:

Այս ամենը ապացուցում է, որ Քեմալի օրոք նույնպես թուրքական ներքին քաղաքականությունը անհանդուրժողական էր բոլոր այլազգիների նկատմամբ, ում մշակույթը կամ քաղաքակրթական արժեքները կողոպտում էր թուրքը՝ պահանջելով այլ ազգերից թրքանալ կամ ոչնչանալ, լավագույն դեպքում հեռանալ: Կրկին հարկ է հիշել Ռուբենին, ով նշում է, որ « ... թրքութիւնը կպարտադրուի իր 500 բառով, իր նախապատմական մշակոյթով, բարբարոս աւանդութիւններով, առնուազն միամտութիւն պիտի ըլլայ յաջողութիւն սպասել, այդ հակառակ է թէ՛ քաղաքակրթութեան, թէ՛ պատմութեան ընթացքին»[66]:

Այս ամենին հակառակ թուրք հեղինակ Օքյարը նշում է, որ թուրքական ազգայնական գիտակցությունը կամ «թուրքական ազգայնական միտումները» գոյություն ունեին մինչև 19-րդ դարի վերջը[67], ինչը գրեթե ամբողջությամբ վերացավ թուրքական քաղաքականությունից և խորթ դարձավ օսմանյան հասարակությանը: Իհարկե, Օքյարի այս պնդումը փորձ է ծպտելու 20-րդ դարասկզբին տեղի ունեցած առաջին ցեղասպանության՝ Հայոց եղեռնի գործում թուրքական ազգայնականության ամենավայրագ դրսևորումները՝ փորձելով դրանք ներկայացնել որպես տեղահանության և առաջին աշխարհամարտի անդառնալի հետևանք: Սակայն պատմաքաղաքական փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ոչ միայն 20-րդ, այլև 21-րդ դարում ևս թուրքական ազգայնականության դրսևորումները թաքցնել չի հաջողվում ոչ մեկին: Թուրքական ցեղապաշտական նկրտումները պահպանվում են մինչ օրս:

20-րդ դարասկզբին թուրքական ազգայնականությունը սկսեց դանդաղ ներթափանցել երկրի մտավորական ոլորտ, և շուտով թուրքական վերնա-

---

[65] **Շիրինյան Լ.** Ռուբեն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը (երկրաքաղաքական վերլուծություն): Երևան, 2004, էջ 147:

[66] **Շիրինյան Լ.** ..., էջ 151:

[67] **Okyar O.** Ataturk's Quest for Modernism/ in Landau, J. (ed.) Ataturk and the Modernisation of Turkey Boulder: Westview Press, 1984, p. 46.

խավը վարակվեց ազգայնականության վիրուսով[68]: Այս գործում ազդեցիկ դեր խաղաց հատկապես Զիյա Գյոքալփը, որը ճանաչվեց «որպես թուրքական ազգայնականության հայր», ով իր բազմաթիվ հոդվածներում ձևավորեց թուրքականության կերպարը[69]:

Գյոքալփը, լինելով սունի-մուսուլման, ուսումնասիրել է արևմտյան մշակույթը (մասնավորապես՝ ֆրանսիական մշակույթը): Նա ձգտել է ստեղծել իր համաերկրացիների համար արդյունավետ ինքնություն: Իսկ Ֆրանսիան նա ընկալում էր Դյուրկհեյմի և Բերգսոնի գաղափարներով: Որպես թուրքական ինքնության սիրտ՝ Գյոքալփը կարևորում էր թուրք լեզուն[70]:

Չնայած այն բանին, որ Գյոքալփը և նրա ժամանակակիցները թուրք ազգի սահմանման մեջ ներառել էին ռասայական և կրոնական չափանիշներ՝ այնուամենայնիվ, առաջին տեղում դրված էր թուրքական էթնոսի հարցը, այսինքն՝ այն, ինչից զրկված էր թուրք ինքնությունը: Ահա այս նոր սահմանումը, որտեղ էթնոսը մղվում էր առաջին պլան, տարբերվում էր նախորդ ընկալումներից՝ օսմանցի, մուսուլման և այլ: Այսինքն՝ պատմությունը պետք է վերապատմվի, իսկ նոր ինքնության որոնման հարցում անցյալը պետք է նորից կերտվի: Հիմնական նպատակը մինչ իսլամական արմատներին վերադարձն էր, այսինքն՝ թուրքական ազգային ինքնության արմատների վերհանումը, որտեղ *թուրքականությունը* պատմականորեն ավելի առաջնային է, քան *մուսուլմանությունը*[71]:

Ինքնության սահմանման հարցում Գյոքալփը կրոնը դիտում էր վերջին տեղում: Նրա կարծիքով՝ կրոնը քաղաքակրթական տարր է՝ լայն, անձև:

---

[68] **Tachau F.** The Political Culture of Kemalist Turkey/ in Landau, J. (ed.) *Ataturk and the Modernisation of Turkey* Boulder: Westview Press, 1984, p. 65.

[69] **Goldschmidt A. Jr.** A Concise History of the Middle East San Francisco: Westview Press, 1991, p. 174.

[70] **Celarent B.** Turkish Nationalism and Western Civilization by Ziya Gökalp / American Journal of Sociology, Vol. 117, No. 5 (March 2012), pp. 1556-1563.

[71] **Azarian R.** Nationalism in Turkey: Response to a Historical Necessity / International Journal of Humanities and Social Science Vol. 1 No. 12; September 2011, pp. 72-82.

Հետևապես՝ հասարակության հիմքը լեզվական և մշակութային միասնությունն է: Այն, ինչ Գյոքալփը սահմանում է որպես ազգ[72]:

Վերլուծելով Գյոքալփի՝ «Թուրքական ազգայնականություն և արևմըտյան քաղաքակրթություն» աշխատանքը՝ Բ. Սելարենտը իրավացիորեն նշում է, որ նրա աշխատանքները նպաստում են ֆաշիզմին, իսկ հարցն ավելի սուր է հայերի ջարդերի և Աթաթուրքի բռնապետության տեսանկյունից[73]:

Ինքնության վերաձևակերպման փորձը, ըստ էության, ոչ թե թուրքերի մոտ ինքնագիտակցության բարձրացման և պատմական արմատների վերագտնումի մղում էր, այլ ավելի ճիշտ՝ 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին բազմաթիվ վայրագությունների, ոճիրների և հայերի ցեղասպանության հետևանքով առաջացած մեղքի քողարկման և պատասխանատվությունից խուսափելու հաջողված քաղաքականություն:

Ազարյանը նշում է, որ թուրքական ազգայնականությունը եղել է բնական և, հնարավոր է, անխուսափելի՝ պայմանավորված պատմական հանգամանքներով՝ որպես միջազգային քաղաքական իրողությունների հետևանք, որտեղ ազգի գոյատևման խնդիրը դարձել էր առաջնահերթություն՝ չթողնելով որևէ այլընտրանք: Այս պատմական իրավիճակի դեմ էր, որ դրսևորվեց թուրքական ազգայնականությունը՝ այդպիսով դառնալով ավելի ընկալելի: Ավելի կարևոր հարց է, թե որ աստիճանում այն եղավ հաջողված: Ազդվելով արտաքին գործոններից և թելադրվելով վերևից ներքև՝ այդ ազգայնականությունը մինչ օրս առկա է[74]: Սակայն նկատենք, որ պատմաքաղաքական իրավիճակը ձևավորվում է սուբյեկտների կողմից, իսկ Օսմանյան կայսրությունը 20-րդ դարասկզբի պատմաքաղաքական զարգացումների (Առաջին աշխարհամարտ) ակտիվ մասնակիցներից էր: Ուստի այդպիսի իրավիճակի ձևավորման գործում Օսմանյան կայսրության «ներդրումը» որպես պատերազմող կողմ, միանշանակ, մեծ

---

[72] **Celarent B.** Turkish Nationalism and Western Civilization by Ziya Gökalp / American Journal of Sociology, Vol. 117, No. 5 (March 2012), pp. 1556-1563.

[73] **Celarent B.** …, pp. 1556-1563.

[74] **Azarian R.** Nationalism in Turkey: Response to a Historical Necessity / International Journal of Humanities and Social Science Vol. 1 No. 12; September 2011, pp. 72-82.

էր: Իսկ այդպիսի պատմաքաղաքական իրավիճակի ձևավորման գործում թուրքական ազգայնականությունը ոչ թե հետևանք էր, այլ պատճառ:

Ազարյանը եզրակացնում է, որ ինքնության հարցում հիմնական փորձությունը դեռևս առջևում է: Վերջին շրջանում նորից ակտիվացող կրոնական ինքնության մարտահրավերների հետ բախման ժամանակ պարզ կդառնա, թե որքան ամուր է թուրքական ինքնությունը, որպեսզի դիմակայի փոփոխության քամուն[75]:

Հայերի ցեղասպանությունն իրավացիորեն կապելով թուրքական ինքնության հետ՝ Աքչամը նշում է, որ թուրքական գիտակցության մեջ կայսրության պահպանման նպատակով արմատավորվում էին ներքին և արտաքին թշնամու կարծրատիպերը, քանի որ թվացյալ թշնամին կարող էր սպառնալ օսմանների տապալմանը և կայսրության անկման[76]:

Այսինքն՝ եթե փորձենք ընկալել Աքչամի միտքը խորությամբ, ապա դրանից կարելի է ենթադրել, որ թուրքերի բոլոր ոճիրների և ցեղասպան քաղաքականության պատճառը նրանց՝ իրենց կայսրությունը կորցնելու վախն էր, և, ինչպես նշում է Աքչամը, այդ ցեղապաշտական քաղաքականությունը և բռնության բնազդը հոգեբանական դրսևորումներ էին, որոնք կյանքի էին կոչվում բռնի վարքագծի տեսքով: Կայսրության կորստի մտավախությունը որոշ դեպքերում հասնում էր ցնորքի և ազգային գիտակցության մեջ ստեղծում էր որոշակի անհավասարություն, ինչն արտացոլվում էր սեփական անձի գերկարևորման չափազանցության մեջ, քանի որ թուրքն իրեն համարում էր «մեծ կայսրության» զավակը՝ միևնույն ժամանակ ունենալով ազգային ինքնագիտակցության քրոնիկական պակաս և միջակության բարդույթ[77]:

Իհարկե, Աքչամի դիտարկումներն այս առումով ընդունելի են, սակայն նա չի նշում այդպիսի բարդույթների, հոգեբանության և հետևապես՝ վարքագծի պատճառների և արմատների մասին:

---

[75] **Azarian R.** Nationalism in Turkey: Response to a Historical Necessity / International Journal of Humanities and Social Science Vol. 1 No. 12; September 2011, pp. 72-82.

[76] **Akcam T.** From Empire to Republic. Turkish Nationalism and The Armenian Genocide. 2004, p. 39.

[77] **Akcam T.** …, p. 39.

Այս տեսանկյունից հարկ է նկատել, որ այլոց մշակույթը, ունեցվածքը՝ ինչպես հոգևոր, այնպես էլ նյութական, զավթած ցեղը, բնականաբար, պետք է հայտնվեր նման հոգեբանական վիճակում, քանի որ շատ լավ գիտակցում էր, որ այն ամենը, ինչ նա ունի, ամենևին էլ իր ստեղծածը չէ, նա չէ այդ ամենի իրական տերը և ըստ էության՝ նա մի պարզ «գող» կամ «կողոպտիչ» է և մի օր պետք է պատասխան տա իր արարքների համար: Ուստի, մեր համոզմամբ, ցեղասպան և բռնաբարո քաղաքականության և ոչնչացնողի հոգեբանությունը մի օր պատասխանատվության առաջ կանգնելուց խուսափելն էր, իսկ եթե չլինեին պահանջատերեր, չէր լինի նաև պատասխանատվություն:

Հարկ է նկատել, որ մինչ օրս էլ Թուրքիան չի ազատվել այդ հոգեբանական բարդույթից, քանի որ կրկին այլոց քաղաքակրթական արժեքների և մշակույթի զավթիչն է մնացել՝ չկրելով որևէ պատասխանատվություն: Եվ ցանկացած գնով այսօր Թուրքիայում ազգային ինքնության վերականգնման, վերագտնումի բոլոր փորձերը այդ տարածքում ապրող ազգերի կողմից, նույն բիրտ և դաժան քաղաքականությամբ ճնշվում են: Թուրքիան այսօր էլ գիտակցում է, որ նույնիսկ 100 տարի անց չի կարողացել հաղթահարել իր ամենամեծ խնդիրը՝ այն ճաքը, որը երբևէ չի վերանում և չի լցվում որևէ նյութով: *Թուրքիան շարունակում է մնալ կայսերապաշտական նկրտումներով* «ճաքած պետություն[78]» (ձևակերպումը ամերիկյան քաղաքագետ Սեմյուել Հանթինգթոնինն է), *բայց ոչ երբեք ազգ-պետություն, ինչին ձգտել է դարեր շարունակ*:

Թուրքիայում քաղաքակրթական ճաքերն այսօր էլ լատենտ պահպանվում են: Դրանք վերացնելու Թուրքիայի փորձերը հարմար առիթի դեպքում կարող են հանգեցնել նոր բռնությունների և նույնիսկ նոր ցեղասպանության: Կամ այդ բազմազգ պետությունը, եթե ուզում է պահպանվել, պետք է գործնականում հրաժարվի թուրք ազգի դոմինանտ դերից և տա լիիրավ ինքնավարություն պետության տարածքում ապրող ազգերին՝ իրենց ինքնության վերագտնման և վերահաստատման համար:

---

[78] **Huntington S.** The Clash of Civilizations and the Remaking of World Order. New York, 2003, p. 139.

Աքչամի համոզմամբ՝ հիմնական խնդիրը, որին բախվում է մերօրյա Թուրքիան, բխում է այն փաստից, որ սոցիալական հանրույթները՝ ինչպես անհատները, դժվարանում են ինտեգրել բացասական փորձը կամ անցյալի «վնասվածքները» իրենց կյանք կամ իրենց ինքնաընկալման գիտակցության մեջ: Վնասված ազգային հպարտության ամենաբացասական դրսևորումներից մեկը, որը հատուկ է Թուրքիային, այդ հսկայական շոկի արդյունքն է[79]:

Անդրադառնալով անհատի և ազգի փոխառնչության հարցերին՝ Աքչամը նշում է, որ անհատը և ազգը առանձին կողմեր չեն: Այս երկու կոնցեպտների զուգակցումն է խթանում միևնույն ազգի անհատների նույնականացումը մեկ այլի հետ, և այդժամ դժվար է դառնում տարաբաժանություն դնել մի ազգի կողմից մյուսի նկատմամբ գործած ոճիրների միջև[80]: Այս վերլուծությունը հիմնավորում է, որ թուրք ազգը և նրա արքետիպը շարունակում են իրավացիորեն նույնականանալ թուրքերի գործած ոճիրների հետ այն ազգերի գիտակցության մեջ, որոնք եղել են և կան որպես թուրքերի ցեղապաշտական բնազդի զոհեր:

Ցեղասպանությունը ազգային գիտակցության արդյունք է, և դա կենտրոնական դեր է խաղացել հայերի ցեղասպանության գործում: Ազգային գիտակցությունը կարևոր է հայերի ցեղասպանության բնութագրիչների և պայմանների ընկալման համար[81]:

Համեմատելով հայերի ցեղասպանությունը հրեաների հոլոքոստի, թուրքական քաղաքականությունը գերմանական քաղաքականության հետ՝ Աքչամը օգտվում է Էլիասի առաջ քաշած հինգ դրույթներից և առանձնացնում է թուրքերի ազգային գիտակցության ընկալման հիմնական հինգ տարրեր՝

- ազգային գիտակցություն և տեղանք՝ «միջին դիրք»,
- գերակայության աճող կորստի խնդիր,
- անկայունությունը և ուշ ազգայնացումը ազգ-պետության ձևավոր-

---

[79] **Akcam T.** From Empire to Republic. Turkish Nationalism and The Armenian Genocide. 2004, p. 40.
[80] **Akcam T.** .., p. 42.
[81] **Akcam T.** .., p. 45.

ման գործում,

- ռազմական և բյուրոկրատական կաստան և ազգային արժեքները,
- առաջնորդի որոնումը, ով կմիավորեր երկիրը[82]:

Առաջինի պարագայում խոսքը Անատոլիայի կարևորության մասին է, որը կենսական նշանակություն ունի Թուրքիայի գոյության համար: Դրանով էր պայմանավորվում հայերի նկատմամբ հատուկ քաղաքականությունը, որը հանգեցրեց ցեղասպանության: Սակայն փաստենք, որ թուրքերի ընկալմամբ Արևելյան Անատոլիան իրականում հայերի պատմական հայրենիքն է: Հետևապես՝ հայերի հայրենազրկումը կարող էր վերջնականապես լուծել Անատոլիայի խնդիրը:

Թուրքերի ցեղապաշտական գիտակցության երկրորդ բաղադրիչը գերակայության կորստի վախով էր պայմանավորվում, քանի որ թուրքերի իշխանությունը բացառապես հիմնված էր վախի, այլ ոչ թե հարգանքի վրա:

Երրորդ խնդիրը, որի մասին նշում է Աքչամը, կապված է անկայունության և ուշ ազգայնացման հետ: Սակայն նկատենք, որ դա ուղղակիորեն բխում է նախորդ երկու խնդիրներից, ինչպես նաև հաջորդ երկուսից, որոնց մասին կխոսենք ստորև: Իհարկե, վախի մթնոլորտում, բռնությամբ և ոճրագործությամբ որևէ պետության մինչ օրս չի հաջողվել դառնալ ազգային կամ ազգ-պետություն: *Եթե որևէ հասարակության մեջ չեն հարգվում հավասարապես բոլոր հանրույթների՝ լինեն ազգեր, էթնիկ խմբեր կամ այլ միավորներ, իրավունքները, ավանդույթները և մշակույթը, ապա այդպիսի հասարակությունը երբեք չի կարող դառնալ ազգ-պետություն:*

Առանց սեփական գերակայության առավելապաշտական նկրտումների և այլ ազգերի նկատմամբ իրենց տիրազորության բարդույթի հաղթահարման՝ Թուրքիան երբեք չի եղել և չի կարող դառնալ ազգ-պետություն: Լավագույնը, որ այն կարող է անել, դաշնայնացման և համա-

---

[82]**Akcam T.** From Empire to Republic. Turkish Nationalism and The Armenian Genocide. 2004, p. 49-54.

հասարակական (կոնսոցիատիվ) ժողովրդավարության ուղիով ընթանալն է:

Սակայն այդպիսի քաղաքականություն չորդեգրելը 20-րդ դարասկզբին և նաև այսօր բացատրվում է չորրորդ բաղադրիչով, որը բնորոշ է թուրքերի ազգային գիտակցությանը: Խոսքը թուրքերի արժեքային համակարգում ռազմական և բյուրոկրատական կաստայի մասին է, որը, ինչպես նշում է Աքչամը, թուրք ազգային ինքնության գլխավոր շարժիչն է:

Արդյունքում՝ ռազմական արժեքները վճռորոշ են եղել խնդիրները բռնության միջոցով լուծելու թուրքական մշակույթում[83]: Ուստի սա մեկ անգամ ևս փաստում է, որ թուրքական ցեղապաշտական քաղաքականությունը, ըստ էության, հակամշակույթ է:

Հայերի ցեղասպանության գլխավոր գործոններից մեկը թաքնված է թուրքական ազգային ինքնության գիտակցության բնութագրիչների մեջ[84]:

Իսկ հինգերորդ բաղադրիչը՝ պետության միավորման նպատակով առաջնորդի որոնման հարցը, մշտապես եղել է և կմնա թուրքական ինքնության կարևոր խնդիրներից մեկը մինչ այն պահը, երբ առաջնորդ կդառնա այնպիսի անձ, ով չի առաջնորդվի ցեղապաշտական սկզբունքով կամ կեղծ աշխարհիկությամբ: Առաջնորդ, որի կերպարի գիտակցումը դեռ դուրս է թուրքական ազգային ինքնության ընկալման շրջանակներից:

---

[83] **Akcam T.** From Empire to Republic. Turkish Nationalism and The Armenian Genocide. 2004, p. 53.

[84] **Akcam T.** …, p 59.

Եզրակացություն

Ազգայնականության թուրքական արքետիպի և հայերի ցեղասպանության խնդրի համակողմանի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում ստորև առանձնացվում են որոշ հիմնական եզրակացություններ:

Հայերի ցեղասպանության կրոնական տեսանկյան վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ հայերի և այլ քրիստոնյաների նկատմամբ օսմանական ջարդարարությունը ոչ թե իրականում բխում էր իսլամական կրոնական հիմքերից, այլ կրոնը բացառապես օգտագործվում էր որպես օսմանական զավթողական և սպանդի քաղաքականության քողարկիչ, քանի որ, ինչպես ցույց է տալիս պատմական փորձի վերլուծությունը, իրականում ոչ բոլոր իսլամադավան պետություններն են թշնամաբար տրամադրվում այլ քաղաքակրթական արժեքների և դրանց կրողների նկատմամբ, ինչպես դա անում էր Օսմանյան Թուրքիան:

Ցեղասպան վարքագծի հիմքերը թաքնված էին օսմանցիների ցեղապաշտական կարծրատիպային սկզբունքների մեջ, իսկ այդ պայմաններում օսմանցիների համար քաղաքակրթական քրիստոնեական մոդելը չէր կարող իրականում լինել ընդունելի, եթե չասենք մերժելի, ինչի մասին փաստում է նրանց իրական քաղաքականությունը՝ ուղղված քրիստոնյա քաղաքակրթության և հատկապես՝ հայերի դեմ:

Աբդուլ Համիդ Բ-ի, երիտթուրքերի և հետագայում Աթաթուրքի օրոք Թուրքիայի որդեգրած աշխարհիկացումը մեծապես Արևմուտքին հաճոյանալու, անցյալի վայրագությունները ծպտելու և ազգային-ցեղապաշտական նկրտումները քողարկելու քաղաքականություն էր, քանի որ, ըստ էության, այն շարունակվում էր ցանկացած հարմար առիթով՝ մշտապես քողարկվելով կրոնական շղարշով:

Հայերի ցեղասպանության օսմանական հակամշակույթ-ավանդույթի ուսումնասիրությունը թույլ է տալիս միանշանակ պնդել, որ օսմանական կայսրության կողմից տարբեր ժամանակաշրջաններում հայերի դեմ իրականացված ցեղասպան քաղաքականությունը բխում էր օսմանական հակամշակույթ-ավանդույթից, քանի որ պատմության ընթացքում

միևնույն վարքագծի շարունակական և հետևողական կրկնությունը փաստում է արդեն տվյալ երևույթի ավանդական հիմքի մասին: Այս դեպքում օսմանական վարքագիծը ոչ թե մշակույթ, այլ *հակամշակույթ* էր, որը հակառակ էր քաղաքակիրթ աշխարհի կողմից ընդունված մշակույթի ընկալմանը:

Թուրքիան հնարավորության դեպքում մշտապես պայքարել է այլ քաղաքակրթական արժեքներ կրող ազգերի դեմ դրանք յուրացնելու նպատակով՝ ժամանակի ընթացքում փոխելով բացառությամբ պայքարի մեթոդները և մեխանիզմները: Օսմանական հակամշակույթ-ավանդույթի սկզբունքները շատ հնարավոր է, որ այսօր էլ չեն վերացել և կարող են դրսևորվել երկրաքաղաքական քաոսի կամ վերադասավորումների դեպքում:

<u>Թուրքական ազգայնականության և արքետիպի փոխառնչության</u> ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերի ցեղասպանության թուրքական ազգայնականության հիմքում ընկած էին արքետիպային կարծրատիպերը, որտեղ «գորշ գայլի», «ցեղապաշտի՝ իր տեսակի առավելության» խորհրդանիշերը մշտապես ունեցել են վարքագծային դրսևորում՝ որպես կոլեկտիվ անգիտակցական:

Ինչպիսին էլ եղել են օսմանական ինքնության սահմանման կամ վերասահմանման փորձերը, միևնույն է՝ թուրքական ազգային արքետիպը անփոփոխ էր, որտեղ գերակայում էին բնազդները:

Օսմանցիների անասնական բնազդը՝ ուղղված սեփական տեսակի՝ այլոց զոհողության միջոցով պահպանելուն և տարածապաշտական քաղցը բավարարելուն, դրսևորվեց հայերի ցեղասպանության միջոցով: Երբևէ իրական փոխզիջման և կոնսենսուսի չգնալու քաղաքականությունը դե ֆակտո իր տարածքում բնակվող տեղաբնակների նկատմամբ մշտապես դրսևորվում էր «գորշ գայլի» վարքագծով:

Այս ամենը ևս մեկ անգամ փաստում է, որ օսմանական ցեղասպան բնազդը՝ որպես վարքագծային արքետիպ, ուղղված էր, ըստ էության, ոչ միայն հայերի՝ որպես էթնոսի դեմ, այլև այն մշակույթի և քաղաքակրթության, որը եվրոպական էր և առավելապես՝ քրիստոնեական:

«Գորշ գայլի» արքետիպը լիովին բնորոշում է օսմանական հակամշակույթը և հակաքաղաքակրթությունը, քանի որ նույնիսկ քաղաքակիրթ աշխարհը թուրքական ցեղապաշտական բնազդի պոռթկումը որակեց որպես *հանցանք մարդկության և քաղաքակրթության դեմ*:

Ուսումնասիրելով *ազգայնականության արքետիպը թուրքական ինքնության վերահաստատման տեսանկյունից*՝ անհրաժեշտ է ընդգծել հայերի ցեղասպանության փաստը՝ որպես թուրքերի ինքնության բաղադրիչ, որից մշտապես փորձել և փորձում է ազատվել Թուրքիան:

Ինքնության վերաձևակերպման փորձը, ըստ էության, ոչ թե թուրքերի մոտ ինքնագիտակցության բարձրացման և պատմական արմատների վերագտնումի մղում էր, այլ ավելի ճիշտ՝ 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին բազմաթիվ վայրագությունների, ոճիրների և հայերի ցեղասպանության հետևանքով առաջացած մեղքի քողարկման և պատասխանատվությունից խուսափելու հաջողված քաղաքականություն:

Մինչ օրս էլ Թուրքիան չի ազատվել ինքնության քողարկման կամ վերաձևակերպման հոգեբանական բարդույթից, քանի որ շարունակում է ժխտողականությունը հայերի ցեղասպանության հարցում և խուսափում պատասխանատվությունից: Ավելին՝ այսօր Թուրքիայում ազգային ինքնության վերականգնման, վերագտնման բոլոր փորձերը այդ տարածքում ապրող ազգերի կողմից, նույն բիրտ և դաժան քաղաքականությամբ ճնշվում են: Թուրքիան այսօր էլ գիտակցում է, որ նույնիսկ 100 տարի անց չի կարողացել հաղթահարել իր ամենամեծ խնդիրը՝ այն ճաքը, որը երբևէ չի վերանում և չի լցվում որևէ նյութով: Թուրքիան շարունակում է մնալ կայսերապաշտական նկրտումներով, կեղծված ինքնությամբ «ճաքած պետություն», բայց ոչ երբեք ազգ-պետություն, ինչին ձգտել է դարեր շարունակ:

TURKISH ARCHETYPE OF NATIONALISM AND THE ARMENIAN GENOCIDE
(Resume)

Emil Ordukhanyan

In Ottoman Empire Turkish policy has demonstrated its anti-civilizational and anti-cultural overtones. It was a period that will be characterized as racist policy against humanity, civilization, and basic human values, which greatly affected not only several nations and especially Armenians, but also the advanced civilization and culture.

In fact, under the rule of Abdul Hamid II in Ottoman Empire the legal order was based on religious, sacred law of Islam, when borders between religious, social and political spheres were abolished, because Islam had become a lifestyle. In religious aspect Ottomans felt themselves superior to other nations. This fact was naturally assuming that other nations were inferior to Ottomans and they could not have the same social status. Even atheist Young Turks who came to power after Abdul Hamid II, also confirmed their racist principle of dominant nation.

For racist and Muslim Ottomans the Christian model of civilization was not possible to be accepted. It was rejected, which proves the intensions of the policy were directed against Christian civilization and especially the Armenians.

Therefore, as shown by the historical developments, Ottomans based on their chauvinistic behavior had hostile intentions against all civilizations, and they were demonstrating it on any propitious occasion.

The secularization started in the regimes of Young Turks and Ataturk was a national policy to wheedle the West and to conceal racist aspirations and genocidal behavior. In fact, after Abdul Hamid II genocidal activities by Ottomans did not end. Such activities were continued on favorable occasion. It is quite possible that the principles of such policy have not disappeared completely, and they can be displayed in the future during geopolitical chaos or possible rearrangements.

Genocidal activities of Ottomans originate from their ancient customs, because the Ottomans' nationalistic and racist stereotypes of supremacy over other

nations are established a long time ago and have become one of their archetypal characteristics. It is no coincidence that the symbol of "gray wolf" is an archetypal origin of Ottomans.

Occasionally, Ottoman fought against nations having different civilization and cultural values, to expand his own 'living space' as wolves behave in the wild.

Nowadays it seems that this behavior has not changed, except for fighting methods and mechanisms. The mass extermination of autochthonous Greeks in the northern Cyprus occupied by secular Turkey is an obvious proof of that.

The rootage of Ottoman anti-cultural traditions was also an integral part of the Turkish political order. Therefore, reforms proposed in different historical stages could not become a reality because, as Huntington states, in societies where new norms do not comply with accepted behavior and traditions, can not have a practical efficiency.

Dadrian rightly notes that Ottoman culture is a culture of massacre, because Ottomans were resolving conflicts always by massacre for achieving their goals.

The continuously manifestation of the same behavior during history proves that it was a cultural phenomenon. But in the case of Ottoman Empire we can not call that behavior as culture but *anti-culture*, which is contrary to the understanding of culture by civilized world.

Turkish anti-cultural behavior towards other cultures and civilizations is evidenced by Scottish anthropologist William Ramsay who underlines that Turkish government was considering Armenians and Greeks as dogs or pigs on which Turks have to clean the dirt of their feet. Property, home, identity, family belonged to Armenian people for centuries, were not safe from violence.

Therefore, we can exactly insist that genocidal policy against Armenians in different stages of Ottoman Empire was not caused by the religious principles, but the traditional nationalist ideology and anti-cultural archetype of behavior.

The traditional inclination to use violence for conflict resolution by cruelest methods corresponds to Turkish military traditions, which is an essential element of Turkish culture. It means that the culture of the Ottomans, in essence, was a destroying culture.

The fact that under two different Ottoman regimes (Abdul Hamid II, Young Turks) and also Kemal's secular regime were realized similar genocidal policies against Armenians who at that time were asking for reforms, proves that it was an unchangeable Turkish political model.

Akcam notes that in order to understand the Armenian Genocide from the perspective of the perpetrators, is that Turkish national identity plays a central role in understanding the characteristics of the Armenian Genocide and the conditions under which it emerged. One of the main factors that led to the Armenian Genocide is to be found in the mental conditions and characteristics of Turkish national identity. This unique national character was decisive in the creation of the Turkish Republic on the ashes of the Ottoman Empire, and it has also played a major role in making the Armenian Question a taboo issue within Turkish society.

It should be noted that until now Turkey did not get rid of its psychological complexes. Turkey still has not taken the responsibility for its barbarous activities and continues to keep the status of invader of others' civilization values and culture. Nowadays all attempts of nations living in Turkey to restore or regain their national identity are suppressed by the same violent and brutal policy.

Even after 100 years Turkey is unable to overcome its biggest problem: the gap that can not be filled up with any material. Turkey still remains a "torn country" with imperialist ambitions but not a nation-state, to which sought for centuries.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՈՒՄՆԵՐՈՒՄ

Հայկ Սուքիասյան

Հայոց ցեղասպանության հարցը այն կարևորագույն հիմնախնդիրներից է, որի նշանակությունը տարիների ընթացքում ավելի է մեծացել: Ընդհանրապես, ցեղասպանության հիմնախնդիրը պետք է դիտարկել հայկական հարցի շրջանակներում: Խնդրի այս մեթոդաբանական ձևակերպումը թույլ կտա ուսումնասիրել այն պատճառները, որոնք ընկած են ոչ միայն հայոց ցեղասպանության հիմքում, այլև դրանք կարևոր նշանակություն ունեն փոփոխվող աշխարհակարգում Հայաստանի հետագա երկրառազմավարական (գեոստրատեգիական) կոորդինատների ճշգրտման համար:

Հայոց ցեղասպանության գործում թուրքական եղեռնաբաղձ, ենիչերական արքետիպի, Բալկանյան պատերազմների և Դարդանելի ճակատագրական նշանակության մասին հիմնավոր կերպով ներկայացվեց նախընթաց նյութում:

Այս ամենով հանդերձ բավական հետաքրքրական է նաև ուսումնասիրել այն ռազմավարական հայեցակարգերը, որոնք կարող էին ազդեցություն գործել թուրք ռազմաքաղաքական վերնախավի գաղափարաբանության վրա:

Այս առումով բացառիկ նշանակություն է ստանում գերմանական ռազմավարական միտքը, որտեղ մեզ համար առավել նկատելի են Պաուլ Ռոհրբախի տեսակետները Հայաստանի աշխարհագրության, Թուրքիայի համար հայկական բարձրավանդակի ռազմավարական նշանակության վերաբերյալ, ինչպես նաև «Միջին Եվրոպայի» (Mitteleuropa) հայեցակարգի և թուրք ռազմաքաղաքական վերնախավի վրա նրա հնարավոր ազդեցության ուսումնասիրությունը: Ենթադրելի է, որ այս հայեցակարգերը մեծ ազդեցություն են ունեցել նրանց մտածումների վրա և կարող էին ծառայել հայոց ցեղասպանության իրականացման համար որպես տեսական հիմք ու իրենց հերթին նպաստել ցեղասպանության ռաճիրի մտահղացմանը:

Մենք չենք կարող բացառել, որ այդ ազդեցությունը այսօր էլ չկա կամ չի փոխանցվել միջնորդավորված ձևով ներկայիս թուրք ռազմաքաղաքական վերնախավին:

* * *

Թուրքիայի շուրջ փոխված հավասարակշռությունից առաջացած վակուումը լցրեց գերտերությունների շահերի հաշվեկշիռը, որոնցից յուրաքանչյուրն առաջնորդվեց սեփական շահերի հաշվառումով: Սակայն պետք է նշել, որ Թուրքիան ևս սեփական փրկության հարցում ուներ իր քաղաքականությունը, որի տեսական հիմքերը, միգուցե, հենց գերմանական են: Փորձենք հասկանալ, թե որտեղ է Թուրքիայի քաղաքականության մեջ այդ գերմանական հետքը:

Նախ՝ հարկ է նկատել, որ ի սկզբանե ավարառության, ուրիշների հայրենիքների կողոպուտի և բռնազավթման բնազդը թուրքական ինքնության մի մասն է: Այսինքն՝ տարածքներ բռնազավթելու մոլուցքը եղել է և կա թուրքական արքետիպի մակարդակում:

Սակայն Բալկանյան պատերազմից և Դարդանելում գերտերությունների համաշխարհային բեմականացումից հետո դեպի սեփական վաթանի սահմանների որոնումը կողմնորոշված թուրք նախամարդու համար անհրաժեշտություն առաջացավ թուրքական պետության տարածքների, սահմանների ճշգրտման հարցում դիմել առավելապես մշակված ռազմավարական հայեցակարգերի, քանի որ ավարառուի հակաքաղաքակրթական բնազդը այլևս չէր բավարարում ժամանակի երկրաքաղաքական իրադրությունների պայմաններում իրավիճակի ճիշտ գնահատմանը:

Հայոց ցեղասպանության հարցում բալկանյան շրջադարձի մասին հիմնավոր պատասխան է տալիս Լևոն Շիրինյանը:

Ինչպես նշում է Շիրինյանը. «Բալկանյան պատերազմները, ինչքան էլ տարօրինակ թվա, Արևելքի քրիստոնյա ժողովուրդների՝ առաջին հերթին հույների և հատկապես հայերի համար աղետալի և, թերևս, անդառնալի հեռագնա երկրաքաղաքական հետևանքներ ունեցան... »[1]: Հայերի նկատ-

[1] **Շիրինյան Լ.** Բալկանյան պատերազմները և Արևմտյան Հայաստանը (երկրաքաղաքական էտյուդ): Առաջին աշխարհամարտը և Հայ ժողովուրդը (պատմություն և արդիական

մամբ թուրքերի ընդգծված եղեռնաբաղձության մասին է գրում նաև Գ. Պիպիյան. «Հայերը հույների, սերբերի, խորվաթների և այլ ազգերին հավասար նետվեցին դեպի իրենց ազատությունը և ազգային անկախությունը, որոնք դարձել էին բռնակալ սուլթանական Թուրքիայի զոհերը: Սակայն նշված ազգերից ոչ մեկը այնքան թանկ չվճարեց իր ազատասիրության համար, որքան հայ ազգը»[2]: Սա հերթական փաստական ապացույցն է թուրքական էթնոֆոբիայի՝ հայ էթնոսի հանդեպ թուրքերի մոլագար (маниакальный) ատելության:

Եվ ինչպես շարունակում է Շիրինյան. «Թուրք նախամարդը եվրոպական մտրակի հարվածների տակ իր արյունոտ հայացքը շուռ էր տալիս դեպի արևելք՝ Արևելյան Անատոլիա, որ նույնն է՝ հայության **սրբազան հայրենիք՝ Արևմտյան Հայաստան**[3]»: Եվրոպացի մեծերը, համախորհուրդ, Եվրոպայից արտամղում էին քաղաքակրթորեն անհարազատ տարրին՝ միջնադարյան ենիչերին: Նրան ուղղորդում էին Արևելք: Ճանապարհին Հայաստանն էր[4]: Եվ այլևս կանխորոշված էր հայության ապագան Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության ողջ տարածքում, հանգամանքների չարաղետ դասավորումով՝ այնուհետև նաև Այսրկովկասում»[5]: Իբն-Խալդունի համոզմամբ՝ ճգնաժամ ապրող քաղաքակրթության (թուրքերի դեպքում հակաքաղաքակրթության՝ Հ. Սուքիասյան) ինքնանորացումը իրականացվում է սահմանագծի բարերար ազդեցության ներքո[6]:

խնդիրներ) միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու: Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինս., 2015, էջ 143-152:

[2] **Пипия Г.** Германский империализм в Закавказье в 1910-1918 гг. Наука, М., 1978, с. 39.

[3] **Շիրինյան Լ.** Բալկանյան պատերազմները և Արևմտյան Հայաստանը (երկրաքաղաքական էտյուդ): Առաջին աշխարհամարտը և Հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ) միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու: Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինս., 2015, էջ 143-152:

[4] **Շիրինյան Լ.** Թուրքական էթնոֆոբիան և հայոց ցեղասպանությունը: Եր., 2011, էջ 14:

[5] **Շիրինյան Լ.** Բալկանյան պատերազմները և Արևմտյան Հայաստանը (երկրաքաղաքական էտյուդ): Առաջին աշխարհամարտը և Հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ) միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու: Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինս., 2015, էջ 143-152:

[6] **Մարգարյան Ե.** Միհրականությունը հին աշխարհի քաղաքական և կրոնահոգևոր համակարգում. Կոմմագեն, Ծոփք, Հայաստան, Հռոմ: Եր., Պատմության ինստիտուտ, 2014, էջ 79:

Թերևս Բալկաններից հետո անտես փոխվում էր միջազգային հավասարակշռությունը Օսմանյան կայսրության շուրջ: Խելահեղ աշխարհը Բալկաններից հետո մղվում էր աշխարհամարտ, իսկ ներքին հավասարակշռություն որոնող Թուրքիան հետևեց Հայկական հարցի վերջնական ու ամբողջական «լուծման» իր տեսլականին՝ գերադասելով Հայոց Մեծ եղեռնը երաշխավորող կայսրության՝ Գերմանիայի հետ դաշինքը[7]: Եվ այսպես, այլատյացությունը՝ արտահայտված հակամշակույթով՝ կոնկրետացած հայատյացությամբ[8], Բալկաններից արձակված «թուրքական Եվրոպայի» ազատագրության թունավոր նետերը «ահարկու ողջակիզեցին» (“ghastly holocaust”՝ Ջոզեֆ Հոքինգ, 1918թ.) հայությանը իր բնօրրանում՝ Հայաստան Հայրենիքում[9]:

Բալկանյան շրջադարձից հետո հայոց ցեղասպանության գործում երկրառազմավարական կարևոր նշանակություն է ստանում նաև Դարդանելի գործընթացը, որը ևս իր ճակատագրական հետքը սպիացրեց հայոց ցեղասպանության գործում:

Դարդանելի երկրառազմավարական նշանակությունը թաքնված է այն հանգամանքում, որ երիտթուրքական ռազմաքաղաքական վերնախավը հասկացավ, որ Դարդանելում գերտերությունների միջև միասնականություն չկա, այդ իսկ պատճառով թուրքական կառավարությունը լիովին վստահ էր իր հակաքաղաքակրթական արարքների անպատժելիության մեջ: Ընդհանրապես, «գորշ գայլի» հոտառությունը հանճարեղ է ուրիշներին ոչնչացնելու հարմար պահը որսալու հարցում, «ուրիշների արյան հոտը առնելու հարցում»: Աբդուլ Համիդի կողմից իրականացված հայկական ջարդերի վերաբերյալ Գ. Պիպիյան գրում է. «Կազմակերպելով 1894-1896 թթ. հայերի կոտորածը՝ սուլթանական կառավարությունը լավ

---

[7] **Շիրինյան Լ.** Բալկանյան պատերազմները և Արևմտյան Հայաստանը (երկրաքաղաքական էտյուդ): Առաջին աշխարհամարտը և Հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ) միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու: Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինս., 2015, էջ 143-152:

[8] Տե՛ս **Շիրինյան Լ.** Թուրքական էթնոֆոբիան և հայոց ցեղասպանությունը: Եր., 2011, 40 էջ:

[9] **Շիրինյան Լ.** Բալկանյան պատերազմները և Արևմտյան Հայաստանը (երկրաքաղաքական էտյուդ): Առաջին աշխարհամարտը և Հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ) միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու: Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինս., 2015, էջ 143-152:

հասկանում էր, որ հայկական հարցում գերտերությունների միջև միասնականություն չկար, ... այդ իսկ պատճառով թուրքական կառավարությունը լիովին վստահ էր իր վայրագ գործողությունների անպատժելիության մեջ»[10]:

Թուրքի «հանճարը» բացահայտեց նաև Դարդանելի երկրառազմավարական կոմբինացիան: Եվ ինչպես նշում է Վեհիբ փաշան. « … անգլիացիներու բուն նպատակը Նեղուցները տիրապետելը չէր, այլ Նեղուցներու մեջ մեզ զբաղեցնելը և մեզ մաշեցնելը: Այդ նկատեցինք: Ես համոզված էի ատոր մեջ: Ատոր համար է որ մեր ուժերը թեթևցուցինք Տարտանելի շրջանեն, և ես ուզեցի հեռանալ նոր ճակատ մը, ուր պարտվիլ և հաղթել հնարավոր էր: Եվ ես եկա Կովկասյան ճակատ՝ ձեզի և ռուսերուն հաղթելու համար»[11]:

Այսպիսով, արտամղվելով Բալկաններից և ստանալով տրամաբանական ինդուլգենցիա Դարդանելում սեփական հետագա ռճրային գործողությունների անպատժելիության համար, այսինքն՝ մտնելով ազատ խաղի մեջ, հագուրդ տալով իր ցեղի հայատյաց բնազդին՝ թուրք նախամարդը ավարառուի իր արյունոտ հայացքը ուղղեց դեպի Արևմտյան Հայաստան:

Եվ, կարծես թե, այդ հայացքում նկատելի են գերմանական հայեցակարգերը: Ստացվեց թուրքական թռիչք դեպի Հայաստան (Drang nach Armenia): Եվ, ինչպես նշում է Ռուբենը. «Երբ արջը կանգնած է որսորդին առջև, այլևս աւելորդ է անոր ոտքին հետքերու ուսումնասիրութիւնը կատարել[12]»:

Եվ հենց այստեղ է, որ թուրք ռազմաքաղաքական վերնախավը փորձում է գտնել կայսերապաշտական մոտիվներով թուրքական պետության սահմանների ճշգրտման մեխանիզմներ:

---

[10] **Пипия Г.** Германский империализм в Закавказье в 1910-1918 гг. Наука, М., 1978, с. 42.

[11] **Շիրինյան Լ.** Տարտանելի առասպելը կամ ռազմավարական PR-ի թուրքական «Սև խոռոչը»: Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ: Եր., 2014, №2, Զանգակ-97, էջ 144-150:

[12] **Շիրինյան Լ.** Ռուբեն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը (երկրաքաղաքական վերլուծություն): Եր., Զանգակ-97, 2004, էջ 131:

Այս հարցում թուրքերին օգնության կարող էին գալ եվրոպական երկրներ կրթության ուղարկված թուրք երիտասարդները[13]:

Կարելի է գտնել թուրք ռազմաքաղաքական վերնախավի վրա գերմանական ռազմավարական մտքի ազդեցության մասին հիմնավորումներ: Դրա մասին վկայություններ կարող ենք գտնել տարբեր աղբյուրներում, ինչպես, օրինակ, Ռայխստագում Բյուլովի 1908 թ. դեկտեմբերի 7-ի ճառում, որտեղ երիտթուրքերի պարագլուխներին Բյուլովը նկարագրում էր որպես «…գործիմաց սպաներ, որոնք իրենց կրթությունը Գերմանիայում էին ստացել…»[14]: Ինչպես նշում է Գ. Պիպիյան՝ «Գերմանացի իմպերիալիստները, հետապնդելով սեփական զավթողական նպատակները, դարձան սուլթանական Թուրքիայի խորհրդատուները և դաշնակիցները հայ ժողովրդի ազատագրական պայքարի դեմ»[15]: Ֆրանսիական ակադեմիայի անդամ Ֆրեդերիկ Մասոնը նշում է. «Գերմանացիները թուրքական քաղաքականության ներշնչողներն են»[16]:

Այսպիսով՝ արյունախում թուրք հակամարդը հանճարեղ է ինչպես ուրիշների հայրենիքների և ունեցվածքի կողոպուտի ու յուրացումի հարցերում, այնպես էլ ուրիշների գաղափարների յուրացման հարցերում, ինչպիսին է, ինչպես մեզ է թվում, գերմանական ռազմավարական մտքի յուրացումը, որի մեջ առավել հստակորեն ընդգծվում են Պաուլ Ռոհրբախի և Ֆրիդրիխ Նաումանի գաղափարները:

---

[13] **Սիմոնյան Հ.** Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը: Եր., Հայաստան, 1986, էջ 12:

[14] **Նորբերտ Զ.** Գերմանական կայսրությունը և Հայկական հարցը (1878-1914): Գերմ. թարգմ. Մանուշակ Հարությունյանը: Եր., Նաիրի, 2008, էջ 190:

[15] **Пипия Г.** Германский империализм в Закавказье в 1910-1918 гг. Наука, М., 1978, с. 43.

[16] “Echo de Paris”, 13 ապրիլ 1916.

Պաուլ Ռոհրբախը և Հայաստանի աշխարհագրությունը (թուրքական վաթանը և աշխարհագրական դետերմինիզմը)

Գերմանացի ռազմավարագետները մեծ ուշադրություն էին դարձնում հայկական բարձրավանդակի ստրատեգիական նշանակությանը: Գերմանացի փիլիսոփա, աստվածաբան, արևելագետ, հրապարակախոս և գեոպոլիտիկ Պաուլ Ռոհրբախը (1869-1956) Թուրքիայի համար Հայաստանի կարևորության վերաբերյալ նշում է. «Աշխարհագրական տեսանկյունից Հայաստանն իրենից ներկայացնում է մի բնական և գրեթե անառիկ բերդ: Մի կողմից այն սահմանակցում է Ռուսաստանին, մյուս կողմից՝ իշխում է այն բոլոր համաշխարհային ուղիների վրա, որ Փոքր Ասիայով անցնում են իր բնական պատնեշների փեշերով՝ միացնելով Եվրոպայի հետ հարստագույն երկրներ ու ծովեր: Կորցնելով Հայաստանը *(խոսքը Արևմտյան Հայաստանի մասին է՝ Հ. Սուքիասյան)*՝ Թուրքիան կդադարի գոյություն ունենալուց: Կարելի է գրեթե առանց չափազանցության ասել, որ ժամանակակից Թուրքիայի համար անգամ նեղուցներին տիրելը չպետք է որ այնպիսի ուշադրության արժանանա, ինչպես Հայաստանն իր համար պինդ պահելը՝ իր գոյատևման այդ վերջին և ամուր պատվարը»[17]:

Հայաստանի ստրատեգիական նշանակության մասին Ռոհրբախը շարունակում է. «Համեմատաբար Հայաստանի դիրքը նուաճողական է դէպի հարաւ, դէպի Միջագետքը: Ով Հայաստանի մէջ կը նստի, ինքն անձեռնմխելի է, բայց կրնայ իւրաքանչիւրին վրա յարձակիլ, իրեն նպաստաւոր դատած մէկ պարագային»[18]:

Սակայն պետք է անպայմանորեն նշել նաև այն կարևոր հանգամանքը, որ Ռոհրբախը բացի Թուրքիայի համար Հայաստանի կարևորությունը, նշում էր նաև ընդհանրապես տարածաշրջանում Հայաստանի երկրառազմավարական (գեոստրատեգիական) նշանակության մասին: Այս կապակցությամբ Ռոհրբախը գրում է. «… բոլոր եւրոպական շահերուն աւելի լաւ ծառայութիւն մը պիտի մատուցուի, եթէ հոս

---

[17] «Deutsch-Asiatrische Gesellschaf» ընկերության 1913 թվականի նոյեմբերի 23-ի խորհրդակցության ելույթից:

[18] Հայաստան ըստ Ռոհրպախի 1919-ի տեսության: Կ. Պոլիս, 1919, էջ 10:

քաղաքականապէս չէզոքացուած երկիր մը, այսինքն ինքնավար Հայաստան մը ստեղծուի, եւ որը կարելի եղածին չափ սակաւ կախում ունենայ իր դրացի մեծ պետութիւններէն»[19]: Այսինքն՝ ակնհայտ է, որ Ռոհրբախը տարածաշրջանում գերտերությունների շահերի հաշվեկշռի համատեքստում կարևորում էր անկախ Հայաստանի գաղափարը:

«Frankfurter Zeitung» - ի 1913 թ. նոյեմբերի 23-ի համարում Հայաստանի վերաբերյալ նշվում է, որ Հայաստանի ռազմավարական նշանակությունը հիմնված է այն բնական հանգամանքների վրա, որ ցանկացած պետություն, որը ձգտում է գերիշխանության Առաջավոր Ասիայում, պետք է գրավի Հայաստանը[20]:

Նա, ով տիրում է Հայաստանին, անմիջականորեն իշխում է ինչպես Փոքր Ասիայի արևելյան հատվածի, այնպես էլ՝ Միջագետքի վրա: Հայաստանը լեռնանցքներով հստակ ընդգծված երկիր է: Երկու մեծ բնական ճանապարհներ տանում են արևելքից դեպի արևմուտք: Հյուսիսայինը սկիզբ է առնում Պարսկաստանից, անցնում է իրանա-հայկական սահմանային լեռնային շրջանով, Բայազետով և Ղարաքիլիսայով ուղղվում է դեպի Էրզրում, որն իրենից ներկայացնում է դեպի Փոքր Ասիա տանող բանալի, իսկ հետո Եփրատի արևմտյան հովիտներով հասնում է Երզնկա: Այստեղից բացվում է անցումը դեպի անատոլական հարթավայրի հյուսիսային հատված: Մյուս ճանապարհը սկիզբ է առնում Վանա լճի ջրավազանից, որը տարբեր լեռնաշղթաներով կապված է իրանական բարձրավանդակի հետ և արևելյան Եփրատի հովիտներով Մուշ-Պալուի միջով հասնում է դեպի Խարպուտ և Մալաթիա: Վերջին երկու տեղանքներն էլ իրենց հերթին իշխում են միջին և հարավային Անատոլիայի ճանապարհների վրա, ինչպես Էրզրումը և Երզնկան իշխում են հյուսիսային լեռնաշղթաների վրա: Հայաստանն ունի էլ ավելի իշխող դիրք դեպի հարավ, բայց ուղղված դեպի Միջագետք: Բիթլիսի խոր իջած լեռնային հատվածը բացում է դեպի Տիգրիսի հովիտները տանող ճանապարհը և այնտեղից գետի երկայնքով դեպի ներքև՝ Մոսուլ…[21]:

---

[19] Հայաստան ըստ Ռոհրպախի 1919-ի տեսության: Կ. Պոլիս, 1919, էջ 11:
[20] Frankfurter Zeitung. 23 november 1913.
[21] **Рорбахъ П.** Война и германская политика. Мысль, М., 1915, с. 62-63.

Հայաստանն իր աշխարհագրական դիրքով և մակերևույթի կառուցվածքով հանդես է գալիս որպես բանալի այն դիրքերի համար, որոնք իշխում են անատոլական թերակղզու և Միջագետքի հովիտների վրա: Հայաստանը կորցնելու դեպքում Թուրքիան կդադարի որպես ինքնուրույն պետություն գոյություն ունենալուց[22]: Այս կապակցությամբ հայերի նկատմամբ 1894-1896 թթ. Աբդուլ Համիդի իրականացրած կոտորածների վերաբերյալ Նաումանը նշում է. «Կար մի վտանգ, որ Թուրքիան Հայոց հարցի հիման վրա կործանման էր գնում: Բայց նա ինքն իրեն բարբարոսական, ասիական, բռնի հարձակումով օգնեց: Նա հայերին այնքան նվազեցրեց, որ նրանք մոտ ապագայում չէին կարող հանդես գալ քաղաքականության մեջ»[23]:

Թուրք դահիճ երիտթուրքերի Սալոնիկի 1910 թ. հոկտեմբերի 31-ի [13 օր] համաժողովում կուսակցության գլխավոր քարտուղար Նազըմը հայտարարում է. «… Պատկերացուցեք պահ մը Արևելյան նահանգներու վրա հայ պետության մը կազմությունը: Նման պետություն մը տապանաքարն է թուրանական ծրագրին»[24]:

Հենց Հայաստանի աշխարհագրությունը աչքի առաջ առնելով՝ թուրք ռազմաքաղաքական վերնախավը նետվեց Թուրքիայի ստեղծման գործին: Այսպիսով՝ սեփական վաթանի սահմանների որոնումը թուրք նախամարդը տեսավ իր արհեստական սահմանները բնական սահմանների վերածելու մեջ:

Հայաստանի պատմական ճակատագրի առումով ուշագրավ է Օտտո Մաուելի տեսակետը, ով նշում է, որ սահմանը, որպես գիծ, իրականում ճշմարիտ սահման չէ, այլ զուտ շատ կամ քիչ պատահականորեն ձեռք բերված փոխզիջում՝ հաճախ բռնության գործողության հետևանքով[25]:

---

[22] **Рорбахъ П.** Война и германская политика. Мысль, М., 1915, с. 11.

[23] **Schmuhl Von Hans-Walter.** Friedrich Naumann und die Armenische Frage Die deutsche Öffentlichkeit und die Verfolgung der Armenier vor 1915. http://www.hist.net/kieser/aghet/Essays/EssaySchmuhl.html (02.06.2015).

[24] **Շիրինյան Լ.** Նոր աշխարհակարգը և Հայաստանը (Երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ): Եր., 2006, էջ 118-119:

[25] **Շիրինյան Լ.** Հայաստանի սահմանները որպես ազգային անվտանգության գործոն: Դրոշակ, 2002, թիվ 2, էջ 92-96:

«Բնական սահմաններ ասելով՝ սովորաբար հասկացվում են տեղանքի ֆիզիկական բնութագրերը, որոնք քաղաքական սահմանների հիմք կարող են դառնալ: «Բնական» սահմանները գերադասելի են, քանզի ունեն շատ առավելություններ. դրանք հեշտությամբ են որոշվում, կայուն են և բաժանման ժամանակ դժվարություններ չեն հարուցում: Սովորաբար այդպիսի սահմաններ են դառնում գետերը, լճերը, լեռնաշղթաները, անապատները և այլն:

«Արհեստական» սահմանները քիչ են ապահով: Այդպիսիք սահմանագծման (դեմարկացիա) համար մեծ միջոցներ են պահանջում. դժվար է պահպանությունը: Սակայն նույնիսկ արհեստական սահմանները հաստատվում են տեղանքի տեղադրության առավելագույն հաշվառումով: Պետությունները ձգտում են իրենց սահմանները հասցնել բնական սահմանագծերի»[26]:

Արհեստական սահմանները բնական սահմաններ դարձնելը նշանակում է ուրիշների հայրենիքները սեփականել: Այսինքն՝ Թուրքիան իր էքզիստենցիալ շահերի իրականացումը տեսավ Հայաստանի բնաջնջման հակամարդկային, հակաքաղաքակրթական, սակայն թուրք ենիչերի ոգուն շատ հարազատ գործում:

Գերմանացի աշխարհագրագետ, սոցիոլոգ, երկրաքաղաքականության (геополитика) հիմնադիր Ռատցելի կարծիքով՝ պետությունը համապատասխանում է պետականորեն կազմակերպված հասարակության հետ, այն համարվում է ողջ հասարակության շահերի արտահայտիչը: Ըստ Ռատցելի՝ պետությունն առաջանում է այնտեղ, որտեղ հասարակությունը միավորվում է հանուն նպատակի, որոնք հանդիսանում են ողջ հասարակության նպատակը և կարող են իրագործվել միայն միասնական ջանքերի շնորհիվ որոշակի ժամանակահատվածում[27]:

Հիպոկրատը գրում է. «…Դու կգտնես, որ մարդկանց տեսակը և նրանց արժեքները արտացոլում են երկրի բնությունը»:[28]

---

[26] **Շիրինյան Լ.** Հայաստանի սահմանները որպես ազգային անվտանգության գործոն: Դրոշակ, 2002, թիվ 2, էջ 92-96:

[27] **Ratzel F.** Politische Geographie, München, Leipzig, 1897, p. 115-116.

[28] Гиппократ. Избранные книги, М., 1936, с. 304.

Ռատցելը, գտնվելով էվոլյուցիայի դարվինյան տեսության ազդեցության տակ, պետությունը դիտարկում էր որպես կենսաբանական օրգանիզմ, որի հատկությունները նա դիտում է նաև որպես ժողովրդի, մասնակիորեն նաև տարածքի հատկություններ[29]: Ընդհանրապես գերմանական երկրաքաղաքականությունը հաստատում է, որ աշխարհագրական տարածությունը պայմանավորում է ժողովրդի ճակատագիրը, պետության քաղաքականությունը և պատմության ընթացքը[30]:

Աշխարհագրական դետերմինիզմը պնդում է, որ հասարակության վիճակը և զարգացումը պայմանավորվում են աշխարհագրական միջավայրով կամ աշխարհագրական միջավայրի առանձին գործոններով, ինչպիսիք են՝ կլիման, լանդշաֆտը, աշխարհագրական դիրքը և այլն: Համաձայն այս տեսակետի՝ աշխարհագրական դետերմինիզմի նպատակը աշխարհագրական միջավայրի նկատմամբ մարդու, մարդկային հասարակության կամ պետության հարաբերությունների ուսումնասիրությունն է: Դժվար թե հասարակական կյանքում գտնվի որևէ երևույթ, որը աշխարհագրական դետերմինիզմի ներկայացուցիչները չբացատրեն աշխարհագրական միջավայրի ազդեցությամբ: Արտադրողական ուժի և բնակչության տեղաբաշխումը, տնտեսական և քաղաքական կարգի բնույթը, ժողովուրդների, նրանց գաղափարների և տեսությունների, մշակույթների, հասարակական հարստության բաժանման եղանակը, ընտանիքի և ամուսնության ձևը, հանցագործությունը, ճգնաժամերը և պատերազմները, մի խոսքով՝ գրեթե բոլոր հասարակական երևույթները նրանք մեկնաբանում են որպես աշխարհագրական գործոնների պատճառահետևանքային արդյունք: Ընդ որում՝ հետազոտողներից ոմանք կարևորությունը տալիս են կլիմային, մյուսները լանդշաֆտին կամ աշխարհագրական դիրքին և այլն[31]:

Հայոց համար աշխարհագրական դետերմինիզմի ճակատագրական նշանակության մասին է գրում մեծագույն հայ բանաստեղծը՝ Հովհաննես

---

[29] **Гейден Г.** Критика немецкой геополитики. М., Издательство: Изд-во иностранной лит-ры, 1960, 312 с. http://4i5.ru/uchebnik/teoreticheskoe-soderjanie-nemetskoy-30635.htm (30.08.2015).

[30] Նույն տեղում:

[31] Նույն տեղում:

Թումանյանը. «Վերցրեք Թուրքիայի քարտեզն ու մտիկ արեք։ Դա մի նոր պետություն է, որ դրսից եկել է ու կոպիտ ուժով նստել հին կուլտուրական ազգերի ու նրանց հայրենիքների վրա։ Եվ էդ երկիրներից մինը թե կա, որ նա համարում է ու դարձրել է իր հայրենիքը, ոչ Բալկանյան թերակղզին է, ոչ Աֆրիկայի հյուսիսը, այլ Անատոլիան, Փոքր Ասիան, էն երկիրը, ուր հայ ժողովուրդն էլ հնագույն ժամանակներից նստած պաշտում է իր Մեծ Հայաստանը, իր ազգային նվիրական վայրերն ու սրբությունները ու էն հողի վրա էլ հարուցանում ու զարգացնում է հայկական հարցը։ Էս տեսակետից էլ հայկական հարցը Տաճկաստանը հուզող ամենածանր ցավերից մինն է, և հետզհետե թերևս դառնա ավելի ու ավելի ծանր, քանի թուրքն ստիպված լինի սեղմվել դեպի էս կողմերը։ Եվ ահա էս հարցից ազատվելու հնարը էսպես է վճռել թուրքի պետական հանճարը - հայերին կոտորել կամ հալածել, քշել, գաղթեցնել։ Այո՛, վայրագ ու անօրեն է էս ճանապարհը, այլև խելագար, սակայն հաստատ։ Եվ էս ճանապարհով էլ նա արդեն հասել է մեծ հետևանքի[32]»։

Սակայն այս համատեքստում հարկ է հիշել Ռուբենի (Մինաս Տեր-Մինասյան) հետևյալ դիտարկումը. «Երկրամասի մը այս կամ այն պետութեան մաս կազմելը մեծապես կախում ունի այդ երկրամասի աշխարհագրական, կլիմայական պայմաններէն։ Ազգերու այս կամ այն հողի, կլիմայի տակ զարգանալը և այս կամ այն երկիրը իրեն հայրենիք դարձնելը պատահականութեան արդիւնք չէ, այլ՝ հետեւանք բնական հակումներու։ Ժողովուրդներու կեանքն ալ նման է բոյսերու կեանքին, որ կը դասաւորուի համաձայն աշխարհագրական և կլիմայական պայմաններուն»[33]։ Ինչպես իւրաքանչիւր բոյս ու կենդանի օժտուած են իրենց տրուած յատկութիւններով, նոյնպես իւրաքանչիւր ժողովուրդ օժտուած է իւրայատուկ բնութագծերով։ Բնաւ ապարդիւն աշխատանք չէ բարեփոխել պայմանները վարդի մը, որ 5 տերեւի փոխարեն ունենայ 25 տերեւ, բայց ապարդիւն աշխատանք է վարդի թփեն սպասել մեխակ կամ շուշան[34]։

---

[32] **Թումանյան Հ.** Ահա թե ինչու։ ԵԼԺ հ 6, էջ 369-375։

[33] **Շիրինյան Լ.** Ռուբեն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը (երկրաքաղաքական վերլուծություն)։ Եր., Զանգակ-97, 2004, էջ 56։

[34] **Շիրինյան Լ.** …, էջ 139։

Ժողովրդի և տարածքի հատկանիշները որոշում են պետության հատկանիշները: Ընդ որում՝ առաջնորդությունը պատկանում է տարածքի այնպիսի հատկանիշներին, ինչպիսիք են՝ չափերը, տեղակայությունը, սահմանները և այլն: Ժողովուրդը և տարածքը, ըստ Ռատցելի, պայմանավորում են պետության բնույթը և նրա քաղաքական կյանքը: Պետությունը դիտվում է որպես կենսաբանական օրգանիզմ, որը ենթակա է այնպիսի ազդեցությունների, ինչպիսի ազդեցությունների ենթակա է ցանկացած կենդանի երևույթ: Այն զարգանում է համապատասխան կենսաբանական օրենքներին, կամ էլ «պետության օրգանական բնույթի դրսևորում համարվում է այն, ինչը շարժվում և աճում է որպես մեկ ամբողջություն»[35]:

Այո՛, ժողովրդի և տարածքի հատկանիշները որոշում են պետության հատկանիշները:

Այո՛, թուրքական ցեղասպան բնազդը ստեղծեց թուրքական ցեղասպան պետությունը, սակայն միևնույն է, հանճարեղ է Ադոնցի հակառակումը. «Բոլոր նրանց համար, ովքեր եկել են ու գնացել, այն (Հայաստանը՝ Հ. Սուքիասյան) եղել է սոսկ հյուրատուն: Նրանք բոլորը փնտրել են նրա տանիքը, վայելել նրա մշակութային գանձերը, ոմանք որպես անցորդ հյուրեր, ոմանք էլ որպես բախտի քմահաճույքով քշված ճամփորդներ, մինչդեռ ուրիշները, առանց քաշվելու տեղավորվել են այնտեղ, կողոպտել ու ավերել: Ոչ մեկը նրանցից չի թողել որևէ հոգևոր ժառանգություն, մշակույթի որևէ հիշողություն: Թուրքմենի կամ քրդի ոչ մի ձեռք մի աղյուս իսկ չի դրել երկրի շինարարական արվեստում: Ճարտարապետության զարմանահրաշ կոթողները, պալատները, ամրոցները, եկեղեցիներն ու վանքերը, վեհապանծորեն բազմած իրենց լեռնազահերին, իրենց ամբողջ մշակութային զգեստավորմամբ, այսօր փոշու են հավասարեցված: Բայց նրանց մեջ դեռ ապրում է ոգին, ավերակների մեջ դեռ դեգերում են անցյալի ստվերները, ստվերներ, որոնք պատրաստ են մարմնավորվելու նոր կյանքի համար: … Եվ եթե լավագույն եկեղեցիները համարյա բոլոր քաղաք-

[35] **Ratzel F.** Politische Geographie. München, Leipzig, 1897, p. 19.

ներում, լինի դա Հայաստանում կամ նրանից դուրս, վերածվել են մզկիթների, միթե՞ դրանով նրանք դադարել են հայկական լինելուց[36]»:

Աշխարհագրական դետերմինիզմին հակադրվող փաստարկ է բերում Ռիտերը, ով գտնում էր, որ «մարդկության զարգացման ընթացքի վրա ազդում են ոչ միայն արտաքին պայմանները», այլև գոյություն ունի «մարդու, ժողովուրդների և պետությունների զարգացման այլ ոլորտ ևս՝ զուտ հոգևոր բնույթի՝ պայմանավորված ներքին ազդակներով, որը կախված չէ արտաքին միջավայրից»[37]: Այս առիթով տեղին է մեջբերել գերմանացի խոշորագույն լուսավորիչ Յոհան Գոտֆրիդ Հերդերի դիտարկումը. «Կլիման չի պարտադրում, այլ առաջացնում է հակումներ»[38]:

Ականավոր արաբ փիլիսոփա, պատմաբան Իբն Խալդունը նշում է. «Կործանված քաղաքակրթությունը պարարտ հող է դառնում նոր քաղաքակրթության սաղմնավորման համար»[39]: Կյանքի բնական օրենքն է. «Դատարկ տարածությունը գրավում է մարդկանց»[40]: Սակայն սա հայոց հարցի համատեքստում ճիշտ կլիներ այն դեպքում, եթե այդ տարածքում կործանված քաղաքակրթության փոխարեն առաջանար քաղաքակրթություն, այլ ոչ թե հակաքաղաքակրթություն: Եվ աշխարհագրական դետերմինիզմի՝ պետության և ժողովուրդների վրա բնական միջավայրի դետերմինացված այդ խիստ պատճառահետևանքային կապին ամենաբնորոշ հակառակումը տալիս է հայ մեծանուն պատմաբան Նիկողայոս Ադոնցը. «Հայաստանի իրավատերը թուրքն է, փաստացի տերը քուրդը, իսկ հայրենիք ունեցողը՝ հայը[41]»:

---

[36] **Ադոնց Ն.** Հայկական հարցի լուծման շուրջ: /Անգլ. թարգ.. Վ. Դիլոյանը/: Եր., Երևանի համալս. հրատ., 1989, էջ 110-111:

[37] **Гейден Г.** Критика немецкой геополитики. М., Издательство: Изд-во иностранной лит-ры, 1960, 312 с. http://4i5.ru/uchebnik/teoreticheskoe-soderjanie-nemetskoy-30635.htm /30.08.2015/.

[38] **Herder J.** Zur Philosophie der Geschichte. Bd. II, Berlin, 1952, p. 157.

[39] **Մարգարյան Ե.** Միհրականությունը հին աշխարհի քաղաքական և կրոնահոգևոր համակարգում. Կոմմագեն, Ծոփք, Հայաստան, Հռոմ: Եր., Պատմության ինստ., 2014, էջ 80:

[40] **Гейден Г.** Критика немецкой геополитики. М., Издательство: Изд-во иностранной лит-ры, 1960, 312 с. http://4i5.ru/uchebnik/teoreticheskoe-soderjanie-nemetskoy-30635.htm /30.08.2015/.

[41] **Ադոնց Ն.** Հայկական հարցի լուծման շուրջ: /Անգլ. թարգ.. Վ. Դիլոյանը/: Եր., Երևանի համալս. հրատ., 1989, 116 էջ:

Այդ իսկ պատճառով, ինչքան էլ որ Թուրքիան փորձեց Հայաստանի հաշվին Թուրքիա ստեղծել, միևնույն է՝ այն չդարձավ թուրքի համար հայրենիք:

Միջին Եվրոպայի հայեցակարգը և հայոց ցեղասպանության թուրքական նախատեսումները

Միջին Եվրոպայի (Mitteleuropa) հայեցակարգը տարածքների զավթման միջոցով ծավալման, կայսրություն և նոր աշխարհագրություն ստեղծելու գերմանական հայեցակարգ է, որը պետք է իրականացվի Գերմանիային Ավստրո-Հունգարիայի միավորման միջոցով:

«Իդեալական ծրագրերի» մշակումը կարևոր նշանակություն ունի քաղաքական-տարածական մակարդակում: Այդ իդեալական ծրագրերի շարքից է նաև «Միջին Եվրոպայի» հայեցակարգը[42]:

Ընդհանրապես աշխարհում բազմաթիվ երկրաքաղաքական գործընթացներ տեղի են ունենում հենց «քարտեզների պատճառով»:

Երկրաքաղաքական պատկերային կառուցավորումներում կարևոր տեղ են զբաղեցնում, այսպես կոչված, ազգային մինիմումի պատկերային քարտեզները[43]: Այդպիսի պատկերային քարտեզներից է նաև Միջին Եվրոպայի գերմանական հայեցակարգը:

Միջին Եվրոպայի (Mitteleuropa) գաղափարի սկզբնավորման վերաբերյալ կան տարբեր տեսակետներ: Օրինակ՝ Ժերար Դենալտիի պընդմամբ՝ Mitteleuropa-ն (Mitteleuropa - գերմաներենից թարգմանաբար նշանակում է «միջին» կամ «կենտրոնական» Եվրոպա) որպես քաղաքական կառույց ի հայտ էր եկել ի հակակշիռ նապոլեոնական Եվրոպային և իր տեսակի մեջ հակաեվրոպա էր եղել: Յոզեֆ Կրուտվորի կարծիքով՝ Արևմուտքի, Արևելքի և Կենտրոնականի բաժանված Եվրոպայի գաղափարը մշակել է կանցլեր Մետերնիխը. նա պնդում էր, որ միապետական Ավստրիան պետք է «հոգ տանի» կենտրոնական Եվրոպայի «սեպի» մասին, որպեսզի վերջինս պաշտպանի ավելի մասշտաբային բաժա-

---

[42] **Улунян А.** Коминтерн и геополитика: Балканский рубеж. 1919-1939. М., 1997, с. 18.
[43] **Улунян А.** …, с. 10.

նումներից: Բայց քանի որ, ինչպես նշում է Յորգ Բրեխտեֆելդը. «Վիեննայի Կոնգրեսը 1815 թ. գերտերություններին արգելել էր սահմանների փոփոխության համար ուժ կիրառելը, այդ իսկ պատճառով Mitteleuropa-ի գաղափարի պաշտպանները առաջին հերթին զարգացրին Mitteleuropa-ի տնտեսական և մշակութային հայեցակարգերը»[44]: Հենց այս պատճառով էլ որոշ տեսաբաններ Mitteleuropa-ի գաղափարը կապում են Ֆրիդրիխ Լիստի տնտեսական հայեցակարգի հետ[45]:

Եվ այսպես, Mitteleuropa-ի հայեցակարգը գիտական շրջանառության մեջ մտավ 19-րդ դարի կեսերին տեսաբան-տնտեսագետ Ֆրիդրիխ Լիստի կողմից, ում անվանում են «Միջին Եվրոպայի առաջին մարգարե»: Լիստի Mitteleuropa-ի տնտեսագիտական գաղափարն այնուհետև զարգացրին Կոնստանտին Ֆրանցը, Կառլ Լյուդվիկ ֆոն Բուրկը և Պաուլ դե Լագարդը[46]:

Ֆրիդրիխ Լիստը միջինեվրոպական տնտեսական միության ստեղծման կողմնակից էր: Լիստը Միջին Եվրոպայի ստեղծումը կարևորում էր միասնական գերմանական պետության ստեղծման և նրա անվտանգ, ապահով գոյության համար: Նա ենթադրում էր, որ գերմանական պետության ապագան դեպի մայրցամաք էքսպանսիան է[47]:

Միջին Եվրոպայի քաղաքականության (Mitteleuropapolitik) գաղափարը վերջնական ձևակերպում ստացավ Վիլհելմ II-ի իշխանության տարիներին, որի նպատակը ոչ միայն գաղութային պետության ստեղծումն էր, այլև Գերմանիան եվրոպական մայրցամաքի առաջատար պետություն դարձնելը: Նա խնդիր էր դրել ստեղծել տարածաշրջանային քաղաքական կազմավորում, որը կկարողանար դիմակայել Ֆրանսիային, Անգլիային և

---

[44] Տե՛ս **Brechtefeld J.** Mitteleuropa and German politics, 1848 to the present. New York: St. Martin's Press, 1996. (**Буховски М., Колбон И.** От Mitteleuropa до Центральной Европы: очерк развития идеи. Перекрестки, 3-4, 2006, Журнал исследований восточноевропейского пограничья, Вильнюс, с. 112-138).

[45] Տե՛ս **List F.** The National System of Political Economy. New York: Longman 1904 [1841].

[46] Տե՛ս **Meyer H.** Mitteleuropa in German Thought and Action (1815-1945). The Hague, 1995 (**Баранов Н.** Срединная Европа Фридриха Наумана: становление концепции // Известия Уральского гос. ун-та. Сер. 2, Гуман. науки, 2009, №3 (65), с.17-181).

[47] **Սուքիասյան Հ.** Պարչ-Նաումանի «Միջին Եվրոպայի» հայեցակարգերը**:** «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2015 № 2 (17), էջ 21-30:

Ռուսաստանին: Եվրոպայում գերմանական էքսպանսիայի ուղղությունը որոշվում էր դեռևս վաղուց հայտնի թռիչք դեպի Արևելք (Drang nach Osten) և կենսատարածք (Lebensraum) արտահայտություններում: Մի խոսքով՝ Կենտրոնական Եվրոպայի առաջին ծրագիրը պետք է ծառայեր գերմանական հզոր կայսրության ստեղծմանը[48]:

Mitteleuropa-ի աշխարհագրական հայեցակարգը զարգացում է ստացել գերմանացի աշխարհագրագետ Յոզեֆ Պարչի Միջին Եվրոպա (Mitteleuropa)[49] աշխատանքում, որը եվրոպական համադաշնության հայեցակարգ է, այսինքն՝ պետությունների համախումբ Գերմանիայի միջուկով, քանի որ հենց Գերմանիան էր Արևմտյան Եվրոպայում զբաղեցնում կենտրոնական դիրք[50]:

Գերմանացի աշխարհագրագետ Յոզեֆ Պարչի «Mitteleuropa» գիրքը գերմանական քաղաքական և տնտեսական ընդհանուր գոտու ստեղծման ձգտումի արդյունք է: Պարչը գծել է մեծ Գերմանիայի քարտեզը, որը ձգվում էր Օստենդեից (Ժնևի միջով) մինչև Սև Ծով[51]: Պարչի Mitteleuropa-ի մեջ էին մտնում հետևյալ պետությունները՝ Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Բելգիա, Հոլանդիա, Շվեյցարիա, Չեռնոգորիա, Սերբիա, Ռումինիա և Բուլղարիա[52]:

Միխայիլ Բուխովսկին և Իզաբել Կոլբոնը պնդում են, որ չնայած Պարչի աշխատանքում աշխարհագրական և տնտեսական փաստարկները կազ-

---

[48] Տե՛ս **Буховски М., Колбон И.** От Mitteleuropa до Центральной Европы*:* очерк развития идеи. Перекрестки, 3-4/2006, Журнал исследований восточноевропейского пограничья, Вильнюс, с. 112-138.

[49] Տե՛ս **Partsch J.** Mitteleuropa. Die Länder und Völker von den Westalpen und dem Balkan bis an den Kanal und das Kurische Haff. Gotha, 1904.

[50] Տե՛ս **Крупнов Ю.** Минск должен стать столицей «Новой Центральной Европы» (06.05.2011), // http://www.km.ru/bsssr/2011/05/06/soyuznoe-gosudarstvo-rossii-i-belorussii/minsk-dolzhen-stat-stolitsei-novoi-tsentra (13.05.2015).

[51] Տե՛ս **Partsch J.** Mitteleuropa. Gotha: J. Parthes, 1904.

[52] Տե՛ս **Partsch J.** Central Europe / tłum. C. Black. New York: D. Appleton and Company, 1903, Map 1. “Central Europe”, frontispiece.

մում են աշխատանքի մեծ մասը՝ այնուամենայնիվ դրանք բոլորն էլ ստորադասված են հեղինակի աշխարհայացքային պատկերացումներին[53]:

Յոզեֆ Պարչի Մեծ Գերմանիայի գաղափարը պետք է հանգեր Պրուսիայի կողմից Կենտրոնական Եվրոպայի կառավարմանը[54]: Այս առիթով Յու. Տիխոնրավովը գրում է, որ երբ Պրուսիան պայքարում էր «բնական սահմանների» սեփական դոկտրինի ներքո Գերմանիան իրեն միացնելու համար, գործընթացը զարգացավ երկու ուղղությամբ՝ «բնական լեզվական սահմանների» («Փոքր Գերմանիայի» գաղափարը) և «բնական ռելիեֆային սահմանների» («Մեծ Գերմանիայի»): Եթե առաջին ուղղությունը նախատեսում էր մեկ պետության մեջ բոլոր այն տարածքների միավորումը, որոնք բնակեցված էին գերմանական ծագում ունեցող մարդկանցով, ապա երկրորդը նախատեսում էր, այսպես կոչված, Մեծ Գերմանիայի ստեղծումը, որի կազմի մեջ պետք է մտնեին ոչ միայն Ավստրիան, այլև Լեհաստանի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Լյուքսեմբուրգի, Շվեյցարիայի տարածքների մի մասը[55]:

Պարչի կարծիքով՝ քաղաքակրթական գերազանցությունը և դեմոգրաֆիական առավելությունը նրան տալիս էին այդ իրավունքը: Այդ կազմավորման սահմաններում գերմանացիները պետք է կազմեին ամբողջ բնակչության 51.1 %-ը[56], ամբողջ տարածքում (բացառությամբ «Սերբիայի և Չեռնոգորիայի հետամնաց շրջանների») հաղորդակցության լեզուն պետք է լիներ գերմաներենը: Գործնականում այն պետք է ընդգրկեր գերմանալեզու ազգությունները, այդ իսկ պատճառով էլ կապված է «ժողովուրդ» (volk) բառի հետ: Եվ ինչպես Էռնստ Արենդտի հեղափոխական երգում է հնչում. «Գերմանիան պետք է լինի ամենուր, որտեղ կլսվի գերմանե-

---

[53] Տե՛ս **Буховски М., Колбон И.** От Mitteleuropa до Центральной Европы*:* очерк развития идеи. Перекрестки, 3-4/2006, Журнал исследований восточноевропейского пограничья, Вильнюс, с. 112-138.

[54] Տե՛ս **Partsch J.** Central Europe / tłum. C. Black. New York: D. Appleton and Company, 1903, p. 141.

[55] Տե՛ս **Яковюк И.** Идея серединной Европы в концептуальных разработ- ках европейских геополитиков второй половины XIX–начала XX вв.: историко-теоретический анализ. №3. PolitBook, 2013-4, с. 132-151.

[56] Տե՛ս **Partsch J.** Central Europe / tłum. C. Black. New York: D. Appleton and Company, 1903, p. 141.

րենը»[57]: Համաձայն պետության կենսաբանական տեսության՝ «գերբնակեցված» երկրներում առաջանում է մյուս պետությունների սահմանների նկատմամբ ճնշում[58], որն անխուսափելիորեն հանգեցնում է հարևան պետության տարածքների վերաբնակեցման (գրավման՝ Հ. Սուքիասյան): Սա ընդլայնման անհրաժեշտությամբ պայմանավորված ճնշում է, որը տվյալ պետությունը գործադրում է հարևան պետության վրա. այսպիսի ճնշումը կոչվում է մասնավոր ճնշում (Druckquotienten)[59]:

Ռատցելը հիմնավորում էր. «Պետությունների բնույթն այնպիսին է, որ դրանք զարգանում են՝ մրցելով հարևան պետությունների հետ, ընդ որում՝ այդ պայքարում պարգևը մեծամասամբ լինում է տարածքի տեսքով»[60]: Նրա կարծիքով. «Ժողովուրդը աճում է՝ մեծացնելով իր թիվը, երկիրը աճում է՝ մեծացնելով իր տարածքները: Քանի որ աճող ժողովուրդը կարիք է զգում նոր տարածքների իր թվի աճի համար, ապա այն դուրս է գալիս իր երկրի սահմաններից: Առաջին հերթին պետությունը իրեն դնում է իր դատարկ տարածքների զբաղեցման ծառայությանը: Եթե այդ տարածքները բավարար չեն, ապա ժողովուրդը ձգտում է դուրս գալ երկրի սահմաններից, և այդ ժամանակ ի հայտ են գալիս տարածական աճի այն բոլոր ձևերը, որոնք վերջ ի վերջո հանգեցնում են նոր տարածքների ձեռքբերմանը[61]:

Մանկության տարիներին փոքրիկ երեխան սահմանափակված է իր օրորոցում, ավելի ուշ նա յուրացնում է սեփական բնակարանը, հետո բակը, վերջապես՝ Հայրենիքը, որտեղ նա պետք է դրսևորի իրեն, ցուցադրի իր տաղանդը, հաստատի իր տեղը հասարակության մեջ: Երբ նա հասնում է այս ամենին, իր հայացքը նետում է Հայրենիքի սահմաններից դուրս: Նրա մոտ առաջանում է այլ վայրեր տեսնելու ցանկություն[62]:

---

[57] **Буховски М., Колбон И.** От Mitteleuropa до Центральной Европы*:* очерк развития идеи. Перекрестки, 3-4/2006, Журнал исследований восточноевропейского пограничья, Вильнюс, с. 112-138.

[58] Zeitschrift für Geopolitik, 1931, Heft 7, p. 549.

[59] Նույն տեղում:

[60] **Ratzel F.** Politische Geographie, München, Leipzig, 1897, p. 247.

[61] **Ratzel F.** …, p. 129.

[62] **Николаевич С.** Понятие Родины*:* современные модификации. Выпуск № 3 / 2012, с. 6-10.

Ուշագրավ է նաև այն փաստը, որ պատասխանատու գերմանացի պետական գործիչները դեռևս առաջին համաշխարհային պատերազմից առաջ կիրառում էին նույն փաստարկումը, ինչը կիրառում էր Ռատցելը: Այդ ժամանակվա ռայխկանցլեր Բեթման-Գոլվեգը ֆրանսիացի դեսպանին հայտնել էր, որ գերմանացի բնակչության աննախադեպ աճի, արդյունաբերության, առևտրի և նավատորմի աննախադեպ աճի պայմաններում կայսրությունը ստիպված է ձգտել ինչ-որ ձևով ընդլայնման: Ինչպես ցանկացած օրգանիզմ՝ գերմանացի ժողովուրդը նույնպես պահանջում է էքսպանսիայի հնարավորություն[63]:

Պարչի այս պանգերմանական գաղափարը հետագայում առավել զարգացում ստացավ լյութերական քահանա, հրապարակախոս, քաղաքական գործիչ Ֆրիդրիխ ֆոն Նաումանի կողմից՝ իր համանուն «Mitteleuropa»[64] գրքում:

Ֆրիդրիխ Նաումանի, ինչպես և Յոզեֆ Պարչի ծրագիրը նախատեսում էր Ավստրո-Հունգարիայի հետ Գերմանիայի միջուկով կենտրոնական Եվրոպայի տարածության ստեղծումը: Սակայն, բացի Ավստրո-Հունգարիայից, Միջին Եվրոպայի կազմի մեջ պետք է մտնեին նաև Չեռնոգորիան, Ալբանիան, Ռումինիան և Բուլղարիան:

Ինչպես նշում է Նաումանը. «Եթե միջին Եվրոպային վիճակված է դառնալ անկախ պատմական մեծություն, ապա նախ պետք է առաջանա նոր պատմական գիտակցություն, քանի որ միայն տնտեսական նկատառումներով, ինչքան էլ որ դրանք ծանրակշիռ լինեն, միևնույն է՝ դրա ձևավորման համար անհրաժեշտ ստեղծագործական կամք հնարավոր չէ ստեղծել: Ցանկացած նոր հասարակական երևույթ առաջին հերթին ձևավորվում է մարդկային հոգում, իսկ այդ հոգին էլ բացառապես տնտեսական չէ. այն բոլոր ժամանակներում, ինչպես և հիմա, կազմված է տարատեսակ

---

[63] Sté u Documents Diplomatiques Français 1871-1914", Série 111, vol. 9, p. 210-211, Mb 177, Cambon an Doumergue 28.1.1914. (**Гейден Г.** Критика немецкой геополитики. М., Издательство: Изд-во иностранной лит-ры, 1960, 312 с. http://4i5.ru/uchebnik/teoreticheskoe-soderjanie-nemetskoy-30635.htm (30.08.2015).

[64] **Науманнъ Ф.** Срединая Европа (Mitteleuropa). Пер. В. Фань-дерь-Флита. К-Во “ОГНИ”, Петроградь, 1918, 136 с.

նյութական և հոգևոր, պարզ և խավար դրդապատճառներից և իրադրություններից ու ղեկավարվում է դրանցով[65]»:

Ֆրիդրիխ Նաումանը իր Mitteleuropa «բեսթսելերում» մանրամասն վերլուծում է հնարավոր քաղաքական կազմավորման պատմական, կրոնական, ազգային, տնտեսական, մաքսային և սահմանադրական հարցերը: Դրա հիմքում, ինչպես Յոզեֆ Պարչի մոտ, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի միավորումն է:

Նաումանը գտնում էր, որ Միջին Եվրոպայի բոլոր պետություններն ունեն միևնույն «աշխարհագրական ճակատագիրը». դրանք չունեն «բնական սահմաններ»: «Միջին Եվրոպան», ի տարբերություն պանգերմանական ազգայնական այլ գաղափարների, մաքուր երկրաքաղաքական հասկացություն է, որտեղ կենտրոնական տեղը զբաղեցնում է ոչ թե էթնիկ միասնությունը, այլ աշխարհագրական ճակատագրի ընդհանրությունը[66]:

Սա մայրցամաքում աշխարհագրական այն տարածությունն է, որը գերազանցելու է Գերմանիայի սահմանները, որտեղ գերմանացիները պետք է ունենան ռազմավարական գերիշխանություն[67]: Ստյուարտ Էլդենը նշում է, որ այս գաղափարը իր փաստարկներով նման է «տարածք առանց ժողովրդի» մոտեցմանը, որը պետք է լցվեր այնպիսի ժողովրդով, որը կա՛մ չունի տարածք, կա՛մ որին եղած տարածքը բավարար չէ[68]: Ըստ կարդինալ Իլդեբրանդո Անտոնիուչիի. «Առանց տարածքի ժողովուրդը իրավունք ունի առանց ժողովրդի տարածքի»[69]:

Այս առումով Ռուբենը գրում է. «Բնութիւնը դատարկ տարածութիւն չի սիրեր, կը լեցուի ուրիշով եթէ լիքը չէ»[70]: «Երկիր մը առանց ազգաբնակչութեան մեծ գերեզման մըն է, իսկ ազգաբնակչութիւն առանց երկրի, նիւթ

---

[65] **Науманнъ Ф.** Срединая Европа (Mitteleuropa). Пер. В. Фань-дерь-Флита. К-Во “ОГНИ ”, Петроградъ, 1918, с. 34.

[66] Տե՛ս **Тихонравов Ю.** Начала геополитики, // http://vasilievaa.narod.ru/gu/stat_rab/book/Geopolitika/2-36.aspx.htm (13.05.2015):

[67] Տե՛ս **Elden St**. Reading Schmitt geopolitically. nomos, territory and Grossraum. Radical Philosophy, No 161, May/June 2010, pp. 18-26.

[68] Տե՛ս նույն տեղում:

[69] **Schmitthenner H.** Lebensräume im Kampf der Kulturen. 2, 1398, Auflage, Leipzig, pp. 9-10.

[70] **Շիրինյան Լ.** Ռուբեն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը (երկրաքաղաքական վերլուծություն): Եր., Զանգակ-97, 2004, էջ 169:

է գերեզմանի: Երկիր մը առանց մարդու անարժէք է, եթէ նոյնիսկ այդ երկիրը ծորայ մեղր ու կարագ: Ասկէ զատ՝ նման երկիրը միշտ ալ ախորժակ կը գրգռէ սովահար մարդկանց, որոնք կարօտ են հողի, հացի եւ ջրի»[71]:

Միջին Եվրոպայի հայեցակարգը պետք է դիտարկել որպես Գերմանիայի համար կենսատարածքի ապահովման և գերտերության կարգավիճակի (կերպարի) պահպանման ուղիներից մեկը:

Ընդ որում՝ գերմանական ծավալապաշտներին չէր բավարարում «Mitteleuropa» - ի աստիճանական իրականացումը, ձևավորումը: Նրանք պահանջում էին «Mitteleuropa» - ի իրականացումը «մեկ հարվածով»[72]:

Այս ծրագիրը մշակողները, մասնավորապես Ֆ. Նաումանը, կայսերական ծավալապաշտության քաղաքականության կողմնակիցներ էին, և, ինչպես նշում է Օ. Կորենչուկը. «Միջին Եվրոպայի հայեցակարգը, ըստ էության, պանսլավոնական ծրագրերի դեմ արձագանքն է և ուղղված է եղել ընդդեմ Արևելյան և Հարավային Եվրոպայի ժողովուրդների վրա Ռուսական կայսրության ազդեցության»[73]:

Հարկ է նշել, որ ոչ միայն պետության, այլև ցանկացած միջպետական կազմավորման համար սկզբունքային և կարևորագույն հարցը սեփական տարածքների սահմանները որոշելն է[74]: Mitteleuropa-ն երկրաքաղաքական հայեցակարգ է, որն արտահայտում է Գերմանիայի ձգտումը՝ ճշգրտելու սեփական աշխարհագրական տարածքները մյուս պետությունների հաշվին սեփական կենսատարածքը ընդլայնելու միջոցով:

Ընդհանրապես գերմանական գեոստրատեգիական միտքը հիմնված է տարածքային էքսպանսիայի սկզբունքի վրա:

Ռատցելը, լինելով պետության օրգանական ծագման տեսության կողմնակից, ձևակերպել է «տարածություն» (Raum) կատեգորիայի նոր

---

[71] **Շիրինյան Լ.** Ռուբեն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը (երկրաքաղաքական վերլուծություն): Եր., Զանգակ-97, 2004, էջ 167:

[72] **Поп И.** «Срединная Европа» в планах кайзеровской Германии в период первой мировой войны. // Исследования по славяно-германским отношениям. М., 1971. с. 134-148.

[73] Տե՛ս **Коренчук О.** Идея срединной Европы и ее отражение в работах Ф. Науманна. Legea şi viaţa, Moldova, Nr. 8/3 (272) 2014, с. 78-80.

[74] Տե՛ս **Яковюк И.** Идея серединной Европы в концептуальных разработках европейских геополитиков второй половины XIX-начала XX вв.: историко-теоретический анализ. №3. PolitBook, 2013-4, с. 132-151.

բովանդակություն: Ըստ նրա՝ տարածությունը քանակական-նյութական կատեգորիայից փոխակերպվում է նոր որակի՝ վերածվելով «կենսատարածքի» (Lebensraum), ինչն իր հերթին պայմանավորում է այնպիսի հասկացությունների առաջացումը, ինչպիսիք են՝ «տարածական զգացողությունը» (Raumsinn) և «կենսաէներգիան» (Lebensenergie), որոնք բնորոշում են աշխարհագրական համակարգերը՝ նախորոշելով նրանց քաղաքական ձևակերպումները[75]:

Չելլենը ևս մեծ կարևորություն էր տալիս «տարածք» կատեգորիային. նրա կարծիքով՝ տարածքը կյանքի աղբյուրն է և պետության ուժը:[76]

Ռատցելը նաև փորձել է հիմնավորել այն գաղափարը, համաձայն որի՝ տարածական էքսպանսիան օրինաչափ, բնական գործընթաց է: Իր՝ «Պետության տարածական աճի օրենքների մասին» հոդվածում Ռատցելը ձևակերպել է էքսպանսիայի յոթ օրենք՝ 1. պետության մշակույթի զարգացումը նպաստում է նրա տարածքի ավելացմանը (նա ենթադրում էր, որ մշակույթի տարածումը գործի է գցում մշակութային ժողովուրդների գերաճի գործընթացի ինքնարագացման մեխանիզմը. բնակչության թվաքանակի աճը պայմանավորված է մշակույթի զարգացմամբ ինչպես հին, այնպես էլ նոր մշակութային կենտրոններում[77]), 2. պետության տարածական աճը ուղեկցվում է գաղափարական, տնտեսական, կրոնական (պրոզելիտիզմ՝ դավանափոխության քաղաքականություն) ոլորտների աճով, 3, ընդլայնման գործընթացում պետությունը կուլ է տալիս, կլանում է պակաս նշանակություն ունեցող քաղաքական միավորներին, 4. սահմանները պետության ծայրամասային օրգաններն են և որպես այդպիսիք՝ վկայում են նրա աճի և ուժի կամ, ընդհակառակը, թուլության և անկման (նվազման) մասին, 5. էքսպանսիայի քաղաքականությունը ենթադրում է պետու-

---

[75] Տե՛ս **Яковюк И.** Идея серединной Европы в концептуальных разработках европейских геополитиков второй половины XIX-начала XX вв.: историко-теоретический анализ. №3. PolitBook, 2013-4, с. 132-151.

[76] **Гейден Г.** Критика немецкой геополитики. М., Издательство: Изд-во иностранной лит-ры, 1960, 312 с. http://4i5.ru/uchebnik/teoreticheskoe-soderjanie-nemetskoy-30635.htm (30.08.2015).

[77] **Ратцель Ф.** Народоведение: в 2 т.; пер. с нем. Д.А. Коропчевского. СПб.: Книгоизд. товарищество «Просвещение», 1900. Т. 1. 1900. с. 11, 13-14. (**Яковюк И.** Идея серединной Европы в концептуальных разработках европейских геополитиков второй половины XIX-начала XX вв.: историко-теоретический анализ. №3. PolitBook, 2013-4, с. 132-151).

թյան կողմից իր զարգացման համար առավել կարևոր նշանակություն ունեցող շրջանների (հարուստ տարածքների) գրավումը, 6. էքսպանսիայի համար խթանը առաջանում է պետության սահմաններից դուրս, քանի որ պետությունը «դրդվում» է էքսպանսիայի ավելի ցածր քաղաքակրթական զարգացմամբ հարևան քաղաքական միավորումների կողմից (նրանց հաշվին), 7. թույլ ազգերին կլանելու և ձուլելու ընդհանուր միտումը պետությանը մղում է տարածքների էլ ավելի ընդլայնման[78]:

Ընդհանուր առմամբ՝ սա Ռատցելի կողմից էքսպանսիան որպես օրինաչափ գործընթաց ներկայացնելու փորձ է, որն ուղղված է միայն գերտերությունների զարգացմանը, ինչը տեղի է ունենում մյուս պետությունների հաշվին: Սա փաստացի նշանակում է պետությունների սուվերեն հավասարության սկզբունքի հերքում, քանի որ պետությունները բաժանվում էին քաղաքակիրթ, սուվերեն պետությունների և ոչ քաղաքակիրթ պետությունների, որոնք ունեին գոյության իրավունք այնքան ժամանակ, քանի դեռ գերտերությունները հետաքրքրություն չեն դրսևորել նրանց տարածքների և ռեսուրսների նկատմամբ[79]:

Սա, միգուցե, երկրաքաղաքական ռետրոսպեկտիվ (ինչու՞ չէ՝ նաև ռեակցիոն, ինչու՞ չէ նաև հակաքաղաքակրթական) հայեցակարգ է, բայց քաղաքական ռեալիզմը գործնականում ապացուցում է դրա անփոխարինելիությունը[80]:

Ինչևէ, անդրադառնանք Ֆրիդրիխ Նաումանի Mitteleuropa-ի հայեցակարգին: Ըստ Նաումանի՝ «Միջին Եվրոպան» ունենալու է գերմանական առանցք[81]: Այսինքն՝ գերմանացիները գերակայելու են Mitteleuropa-ում:

---

[78] Տե՛ս **Ratzel F.** Die Gesetze des raumlichen Wachstums der Staaten. Ein Beitrag zur wissenschaftlichen politischen Geographie/ Petermanns Geographische Mitteilungen. 1986. Jg. 42. p. 97-107.

[79] Տե՛ս **Яковюк И.** Идея серединной Европы в концептуальных разработках европейских геополитиков второй половины XIX-начала XX вв.: историко-теоретический анализ. №3. PolitBook, 2013-4, с. 132-151.

[80] **Սուքիասյան Հ.** Պարչ-Նաումանի «Միջին Եվրոպայի» հայեցակարգերը: «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2015 № 2 (17), էջ 21-30:

[81] Տե՛ս **«Срединная Европа»**, в кн.: **Дергачев В.** Геоэкономический словарь-справочник. Одесса, 2004, // http://politike.ru/dictionary/973/word/-sredinaja-evropa (15.07.2014).

Գերմանականության շուրջ ծնվելու է Միջին Եվրոպայի մշակույթը[82]: Գերմանական առանցքին, ըստ Նաումանի, պետք է միավորվեն փոքր պետությունները, որոնք ունակ չեն գոյատևելու առանց մեծ տերությունների հետ դաշինքի[83]: Սակայն մինչև պետությունների միավորման մասին մտածելը պետք է նախ և առաջ ավարտվի գլխավոր միջուկի (առանցքի) բյուրեղացման գործընթացը[84]: Սակայն Նաումանը լավ հասկանում էր, որ Mitteleuropa-ի ստեղծման ճանապարհին գոյություն ունեն և ունենալու են բազմաթիվ խոչընդոտներ: Եվ ինչպես նշում է Նաումանը. «Պետք է հասկանալ, որ փոքր ժողովուրդները ինքնակամ չեն միավորվի միջին եվրոպական միության կազմում»[85]: Իսկ միավորման համար կան բազմաթիվ գործիքներ՝ պատերազմ, ցեղասպանություն:

Mitteleuropa-ի ստեղծման խոչընդոտների շարքում Նաումանը նշում է Պրուսիայի լեհերին, ովքեր մեծ խնդիր են պետության համար, բայց, միևնույն է, նրանք քիչ են, և հարկ չկա նրանց շատ լուրջ ընդունել[86]: Այնուամենայնիվ, դատելով նրա մյուս դատողություններից՝ այդ բոլոր դժվարությունները, խոչընդոտները հաղթահարելի են: Եվ ինչպես կայսերապաշտական ոգով գրում է Նաումանը. «Այսօր այլևս ժամանակավրեպ է հաշվի առնել միջին եվրոպական փոքր ժողովուրդներին՝ որպես մեծ ծրագրի իրագործման համար դրական մեծություններ»[87]: Նույն միտքը ասում է նաև Յոզեֆ Պարտչը. «Կենտրոնական Եվրոպայի մյուս հատվածները, ցանկանում են նրանք դա, թե ոչ, պետք է պատկանեն գերմանական քաղաքակրթական միջավայրին»[88]: Այս գաղափարը սերտորեն կապված է գերմանական Blut und Boden (արյուն և հող) ռասիստական խոսույթի (դիսկուրսի) հետ:

---

[82] Տե՛ս **Науманнъ Ф.** Срединая Европа (Mitteleuropa), с. 55.

[83] Տե՛ս «Срединная Европа», в кн.: **Дергачев В.** Геоэкономический словарь-справочник. Одесса, 2004, // http://politike.ru/dictionary/973/word/-sredinaja-evropa (15.07.2014).

[84] Տե՛ս **Науманнъ Ф.** Срединая Европа (Mitteleuropa), с. 3.

[85] Նույն տեղում, էջ 67:

[86] Տե՛ս **Буховски М., Колбон И.** От Mitteleuropa до Центральной Европы*:* очерк развития идеи. Перекрестки, 3-4/2006, Журнал исследований восточноевропейского пограничья, Вильнюс, с. 112-138.

[87] **Науманнъ Ф.** Срединая Европа (Mitteleuropa), с. 2.

[88] **Partsch J.** Central Europe / թum. C. Black. New York: D. Appleton and Company, 1903, p. 142.

Ընդհանրապես, ռասիստական խոսույթը գերմանական երկրառազմավարական մտքին այնքան էլ օտար չէ:

Նաումանի նկատառումները Հայոց հարցի վերաբերյալ խոսույթում ինստիտուցիոնալ լեզվամտածողության մի մաս էին կազմում: Այս խոսույթը զարգացում է ունեցել 19-րդ դարի վերջին և տարածում գտել Վիլհելմ II-ի 1898 դեպի Արևելք ճանապարհորդության ժամանակ: Ի՞նչն էր արտասովորը այդ խոսույթում՝ Հայոց հարցի վերաբերյալ այդ արտասովոր խոսելաոճում: Դա նրա ռասիստական իմաստն էր: «Հայերը գնալով ավելի ու ավելի էին վերաիմաստավորվում որպես «ցեղ»: Դա ռասայական կարծրատիպ էր դարձել իր բացասական ռասայական բնույթով: Կարծրատիպը բառային տիրույթում սահմանափակվում է մի քանի հիմնաբառերով, ինչպիսիք են՝ թալանչին, պարազիտը …՝ այդպիսով, անխոս, տեքստային շրջանակի միջոցով ապահովելով նրանց նկատմամբ ջարդերի օրինականությունը»[89]:

Գովերգելով իր ընկեր Ռոհրբախի գաղափարները՝ Նաումանը գրում է. « … Ազգային մտածողություն ունեցող ոչ մի չեխ կամ հունգարացի չի դատապարտի մեզ այն բանի համար, որ մենք երգում, երազում և հոգ ենք տանում Գերմանիայի վեհացման մասին»[90]: Նաումանը պնդում էր, որ գերմանական համաշխարհային քաղաքականությունը պետք է ձևակերպված լինի բարոյականությունից ազատ ոլորտում և պաշտպանի միայն ազգային շահերը: Այնուամենայնիվ, դա Նաումանի համար անբարո չէր, այլ նա «գերմանական համաշխարհային քաղաքականությանը տալիս էր eo ispo (ինքնըստինքյան) բարոյական որակներ»: Ըստ Նաումանի՝ գերմանացի ժողովուրդը ամենակարևոր արևմտյան-քրիստոնեական մշակույթի կրողն է, և նա փորձեց Հայոց հարցի վերաբերյալ Գերմանիայի համաշխարհային քաղաքականությունը որպես ավելի բարձր բարոյականություն արդարացնել հետևյալ կերպով. «… չթուլացած գերմանացի ժողովուրդը ամբողջ աշխարհում անհամեմատ ավելի կարևոր է, քան ողջ Հայոց

---

[89] **Schmuhl Von Hans-Walter.** Friedrich Naumann und die Armenische Frage Die deutsche Öffentlichkeit und die Verfolgung der Armenier vor 1915. http://www.hist.net/kieser/aghet/Essays/EssaySchmuhl.html (02.06.2015).

[90] **Науманнъ Ф.** Срединая Европа (Mitteleuropa). Пер. В. Фань-дерь-Флита. К-Во “ОГНИ”, Петроградь, 1918, с. 11.

հարցը: Ամեն ոք, ով այդպես է մտածում և գործում, միևնույն ժամանակ մատուցում է մարդկության բարոյական զարգացմանը լավագույն և մեծագույն ծառայություններ»[91]:

Mitteleuropa-ի ծրագրի իրականացման համար Նաումանը նշում է. «Մենք չենք հերքում նրանց (Ավստրո-Հունգարիայի - Հ. Սուքիասյան) ձևական իրավունքը՝ զբաղեցնելու մեզ համար ոչ բարենպաստ դիրքեր, սակայն մենք հաստատում ենք միայն այն, որ Ավստրո-Հունգարիայի կողմից միության (Mitteleuropa-ի. Հ. Սուքիասյան) գոյությանը սպառնացող գործողությունները հավասարազոր կլինեն նրանց ոչնչացմանը: Գերմանիայի հետ ավստրո-հունգարական դաշինքը ոչ թե բարոյական պարտք է, այլ սեփական ինքնապահպանման անխուսափելի անհրաժեշտություն»[92]:

Ըստ Նաումանի՝ «Միջին Եվրոպան կարելի է համեմատել լճի հետ, որտեղ լողում են ամենատարբեր տեսակի ձկներ: Միաձուլել այդ ամբողջը մեկ պետական օրգանիզմում և բերել մեկ քաղաքական հայտարարի՝ մարդկային ցանկացած տեսակի ուժը գերազանցող խնդիր է, բայց, ինչպես կոնտյան և նիցշեական ոգով գրում է Նաումանը, միևնույն ժամանակ՝ մեծագույն պետական գործիչներին արժանավայել նպատակ, որոնց կամքից է կախված պատմության ոգին»[93]: Հարկ է նկատել, որ Օ. Կոնտի, նաև Նիցշեի գերմարդու գաղափարները ուրույն տեղ են ունեցել պասիոնար հայասպանների գաղափարներում:

Հայ պատմաքաղաքագիտական գրականության մեջ արդեն բավականաչափ ուսումնասիրվել և հիմնավորվել է ֆրանսիական պոզիտիվիզմի ազդեցությունը թուրք վերնախավի վրա: Սուբյեկտիվ-իդեալիզմի՝ թուրք ռազմաքաղաքական վերնախավի վրա ազդեցության վերաբերյալ հետազոտություններ իրականացրել է Հրաչիկ Սիմոնյանը:

Ըստ Սիմոնյանի բավական հիմնավորված մոտեցման՝ Օգյուստ Կոնտի արտահայտած մտքերը և գաղափարները չափազանց մեծ ազդեցություն

---

[91] **Schmuhl Von Hans-Walter.** Friedrich Naumann und die Armenische Frage Die deutsche Öffentlichkeit und die Verfolgung der Armenier vor 1915. http://www.hist.net/kieser/aghet/Essays/EssaySchmuhl.html (02.06.2015).

[92] **Науманнь Ф.** Срединая Европа (Mitteleuropa), с. 24.

[93] **Науманнь Ф.** …, с. 54.

են գործել թուրքերի ազգային բուրժուազիայի գաղափարաբանության վրա: Կոնտի ուսմունքը, նրա պոզիտիվիզմի տեսությունը կոնկրետ գործողությունների փիլիսոփայություն է, որն իրեն ձեռնտու դիրքերից է մեկնաբանում հասարակական երևույթները՝ հաշվի չնստելով ռացիոնալ մտածողության, տրամաբանության հետ[94]: Կոնտի պոզիտիվիզմի ազդեցությունը հատկապես ուժեղ էր երիտթուրքերի՝ Փարիզի «Միություն և առաջադիմություն» կազմակերպության ղեկավարների աշխարհայացքի ձևավորման վրա: Երիտթուրքական գաղափարներին և գործելակերպին քաջածանոթ հայ կաթոլիկ բարձրաստիճան եկեղեցական Հովհաննես Նազլյանը վկայում է, որ «երիտասարդ թուրքերը իրանք զիրենք կհռչակեին իբրև Օգյուստ Կոնտի դպրոցին սկզբունքներով կաղապարուածներ....»[95]:

Mitteleuropa-ի ստեղծման համար լավագույն առիթը Նաումանը համարում էր պատերազմը (Առաջին Աշխարհամարտ) և նշում է. «Եթե մենք պարտվենք, ապա, ամենայն հավանականությամբ, դատապարտված կլինենք մնալու «ազգ-արբանյակ», եթե հաղթենք կիսով չափ, ապա ստիպված կլինենք ևս մեկ անգամ մտնել պայքարի մեջ, իսկ եթե մենք հաղթենք, ապա մենք կթեթևացնենք մեր երեխաների և թոռների գործը, և Միջին Եվրոպան կգրանցվի գալիք դարերի երկրային գրքի մեջ»[96]:

Mitteleuropa-ի հայեցակարգը պասիոնար էթնոազգային (պանգերմանական) տարածաշրջանային միավորում ստեղծելու հայեցակարգ է[97]:

Mitteleuropa-ն ոչ միայն ծրագրավորվող միավորման մեջ մտնող պետությունների աշխարհագրական տեղակայության, այլև որոշակի քաղաքակրթական երևույթ է: Ըստ Ա. Միլլերի՝ սա Եվրոպայի քաղաքակրթական քարտեզի հետ խաղերի և տարբեր սկզբունքներով այդ քարտեզը

---

[94] **Սիմոնյան Հ.** Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը: Երևան, 1986, էջ 268:

[95] Տրապիզոնի թեմին վիճակավոր Յովհաննես արք. Նազլեանի յուշերը..... էջ 10-11: (**Սիմոնյան Հր.** Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 268-269):

[96] **Науманнъ Ф.** Срединая Европа (Mitteleuropa), с. 94.

[97] Sŭ u **Коренчук О.** Идея срединной Европы и ее отражение в работах Ф. Науманна. Legea şi viaţa, Moldova, Nr. 8/3 (272) 2014, с. 78-80.

բաժանելու ձև է[98]: Ընդ որում՝ հենց Նաումանի կարծիքով, պատերազմը երկրամասը բաժանելու նախադրյալ է, և Mitteleuropa-ի ստեղծման համար լավագույն առիթը համարում էր հենց պատերազմը:

Միջին Եվրոպան բնորոշում է պետությունների երկրաքաղաքական ինքնությունը՝ ձևավորելով «միջքաղաքակրթական գոտի»[99]: Միջին Եվրոպան ունի իր երկրաքաղաքական ինքնությունը, քանի որ միջանկյալ դիրք է գրավում ատլանտականության և եվրասիականության միջև[100]:

Հարկ է նշել, որ դա, ըստ էության, նաև նոր ինքնության ձևավորման հայեցակարգ է, քանի որ երկրաքաղաքական պատկանելությունն ավելի շարժական է, քան քաղաքակրթականը: Եվ ինչպես Միջին Եվրոպայի մասին նշում է Նաումանը. «Մենք պատմական կիսաֆաբրիկատ ենք. գերմանացիների շուրջ ձևավորվում է Միջին Եվրոպայի մշակույթը, ձևավորվում է միջինեվրոպացին»: «Մենք պետք է պատերազմից վերադառնանք որպես միջինեվրոպացիներ»[101]:

Այս հայեցակարգը, ըստ էության, նոր աշխարհագրական ինքնություն ձևավորելու հայեցակարգ է: «**Աշխարհագրական անհատականություն**» հասկացությունը ձևակերպել է Ռիտերը, որը վերաբերում է որպես մեկ ամբողջություն ձևավորված կամ կազմող աշխարհագրական շրջանին, տարածությանը: Այս հասկացությունն ունի երկու բաղադրիչ. արտաքին փոխհարաբերությունների տեսանկյունից աշխարհագրական անհատականությունը բնութագրվում է «բնական սահմաններով», ներքին ընկալումի տեսանկյունից բնութագրվում է այնպիսի կապերով, որոնք ներհատուկ են «օրգանական բնական միջավայրին»: Այս հիմքի վրա գեոպոլիտիկները ձևակերպեցին «պետության **աշխարհագրական անհատականացման**

---

[98] Տե՛ս **Миллер А.** Восток Европы или к востоку от Европы/Pro et Contra. Том 3. №2. 1998. 15, с. 7-8.

[99] Տե՛ս **Partsch J.** Mitteleuropa. Die Länder und Völker von den Westalpen und dem Balkan bis an den Kanal und das Kurische Haff. Gotha. 1904.

[100] Տե՛ս **Окара А.** Дурманящие иллюзии «Серединной Европы»: Европейский «континентализм» как манипулятор «Большой Евразией», http://old.russ.ru/politics/20021022-okara-pr.html (11.03.2015).

[101] **Науманнь Ф.** Срединая Европа (Mitteleuropa), с. 6.

օրենքը»[102]: Չնայած հարկ է նշել, որ այս տեսության մեջ կա նաև քարոզչական մաս, որն ամեն կերպ արդարացնում է էքսպանսիոնիստական քաղաքականությունը (միլիտարիզմը), ինչը մեկնաբանվում էր որպես պետության «բնական» ձգտում ձեռք բերելու բնական միջավայր ներքին ներդաշնակ կապերով, որը կհամապատասխաներ իրենց բնական սահմաններին[103], կարծես թե պետության տարածական աճը գոյություն ունի մարդկային կամքից անկախ:

Հենց էթնոազգային գիտակցության գոյության շնորհիվ (մշակութային արժեքների, զգացմունքների, պատկերացումների, գաղափարների, կարծրատիպերի, սիմվոլների և նույնիսկ գաղափարական առասպելների) գերմանացիները որպես էթնիկական հանրույթ մարդկության էթնիկ բազմազանության համակարգի մեջ իրենց պատմականորեն հիմնավորված սոցիալ-մշակութային տեղանքը (տեղակայությունը) պետք է գտնեն: Եվ ինչպես նշում է գերմանացի գրող Է. Արենդտը. «Աստված մեզ տեղավորել է Եվրոպայի կենտրոնում. մենք (գերմանացիներս) աշխարհի մեր հատվածի սիրտն ենք»[104]:

Այս ամենով հանդերձ՝ հարկ է նշել, որ գոյություն է ունեցել Միջին Եվրոպային գրեթե նման մի հայեցակարգ ևս, որը կոչվում է «Եվրոպայի միջև» (Zwischeneuropa) և ընդգրկում էր Ռուսաստանի և Գերմանիայի միջև ընկած տարածքները, այսինքն՝ բալթյան հանրապետությունները, Լեհաստանը, նախկին Չեխոսլովակիան, Հարավսլավիան, Բուլղարիան և Ռումինիան: Zwischeneuropa-ի գաղափարը առաջ է քաշել Գիզելեր Վիրզինգը իր՝ «Եվրոպայի միջև և գերմանական ապագան»[105] գրքում: Նա պնդում էր, որ Կենտրոնական Եվրոպայի պետությունները չունեն ազգային դիմագիծ (առանձնահատկություն), հետևաբար՝ նրանց պետք է ընդ-

---

[102] **Гейден Г.** Критика немецкой геополитики. М., Издательство: Изд-во иностранной лит-ры, 1960, 312 с. http://4i5.ru/uchebnik/teoreticheskoe-soderjanie-nemetskoy-30635.htm (30.08.2015).

[103] Նույն տեղում:

[104] **Баранов Н.** Срединная Европа Фридриха Наумана: становление концепции // Известия Уральского гос. ун-та. Сер. 2, Гуман. науки. 2009. №3 (65). с.17-181. (**Яковюк И.** Идея серединной Европы в концептуальных разработках европейских геополитиков второй половины XIX-начала XX вв.: историко-теоретический анализ. №3. PolitBook, 2013-4, с. 132-151).

[105] **Wirsing G.** Zwischeneuropa und die deutsche Zukunft. Jena: Eugen Diederichs, 1932.

գրկել Մեծ Գերմանիայի կազմի մեջ: Սա դեպի Grossraum (Մեծ տարածք) և Lebensraum (կենսատարածք) ուղիղ ճանապարհն է[106]:

Եվ ինչպես իրենց ծավալուն հոդվածում նշում են Մ. Բուխովսկին և Ի. Կոլբոնը՝ Mitteleuropa-ի ծրագիրը, որը ստեղծվելու էր գերմանական հեռանկարով, ոմանց համար (նրանց, ովքեր երազում էին պանգերմանականության մասին) հույս էր, իսկ ոմանց համար (նրանց, ովքեր կռվում էին բարիկադների մյուս կողմում, և որոնց համար Mitteleuropa-ն ասոցացվում էր «Բեռլին-Բաղդադ առանցքով» ագրեսիվ հայեցակարգերի հետ) սարսափի հայեցակարգ էր[107]:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ «Միջին Եվրոպայի» հայեցակարգը իդեալիստական ոգով, պասիոնար, սակայն երկրաքաղաքական և երկրառազմավարական հաշվարկներով տարածքների զավթման միջոցով կայսրություն ստեղծելու հայեցակարգ է:

Ընդհանրապես, ինչպես Միջին Եվրոպայի կայսերապաշտական հայեցակարգը, այնպես էլ՝ Նաումանի երկրառազմավարական մյուս հայացքները և գաղափարները մեծ ազդեցություն են ունեցել թուրք նախամարդու առանց այն էլ մարդատյաց, հայատյաց մտքի վրա:

Նաումանը վերլուծում էր հայերի և թուրքերի արտաքին քաղաքական փոխհարաբերությունների հետևանքները Օսմանյան կայսրությունում: «Ով ուզում է ոչնչացնել Օսմանյան կայսրությունը, այսպիսով աջակցում է հույներին, սերբերին, բուլղարացիներին, մակեդոնացիներին, սիրիացիներին և հայերին»[108]: Այնուհետև շարունակում է. «Ով միջազգայնական է, նա պետք է աջակցի բրիտանական քաղաքականությանը և օգնի

---

[106] Տե՛ս **Буховски М., Колбон И.** От Mitteleuropa до Центральной Европы*:* очерк развития идеи. Перекрестки, 3-4/2006, Журнал исследований восточноевропейского пограничья, Вильнюс, с. 112-138.

[107] **Буховски М., Колбон И.** …, с. 112-138.

[108]**Schmuhl Von Hans-Walter.** Friedrich Naumann und die Armenische Frage Die deutsche Öffentlichkeit und die Verfolgung der Armenier vor 1915.
http://www.hist.net/kieser/aghet/Essays/EssaySchmuhl.html (02.06.2015).

հայերին, իսկ ով ազգայնական է, նա պետք է արտաքին քաղաքականության մեջ հավատարիմ մնա Բիսմարկի ուղուն»[109]:

Նաումանը նշում էր, որ Թուրքիայում գոյություն ունեցող կարգերը տապալելու մեթոդին, բացի Գերմանիայից, մասնակցել են բոլոր մեծ տերությունները[110]: «Գործընթացն այսպիսին էր. ենթակա ժողովուրդների համար պահանջվում էր մարդու իրավունքներ, կա՛մ մարդասիրություն, կա՛մ քաղաքակրթություն, կա՛մ քաղաքական անկախություն. կարճ ասած մի բան, որ նրանց կհավասարեցներ թուրքերի հետ: Նման «ընդհանուր բարոյական պահանջները օսմանյան բազմազգ պետությունում, որը հիմնված էր քաղաքական անհավասարության խճճված համակարգի վրա, բերում է հեղափոխական հետևանքների»: Դրանք (մարդու իրավունքներ, մարդասիրություն, քաղաքակրթություն, քաղաքական անկախություն՝ Հ. Սուքիասյան) նպաստում էին ազգային փոքրամասնությունների անջատողականությանը և եվրոպական մեծ տերություններին, որոնք «անվնաս բարեգործներ» չէին, հանձնում մի լծակ տկար Օսմանյան կայսրությունը լուծարելու համար: Բարձր Դուռը ստիպված էր դիվանագիտական ճնշման ներքո, ինչպես Բեռլինյան կոնգրեսի ժամանակ, համաձայնվել եվրոպական մեծ տերությունների բարեփոխական ծրագրերին: Բայց «երբ Թուրքիան մեկ անգամ ևս բավարար շնչելու օդ ունենա, նրան իր ինքնապահպանման բնազդը կդրդի այդ պարտադրված խոստումը դրժել»: Եվ Բեռլինի կոնգրեսն էլ հենց ապահովեց թուրքերի համար այդքան բաղձալի «մաքուր օդը»:

Այս կապակցությամբ տեղին է մեջբերել Լ. Շիրինյանի հետևյալ դիտարկումը. «Հայկական հարցի տեղափոխումը Բեռլինի կոնգրես, այն է՝ համանվագի գործառույթի շրջանակներ, քայքայվող Օսմանյան կայսրության թունդ ազգայնամոլ ու ցեղապաշտ ռազմաքաղաքական վերնախավին թույլ տվեց շունչ քաշելով վերջնականորեն ճշգրտել կայսրության պահպանման ռազմավարությունը և նրա ենթատեքստում՝ Հայաստանի

---

[109] **Schmuhl Von Hans-Walter.** Friedrich Naumann und die Armenische Frage Die deutsche Öffentlichkeit und die Verfolgung der Armenier vor 1915.
http://www.hist.net/kieser/aghet/Essays/EssaySchmuhl.html (02.06.2015).

[110] **Նորբերտ Զ.** Գերմանական կայսրությունը և Հայկական հարցը (1878-1914): Գերմ. թարգմ. Մանուշակ Հարությունյանը: Եր., Նաիրի, 2008, էջ 218:

ոչնչացման երկրառազմավարական ուղղությունը: Եվ այդ ուղեգիծը նույն հետևողականությամբ, սակայն տարբեր հաջողությամբ, իրականացրին Համիդը, Էնվեր-Թալեաթ-Ջեմալ բանդան և ռասիստ Քեմալը: Թուրքական չարագործ պետական հանճարը գնաց թուրքական «վաթանի» («հայրենիք») որոնման ճանապարհով[111]»:

Սակայն, շարունակում է Նաումանը. «Մարդասիրության, քաղաքակրթության կամ քաղաքական անկախության մասին գոչումները պարզապես «համակրանքի հայտարարություններ» էին հայերի հանդեպ, որոնք անուղղակի մահվան պատճառ դարձան»[112]: 1877 թ. պարզ դարձավ, որ Գերմանական Ռայխի էքզիստենցիալ շահերը Օսմանյան կայսրությունում *ստատուս-քվոյի պահպանումն է*[113]: Եվ պետք էր ամեն կերպ խուսափել այն ամենից, ինչ կարող է քարը գլորել[114], այսինքն՝ նպաստել Թուրքիայի կործանմանը:

Դրանք իրական քաղաքական դրդապատճառներ էին, որոնցից ելնելով Նաումանը ձևակերպում է իր դիրքորոշումը Հայոց հարցի վերաբերյալ: Ազատությանը, առաջընթացին, արդարադատությանը Հայաստանում նա վերաբերվում էր նույն ցինիզմով, ինչպիսի ցինիզմով նա վերաբերվում էր կառավարություններին Լոնդոնում, Մոսկվայում, Փարիզում, Վիեննայում կամ Բեռլինում: Նա կոչ էր անում հետամուտ լինել Հայոց հարցին, քանի որ Գերմանական կայսրությունը ներկա ժամանակ դիվանագիտորեն, ռազմականորեն և տնտեսապես չափազանց թույլ էր Թուրքիայում ագրեսիվ քաղաքականություն վարելու համար: Նրա համար ոչ թե հայերին սուլթանի ռեպրեսիաներից պաշտպանելն էր կարևոր, այլ դրանով նա ուզում էր Հայոց հարցը անորոշ վիճակում (օդում) պահել, մինչև Գերմանական Ռայխը մի հզոր համաշխարհային տերություն

---

[111] **Շիրինյան Լ.** Նոր աշխարհակարգը և Հայաստանը (Երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ): Եր., 2006, էջ 115-116:

[112]**Schmuhl Von Hans-Walter.** Friedrich Naumann und die Armenische Frage Die deutsche Öffentlichkeit und die Verfolgung der Armenier vor 1915.
http://www.hist.net/kieser/aghet/Essays/EssaySchmuhl.html (02.06.2015).

[113] Նույն տեղում:

[114]Նույն տեղում:

կդառնա, որպեսզի նա էլ մի մեծ կտոր իր համար կարողանա ապահովել, եթե Օսմանյան կայսրությունը լուծարվի[115]:

Եզրակացություն

Հայոց ցեղասպանության պատճառների խճճված թնջուկում պատմագիտական, մշակութային, իրավական հարցերի հետ զուգահեռ կենսական նշանակություն է ստանում ռազմավարական հարցերի ուսումնասիրությունը, քանի որ ցեղասպանությունների պատճառները թաքնված են հենց երկրառազմավարական հարցերի վարագույրի հետևում:

Այս առումով բացառիկ նշանակություն է ստանում գերմանական ռազմավարական միտքը, որտեղ մեզ համար առավել նկատելի են Պաուլ Ռոհրբախի տեսակետները Հայաստանի աշխարհագրության, Թուրքիայի համար հայկական բարձրավանդակի ռազմավարական նշանակության վերաբերյալ, ինչպես նաև «Միջին Եվրոպայի» (Mitteleuropa) հայեցակարգի և թուրք ռազմաքաղաքական վերնախավի վրա նրա հնարավոր ազդեցության ուսումնասիրությունը:

Պաուլ Ռոհրբախը և Հայաստանի աշխարհագրությունը (թուրքական վաթանը և աշխարհագրական դետերմինիզմը) խնդրի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հայերի ցեղասպանության գործում գերմանացի ռազմավարագետները և գերմանական ռազմավարական միտքը մեծ ազդեցություն են ունեցել թուրքական ռազմաքաղաքական վերնախավի զաղափարաբանության վրա:

Պաուլ Ռոհրբախը մեծ ուշադրություն էր դարձնում հայկական բարձրավանդակի ստրատեգիական նշանակությանը և Թուրքիայի համար Հայաստանի կարևորության վերաբերյալ նշում էր, որ աշխարհագրական տեսանկյունից Հայաստանն իրենից ներկայացնում է մի բնա-

[115] **Schmuhl Von Hans-Walter.** Friedrich Naumann und die Armenische Frage Die deutsche Öffentlichkeit und die Verfolgung der Armenier vor 1915. http://www.hist.net/kieser/aghet/Essays/EssaySchmuhl.html (02.06.2015).

կան և գրեթե անառիկ բերդ: Մի կողմից այն սահմանակցում է Ռուսաստանին, մյուս կողմից՝ իշխում է այն բոլոր համաշխարհային ուղիների վրա, որ Փոքր Ասիայով անցնում են իր բնական պատնեշների փեշերով՝ միացնելով Եվրոպայի հետ հարստագույն երկրներ ու ծովեր: Կորցնելով Հայաստանը (խոսքը Արևմտյան Հայաստանի մասին է՝ Հ. Սուքիասյան)՝ Թուրքիան կդադարի գոյություն ունենալուց: Կարելի է գրեթե առանց չափազանցության ասել, որ ժամանակակից Թուրքիայի համար անգամ նեղուցներին տիրելը չպետք է որ այնպիսի ուշադրության արժանանա, ինչպես Հայաստանն իր համար պինդ պահելը՝ իր գոյատևման այդ վերջին և ամուր պատվարը: Հայաստանն իր աշխարհագրական դիրքով և մակերևույթի կառուցվածքով հանդես է գալիս որպես բանալի այն դիրքերի համար, որոնք իշխում են անատոլական թերակղզու և Միջագետքի հովիտների վրա: Հայաստանը կորցնելու դեպքում Թուրքիան կդադարի որպես ինքնուրույն պետություն գոյություն ունենալուց:

Հենց Հայաստանի աշխարհագրությունը աչքի առաջ առնելով՝ թուրք ռազմաքաղաքական վերնախավը նետվեց Թուրքիայի ստեղծման գործին: Այսպիսով, սեփական վաթանի սահմանների որոնումը թուրք նախամարդը տեսավ իր արհեստական սահմանները բնական սահմանների վերածելու մեջ: Այսինքն՝ Թուրքիան իր էքզիստենցիալ շահերի իրականացումը տեսավ Հայաստանի բնաջնջման հակամարդկային, հակաքաղաքակրթական, սակայն թուրք ենիչերի ոգուն շատ հարազատ գործում:

Սակայն հարկ է նկատել, որ, այնուամենայնիվ, Հայաստանում տեղավորված հակաքաղաքակրթությունների համար Հայաստանը, միևնույն է, չդարձավ հայրենիք: Եվ դրա ամենաբնորոշ պատասխանը տալիս է հայ մեծանուն պատմաբան Նիկողայոս Ադոնցը. «Հայաստանի իրավատերը թուրքն է, փաստացի տերը քուրդը, իսկ հայրենիք ունեցողը՝ հայը»:

Միջին Եվրոպայի հայեցակարգը և ցեղասպանության թուրքական նախատեսումները խնդրի ձևակերպումը թույլ տվեց պարզել, որ գերմանական ռազմավարական մտքի ծնունդ «Միջին Եվրոպայի» հայեցակարգը ևս իր ուրույն ազդեցությունն է ունեցել կործանվող Օսմանյան կայսրության համար կայսրության արհեստական տարածքից մի նոր

պետություն «երկնելու» գործում: Այս հայեցակարգն իր ամբողջ «հմայքով» նկատվում է թուրքական պետության հիմնաքարում:

Միջին Եվրոպայի հայեցակարգը պասիոնար էթնոազգային տարածաշրջանային միավորում ստեղծելու հայեցակարգ է: Հարկ է նշել, որ սա, ըստ էության, նոր ինքնության ձևավորման հայեցակարգ է, քանի որ երկրաքաղաքական պատկանելությունն ավելի շարժական է, քան քաղաքակրթականը:

Միջին Եվրոպայի հայեցակարգը սեփական պետության սահմանները ճշգրտելու հայեցակարգ է. այն ինչին ձգտեց Թուրքիան:

Երկրաքաղաքական պատկերային կառուցավորումներում կարևոր տեղ են զբաղեցնում, այսպես կոչված, ազգային մինիմումի պատկերային քարտեզները: Այդպիսի պատկերային քարտեզներից է նաև Միջին Եվրոպայի գերմանական հայեցակարգը, որի տեսական հիմքերը նկատվում են Թուրքիայի աշխարհագրության հիմքերում:

Նաումանը գտնում էր, որ Միջին Եվրոպայի բոլոր պետություններն ունեն միևնույն «աշխարհագրական ճակատագիրը». դրանք չունեն «բնական սահմաններ»: «Միջին Եվրոպան», ի տարբերություն պանգերամանական ազգայնական այլ գաղափարների, մաքուր երկրաքաղաքական (գեոքաղաքական) հասկացություն է, որտեղ կենտրոնական տեղը զբաղեցնում է ոչ թե էթնիկ միասնությունը, այլ աշխարհագրական ճակատագրի ընդհանրությունը: Սա մայրցամաքում աշխարհագրական այն տարածությունն է, որը գերազանցելու է Գերմանիայի սահմանները, որտեղ գերմանացիները պետք է ունենան ռազմավարական գերիշխանություն:

Mitteleuropa-ն երկրաքաղաքական հայեցակարգ է, որն արտահայտում է Գերմանիայի ձգտումը՝ ճշգրտելու սեփական աշխարհագրական տարածքները մյուս պետությունների հաշվին սեփական կենսատարածքը ընդլայնելու միջոցով:

Ըստ Նաումանի՝ «Միջին Եվրոպան» ունենալու է գերմանական առանցք: Այսինքն՝ գերմանացիները գերակայելու են Mitteleuropa-ում: Գերմանականության շուրջ ծնվելու է Միջին Եվրոպայի մշակույթը: Գերմանական առանցքին, ըստ Նաումանի, պետք է միավորվեն փոքր պետությունները, որոնք ունակ չեն գոյատևելու առանց մեծ տերությունների հետ

դաշինքի: Սակայն մինչև պետությունների միավորման մասին մտածելը պետք է նախ և առաջ ավարտվի գլխավոր միջուկի (առանցքի) բյուրեղացման գործընթացը: Սակայն Նաումանը լավ հասկանում էր, որ Mitteleuropa-ի ստեղծման ճանապարհին գոյություն ունեն և ունենալու են բազմաթիվ խոչընդոտներ: Եվ ինչպես նշում է Նաումանը. «Պետք է հասկանալ, որ փոքր ժողովուրդները ինքնակամ չեն միավորվի միջին եվրոպական միության կազմում»: Դե իսկ միավորման համար կան բազմաթիվ գործիքներ՝ պատերազմ, ցեղասպանություն:

Եվ ինչպես կայսերապաշտական ոգով գրում է Ֆրիդրիխ Նաումանը. «Այսօր այլևս ժամանակավրեպ է հաշվի առնել միջին եվրոպական փոքր ժողովուրդներին՝ որպես մեծ ծրագրի իրագործման համար դրական մեծություններ»: Նույն միտքը ասում է նաև Յոզեֆ Պարտչը. «Կենտրոնական Եվրոպայի մյուս հատվածները, ցանկանում են նրանք դա, թե ոչ, պետք է պատկանեն գերմանական քաղաքակրթական միջավայրին»: Այս գաղափարը սերտորեն կապված է գերմանական Blut und Boden (արյուն և հող) ռասիստական խոսույթի (դիսկուրսի) հետ: Պատկերացնու՞մ եք՝ ի՛նչ հիացմունքով նկատած կլինեն թուրքերը այս գաղափարը:

Ըստ Նաումանի՝ «Միջին Եվրոպան կարելի է համեմատել լճի հետ, որտեղ լողում են ամենատարբեր տեսակի ձկներ: Միաձուլել այդ ամբողջը մեկ պետական օրգանիզմում և բերել մեկ քաղաքական հայտարարի՝ մարդկային ցանկացած տեսակի ուժը գերազանցող խնդիր է, բայց, ինչպես կոնտյան և նիցշեական ոգով գրում է Նաումանը, միևնույն ժամանակ՝ մեծագույն պետական գործիչներին արժանավայել նպատակ, որոնց կամքից է կախված պատմության ոգին»:

Mitteleuropa-ի ստեղծման համար լավագույն առիթը Նաումանը համարում էր պատերազմը (Առաջին Աշխարհամարտ) և նշում է. «Եթե մենք պարտվենք, ապա, ամենայն հավանականությամբ, դատապարտված կլինենք մնալու «ազգ-արբանյակ», եթե հաղթենք, կիսով չափ, ապա ստիպված կլինենք ևս մեկ անգամ մտնել պայքարի մեջ, իսկ եթե մենք հաղթենք, ապա մենք կթեթևացնենք մեր երեխաների և թոռների գործը, և Միջին Եվրոպան կգրանցվի գալիք դարերի երկրային գրքի մեջ»:

Միջին Եվրոպայի պասիոնար կոնցեպտով, դրա տեսական հիմքերի յուրացումով թուրք նախամարդը, Հայաստանի աշխարհագրությունը իր արյունոտ հայացքի տակ առնելով, նետվեց Թուրքիայի ստեղծման ցեղասպան գործին:

GERMAN STRATEGIC FACTOR IN TURKISH PROVISIONS FOR THE ARMENIAN GENOCIDE

(Resume)

Hayk Sukiasyan

The vacuum caused by the changed balance over the Turkey, filled the balance of superpowers' interests, each of which was led by their own interests. However, it should be noted that Turkey had its own policy of salvation, theoretical foundations of which were maybe Germanic.

First of all, it must be noted, that the plunder, robbery and the occupation of the others homeland is a part of the Turkish identity. That is, the mania to occupy areas was and is in their archetype level.

However, after the Balkans war and the fake activities of global superpowers in Dardanelles, the Turk primitive man oriented in the search of its own Vatan borders, was specifying the concept of a designed strategy, because the plunder was no more able to appraise the geopolitical situation.

Forced out from the Balkans and getting logical forgiveness of impunity for their own further criminal operations in Dardanelles, that is, entering into free game, giving its race to satisfy anti-Armenia (Armenian) instinct, the Turkish primitive man with its plunder-bloody eyes turned to the Western Armenia.

Thus, the bloodthirsty Turk anti-man is a genius as well in the robbing and the mastering of the others homelands and properties, as in the mastering appropriation of the others ideas; it seems to us, that the appropriation of German strategic thought, is most clearly outlined in the ideas of Paul Rohrbach and Friedrich Naumann.

The German philosopher, theologist, orientalist, publicist and geopolitic Paul Rohrbach pays a great attention to the strategic significance of the Armenian

plateau, and marks the importance of Armenia for Turkey: "Geographically, Armenia is a natural and almost impregnable fortress. On the one hand it is bordered by Russia, on the other hand, it rules on all international routes as its slopes of natural barriers crossed by Asia Minor which connects the rich countries and seas with Europe.

Losing Armenia, Turkey will cease to exist. There is virtually no exaggeration to say that even straits occupied by modern Turkey, should not deserve such an attention even a thought to keep Armenia tight as its last strongholds survival. Regarding geographical position and surface structure Armenia acts as a key for those borders (locations), which have the power over the Anatolian peninsula and Mesopotamia valleys. In the case of losing Armenia, Turkey will stop its existence as an independent state.

Considering the geographical position of Armenia Turkey's military political elite rushed to create Turkey. Thus, the Turkish primitive man saw its own vatan (country, state) borders in the transformation of its artificial borders to a natural border. In other words, Turkey saw the implementation of its existential interests in the destruction of Armenia with anti-human, anti-civilization actions, the spirit which is typical for Turkish Janissaries.

However, it should be noted, that Armenia never became motherland for the anti-civilization housed in it. Nicholas Adontz, the Armenian famous historian gave its most characteristic answer to it: "rightholders of Armenia are Turks, actual holders - the Kurds, but motherland holders are Armenians.

The next important strategic concept, which could have an impact on the Turkish political elite ideology, is the concept of "The Middle Europe", which had its influence on the collapsing Ottoman Empire, for a new state creation on the ashes of an artificial territory.

Middle European concept should be considered one of the ways to provide living space protection and superpower status for Germany.

In fact, it should be noted, that this is a new formation of identity concept, because the geopolitical belonging is more mobile, than the civilization is.

Friedrich Naumann, the Lutheran clergyman, orator and publicist found that all states of Middle Europe have the same "geographic destiny": that is, they have

no “natural borders”. "Middle Europe", in the contrast to other ideas of pan-Germanic nationalists, is a pure geopolitical concept, which occupies a central place for a common geographic destiny rather than ethnic unity.

According to Naumann the "Middle Europe" concept will be realized by on German axis. In other words, the Germans will dominate in the Mitteleuropa (Middle Europe). The Middle European culture will come from Germany. According to Naumann, the small states should unite over the Germanic axis, which are unable to survive without an alliance with the great powers. Before the unification of countries, firstly, it must be completed the process of crystallization of the main nucleus (core). But Naumann well understood that there are and will be many obstacles in the way of creation of Mitteleuropa. And as noted by Naumann: "It should be recognized that small nations are not able to join voluntarily to the Middle European Union". As for the union, there are many tools, such a war and genocide.

Here's how Friedrich Naumann with the imperialistic spirit writes: “It is no more anachronistically to take into the consideration the minor nations of the Middle Europe as a positive value”. The same idea also says Joseph Partsch. "The other parts of Central Europe should belong to the c civilizational environment of German, whether they like it or not. This idea is closely related to the German Blut und Boden (blood and soil) racist discourse as well.

According to Naumann "Middle Europe is comparable with a lake, where the various species of fishes are swimming around. To merge it all and to summarize in one political body is very hard problem. But like to the spirit of Conte and Nitsche, Naumann also says "… at the same time the spirit of history depends on the greatest statesmen".

Naumann considered that the best opportunity in the creation of the Mitteleuropa depends on the war and he noted: “If we lose, it is most likely doomed to remain “nation-satellite”, if we win half, then we have to once again enter into the struggle, if we win, we will lighten our children and grandchildren’s life. And the Middle Europe will enter into world book of the future centuries”.

Mitteleuropa is the concept to create a regional passionate ethno-national (pan-German) union.

Mitteleuropa is a geopolitical and geo-strategic concept based on idealistic, passionate spirit to create an empire by invading territories, which could have its influence on the ideology of Turkish political elite.

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ, ԷՄԻԼ ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ, ՀԱՅԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ

Հրատ. պատվեր N 661
Ստորագրված է տպագրության 15.01.2016 թ.:
Չափսը՝ 60x84 1/16, 8.5 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 250 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24